

Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ 23

ԿԱՐՄԻՐ ՊԵՏՐՈՑՐԱԴԻ  
ՀԱՄԱՐ  
ՄՂԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ



ՊՐԻՆՏԻՆԻՆ

9(47) | 1902

4-29 | *Quercus tinifolia*

*Quercus tinifolia*

*Quercus tinifolia*

1938/2 3-80

22548

Գ. ԿԱՐԱՅԵՎ

9/17/22

USDA 1967

ԿԱՐՄԻՐ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ  
ՀԱՄԱՐ  
ՄՂԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

A 32548


1902



Գ. ԿԱՐԱՅԵՎ, ԿԱՐՄԻՐ ԳԵՏՐՈՅԻՄՆԻ ԼԱՄԱՐ  
ՄՂԱՅ ՄԱՐՏԵՐՈՒՄ. Այս գիրքը նվերված է ՆՍՂՄ  
մեջ Բաղաքացիական ձեռնարկի ամենա-  
հիմնադրի Եղիշիկի մեկին, այն է՝ 1919 թ. Կարմիր  
Պիտերի հերոսական պաշտպանությանը, զորն ան-  
խզելիորեն կապված է ընկեր Ստալինի անվան հեա-  
Պիրքը մասսայական ընթերցանության համար:

(323-2/37)





# ԹՇՆԱՄԻՆ ԿԱՐՄԻՐ ՊԻՏԵՐԻ ԴՌՆԵՐԻ ՄՈՏ

«Հասել ե սոցիալիստական հեղափոխութեան ամենակրիտիկական մոմենտներից մեկը, ամենայն հավանականութեամբ, նույնիսկ ամենակրիտիկական մոմենտը: Ետհաղործողները, կալվածատերերի ու կապիտալիստների ռուսական և օտարերկրյա պաշտպանները (առաջին հերթին անգլիական և ֆրանսիական պաշտպանները) հուսահատական փորձ են անում վերականգնելու ժողովրդական աշխատանքի թալանիչները՝ կալվածատերերի ու շահադրժողները ինքանությունը Ռուսաստանում, զորպեսզի ամբողջեն նրանց կործանվող իշխանութունն ամբողջ աշխարհում» (Համ Կ (բ) Կենտկոմի անուանից Վ. Բ. Լենինի գրած զինուժից, ուղղված կուսակցական բոլոր կազմակերպութուններին, 1919 թ. հուլիսին):

## ՅԱՄԲՈՒՐԳԻ ՑԵՎ. ՊՍԿՈՎԻ ԱՆԿՈՒՄԸ

Անմոռանալի ապանիններորդ տարին երբ ֆաղաքացիական պատերազմի կրակով բռնված Խորհուրդները Յերկրի վրա կախվել եր մահացու սպառնալիքը: Ինտերվենտների ու սպիտակ գվարդիականների հրոսակախմբերը կրակե ողակով շրջապատել ելին Խորհրդային հանրապետությունը, վորպեսզի վոչնչացնեն Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության մեծ նվաճումները:

Արտասահմանյան բուրժուական ամբողջ մամուլն ու սպիտակ գվարդիական թերթուկները փող ելին փչում այն մասին, թե հաշրված են խորհրդային իշխանութեան որերը:


«Սեղեղել բոլշևիզմը մեկ հարվածով, զրկելով նրան իր կենսական կենտրոններից—Մոսկվայից և Պետրոգրադից»,—պահանջում եր Դենիկինից ժամանակավոր կառավարութեան նախկին զինվորական մինիստր սպիտակ գվարդիական Դուչկովը: «Գլխավորն ե՛ կանգ շահնել Վոլգայում, այլ խփել ավելի հեռու, բոլշևիզմի սրտին, Մոսկվային... Լեհերն իրենց գործը կկատարեն. իսկ ինչ վերաբերում ե Յուզենիչին, նա պատրաստ ե և չի դանդաղի հարվածելու Պետրոգրադին» — իր հերթին գրում եր Դենիկինը Կոլչակին:

Անտանուր կազմակերպեց իր առաջին արշավը բանվորների և գյուղացիների իշխանութեան դեմ:

Կոլչակը գլխավոր հարվածը հասցնում եր Արևելքից, Սիբիրից. Դենիկինը հարձակվում եր հարավից, նրա բանակների աջ թևը պետք ե միանար Կոլչակի բանակների հետ Մարատովի ռալոնում: Հյուսիսից, Վոլոգդայի և Վյատկայի ուղղութեամբ, շարժվում եր զենեքավ



ձգտում էր նստոնիալի ակտիվ մասնակցութիւնը հարձակվելու Սորհրդային Ռուսաստանի վրա: Բուրժուական Սստոնիան դարձավ հակահեղափոխութեան բազա: Մայիս ամսի կեսերին գեներալ Ռոձյանկոն սպիտակ հստոնացիներէ, սպիտակ ֆիններէ և անգլիական նավատորմի ոգնութեամբ անսպասելի կերպով հարձակում սկսեց Պետրոգրադի վրա, իսկ Բուլակ-Բալախովիչի ջոկատը ուղղութեամբ վերցրեց դեպի Պսկով:



Սխեմա 2. Պետրոգրադի մատույցները ընկեր Ստալինի գնահատութեամբ:

Ընկեր Ստալինը Պետրոգրադի ճակատը յեկած ժամանակ, վերլուծելով պարագան և սպիտակ զվարդիականների կողմից Պետրոգրա-

չը գազմթելու հնարավորութիւնները, ոպերաաիվ հմտութեամբ տվեց Պետրոգրադի հնարավոր մատուցներէ հիանալի բնութագիրը (սխեմա 2)։ «Պետրոգրադի մատուցները,— զրում եր ընկեր Սաալինը.— դրանք այն կետերն են, վորտեղից հարձակվելով հակառակորդը, հստուգութեան դեպքում, կարող և շրջապատել Պետրոգրադը, անշատել նրան Ռուսաստանից և, վերջապես, տիրել այն։ Այդ կետերն են՝ Պետրոգրադի ճակատամասը, վորն ուղղութիւն ունի դեպի Չվանկա, նպատակը՝ շրջապատել Պետրոգրադը արևելքից։ Ունեցի ճակատամասը, Լոդեյնոյի Պոլե ուղղութեամբ, նպատակը՝ անցնել Պետրոգրադի դեպի մեր զորքերի թիկունքը։ Կարելի ալ ճակատամասը, վորն ուղղութիւն ունի ուղիւ դեպի Պետրոգրադ, նպատակը՝ Պետրոգրադը գրավել հյուսիսից։ Նարվայի ճակատամասը, Գատչինա և Կրասնոյի Սելո ուղղութեամբ։ նպատակը՝ Պետրոգրադը գրավել հարավ-արևմուտքից կամ, ծայրահեղ դեպքում, գրտվել Գատչինա—Տոսնո գիծը և շրջապատել Պետրոգրադը հարավից։ Պսկովի ճակատամասը, Դնո-Բոլոզոյի ուղղութեամբ։ նպատակը՝ Պետրոգրադը կարել Մոսկվայից։ վերջապես Ֆիննական ծոցը և Լադոգայի լիճը, վորոնք հակառակորդին հնարավորութիւն են տալիս զորքեր ափ հանել Պետրոգրադի արևմուտքից և արևելքից»<sup>1</sup>։

1919 թվականի գարնանը հակառակորդը Պետրոգրադի վրա հարձակվելու համար ընտրեց Նարվի ճակատամասը։

Թշնամին հարձակում սկսեց սպիտակ գիշերներից միկում, վորպես գիշերներ լինում են Մերձբալթիկում մայիսի կեսերին։

Մեր 53-րդ հրաձգային գնդի պահապան ուղեկալները ճակատում բացառապատված եյին մոտ 20 կիլոմետրի վրա, Պլուսա գետի մյուս կողմում, Մարինսկայա տգարակից մինչև Գոստիցի գյուղը։ Խիտ անտառն ու քիչ մատչելի ճահիճները նրանց բաժանում եյին Նարովա գետից, վորի գծի վրա եյին դասավորվել սպիտակ եստոնական զորամասերը։ Մեր հետախուզութիւնն այնտեղ չեր անցնում։ Յերկար ժամանակ այս ճակատամասում հակառակորդի հետ ընդհարումներ չեյին յեղել, և զորամասերը սովորել եյին հանգիստ կյանքի։

Սպիտակ գվարդիականների ջոկատներն ոգտվելով մեր ուղեկալների թմրած աչալըրութիւնից և նրանց բավականաչափ իրարից հեռու գտնվելուց, կարմիր բանակալիներէ հագուստ հագած, մայիսի 13-ի գիշերը ներխուժեցին 19-րդ հրաձգային գիվիզիայի 3-րդ բրիգադի թիկունքը և անսպասելի կերպով հարձակվեցին մեր զորամասերի վրա։ Անսպասելիութիւնն այնքան մեծ եր, վոր փոքրաթիվ թշնամուն հաջողից քանդել յերկաթուղադիժը, գրավել Գավրիլով-

<sup>1</sup> «Պետրոգրադայա պրոպագ» № 151, 1919 թ.


սկայայի մոտ Պլուսա գետի կամուրջը և գրավել այնտեղ դասավոր-  
ված մարտկոցը (սխեմա 3)։ Սպիտակները միաժամանակ մի քանի  
տեղ կարեցին լարերը և խափանեցին կապը մեր զորամասերի միջև։  
Սպիտակ դավադրիական ջոկատներից մեկը անտառային արահետներով  
հասավ Պոպկովա Գորա գյուղին և գրավեց այնտեղ դասավորված  
19-րդ դիվիզիայի 3-րդ բրիգադի շտաբը։ Շտաբի հետ մեկտեղ դերի  
ընկավ նաև բրիգադի հրամանատար Նիկոլայեվը։

Այդ նույն գիշերը հարձակման անցան նաև դեներալներ Ռո-  
ձյանկուլի և Յուդենիչի գլխավոր ուժերը, վորոնք կենտրոնացել էին  
Նարովա գետի աջ ափին։ Գնդապետ Գեորգի ջոկատը գրոհեց 167-րդ  
հրաձգային գնդի 2-րդ գումարտակի վրա Նիդի գյուղի մաս և, տիրե-  
լով Պլուսայի գետանցին, հեշտությամբ ջախջախեց նրա ուղեկալնե-  
րին, վորոնք ցրված էին մեկմեկուց բավական հեռավորության վրա։  
Խորտակվեց Նարովա—Գոով գծի վրա յերթևեկող յերկու զբահագնացք։  
Միաժամանակ գնդապետներ Պալենի և Վեարենկոյի ջոկատները հար-  
ձակվեցին 53-րդ հրաձգային գնդի վրա և ջախջախեցին այն։ 53-րդ  
հրաձգային գնդի հրամանատարն էր գնդին միացրեց 167-րդ հրա-  
ձգային գնդի 2-րդ գումարտակի ֆեսցորդները և մի քանի տասնյակ  
մարտիկների հետ նահանջեց դեպի Արինովկա գյուղը։ Այդ նույն  
ժամանակում Բուլակ-Ռալախովիչի ջոկատը ստիպեց մեր զորամասե-  
րին նահանջել Գոովի ուղղությամբ։

Այսպիսով՝ ճեղքվեց ճակատը Նարովայի տեղամասում։

Աչալըճուխունը թուլացած և բոլոր միայն ուղեկալներում, այլև  
հրամանատարության մեջ, մինչև իսկ 7-րդ բանակի շտաբում։ 6-րդ  
դիվիզիայի պետը սպիտակների կողմից կատարած այդ ճեղքվածքը  
գնահատեց վորպես պատահական հարձակում։ 7-րդ բանակի շտաբը  
չհետաքրքրվեց ճակատի վիճակով և Արևմտյան ճակատի հրամանա-  
տարության հարցումին պատասխանեց դիվիզիայի պետի խոսքերով, թե  
ուժեղացված և պահպանութունը, և հակառակորդի հարձակման  
դեպքում յինթադրվում և նրան հարված հասցնել թևից՝ ռեզերվի մի  
գումարտակով, Վարոյա գյուղի կողմից։

Մինչդեռ «ռեզերվի գումարտակի» հարվածի մասին խոսելն ան-  
գամ ծիծաղելի էր։ սպիտակները շեշտակիորեն առաջ շարժվեցին և  
յերկու որից հետո գրավեցին Պլուսա և Լուդա գետերի միջև ընկած  
ամբողջ շերտը։ Միայն մայիսի 15-ի որովա վերջին սթափվեց հրամա-  
նատարութունը և սկսեց ռեզերվները մոտեցնել Վեյմառն կայա-  
րանին, նրանց միացնելով Վեյմառնական խմբավորման զորքերին։  
Վաս էլին կազմակերպված այդ խմբի գործողութունները։ զորամա-  
սերը գալիս էին ուշացումով։ Առաջինը յեկավ 171-րդ հրաձգային  
գունդը, վորը գրավեց Սրեդնեյա Սելո, Գորկի, Կբյակովո և Բեսեդի



Մյուսմա 3. Մեր հասկացող ճեղգվածքը սպիտակագծերի կողմից 1919 թ. մայիսի 13-ի դեպքը


գյուղերը: Համարյա միաժամանակ 54-րդ հրաձգային գնդի զորամասերը գրավեցին Լուզայի աջ ափին ընկած Կլինա գյուղը: Լիչնայի մոտ գտնված դեղանցին հասավ Ռեզեժինի Վոլոստի կոմունիստական

ջուկատը, Վեյմառնին մոտեցան Գասչինայից ղիվիզիական դպրոցը  
և զբահամեքենաների մի դասակ: Մոլոսկովիցի յեկավ Պետրոզբադյան  
2-րդ հրաձգային գունդը: Վորն շտապով տեղափոխվելիք Կարելյան ճա-  
կատամասից: Սակայն կարգավորված չեք այդ զորամասերի ղեկա-  
վարութիւնը: զորամասերը համախմբված չեյին, շտաբները ցուցաբե-  
րեցին անհանդուրժելի դանդաղկոտութիւն և ժամանակին չկազմա-  
կերպեցին զօրքերի համագործակցութիւնը:

Այն ինչ՝ ղեկքերը չեյին սպասում: Գնդապետ Պալենի ջո-  
կատը, մայիսի 16-ի ղիշերը, Մուրավեյնոյի մոտ անցնելով Լուգա  
դէտը, հարձակվեց Սրեզնեյե Սելո—Գորկիի վրա և ջախջախեց 171-րդ  
հրաձգային գունդը: Ոգնութիւն ուղարկված ղիվիզիական դպրոցը հե-  
րոսական դիմադրութիւն ցույց տվեց սպիտակ գվարդիականներին  
Մանուկովի մոտ, բայց կորցնելով իր կազմի: յերեք քառորդ մասը՝  
յետ քաշվեց դեպի Վեյմառն՝ հակառակորդի գերազանց ուժերի ճնշը-  
ման տակ: Ուշացավ Մոլոսկովիցից 2-րդ Պետրոզբադյան գնդի ող-  
նութիւնը: Վեյմառնի խմբավորման պետը ժամի 18 անց 30 ընդե  
հարկազրկված յեղավ նահանջել դեպի Ուսլյա գյուղը իր մոտ մնացած  
մեկ զբահամեքենայով, չորս սնդոցրով և հարյուրից պակաս մարտիկ-  
ներով: Վեյմառն կայարանն անմիջապէս՝ զբավեց գնդապետ Պալենի  
ջոկատը: Նրա հետեից անմիջադէպ յեկավ նաև գնդապետ Վետրինկոյի  
ջոկատը: Սպիտակ գվարդիականներն սկսեցին արագորեն բացազատ-  
վել արևմտյան և հյուսիսային ուղղութիւններով: Այդ նույն օրը  
նրանք զբավեցին Տիկոպիս կիսակայարանը, իսկ յերեկոյան դեմ՝ Մալ-  
լէ, Կիլլէ և Կերստովո գյուղերը: Դրանով ավարտվեց նարվայի մար-  
տական ճակատամասի զօրքերի ձախ թևի և թիկունքի շրջանցը, փա-  
կելով Բալթյան յերկաթուղագծի և Պետրոզբադյան խճուղու յեր-  
կայնութիւնը ընկած ճանապարհները (սխեմա 4):

Նարվայի ծոցում մայիսի 14-ին, նույնպէս անսպասելի կերպով,  
հայտնվեցին թշնամու նավերը, վորոնք կրակ բաց արին առափնյա  
գյուղերի վրա: Մի քանի տականկերների կրակով ավերվեց Սան-Գալ-  
լէ պոստը, իսկ քիչ հետո յեկած թշնամու հաճանավը իր աշտարակային  
հրանոթներով կրակ բաց արեց Ռոպշայի և Կուզմակիւնի վրա: Մայի-  
սի 15-ին, մոտ ժամը 8-ին թշնամու նավերը մտան Լուգայի ծովա-  
խորշը և Լուգա գետը և գորքեր ավ հանեցին Ոստրով գյուղի մոտ:  
Այդ դեռանալը յերեկոյան դեմ զբավեց Կրակոյեն և սկսեց տարած-  
վել Բոլ. Կուզմակիւնոյի և Պոլուչյեյի ուղղութիւնը: Հետևյալ օրը հա-  
մառ մարտեր սկսվեցին Իլկինո—Պոլոտրովկա ճակատամասը զբաված  
166-րդ հրաձգային գնդի և Գունզերբուրգից հարձակման անցած սպի-  
տակ եստոնական զորամասերի միջև: Որվա յերկրորդ կեսին հա-

առակորդը դրավեց Իլիխնոն: Այդ ժամանակ Ոսարովի մոտ շարունակվում եր նոր դեսանտի փո հանելը: Նրանց դեմ ամբողջ ուրը շարունակվեց մտրաը Կուզեմիինո գյուղի համար: Միաժամանակ սպիտակների հետախուզական ջոկատները հայտնվեցին Պոլուչյե և Գլուբոկայա առյուծում, այդպիսով ցուցարբերելով ակնհայտի կերպով ձգտում միանալ Պալենի ջոկատի հետ Կերատովայի մոտ:



Սխեմա 4. Գործողութիւնները ճակատում 1010 թ. մայիսի 17-23:

Այդ դժվարին պայմաններում, մայիսի 17-ի գիշերն սկսվեց Նարվայի մարտական ճակատամասի զորքերի նահանջը դեպի Կոսկոլովա—Պարտովո—Բաբինո—Կոլլինա—Ուպոլյե—Կարպովո—Կրյակովո գիծը, Կարճատև սպիտակ գիշերվա թույլ լույսի տակ անդի ունեցով զորամասերի անցումը Լուգա գետով Յամբուրգի մոտ: Զուրը բարձր եր կանգնած, Դժվար եր լրատանավերով դետանց կատարել, Գետանցն ավարտվեց մայիսի 17-ին ժամի 5-ին: Առավոտյան սպիտակները դրավեցին Յամբուրգը, Նրանց առաջադր զորամասերը շարունակեցին արագաթափ շարժվել դեպի արևելք, դեպի Պիտեր:

\* \*

Պակովի ուղղության վրա պաշտպանութիւնն ավելի լավ չեր կազմակերպված, քան Յամբուրգի տակ, Գորովի ճակատամասի զորամասերը, վորոնք շատ ելին յերկարաձգված Զուդի և Պակովի լճերի յերկայնքով (սխեմա 5), ի վիճակի չեկին լուրջ դիմադրութիւն ցույց

տալու սպիտակներին: Լենց առաջին որը, մայիսի 13-ին, Բալախովիչի ջոկատը, սպիտակ հստոնական լճային Ֆլուտիլիայի հրամանները կրակային ղազակներով, հարձակում ծավալեց Սկամյեյի ռայոնից: Կարմիրները 103-րդ հրաձգային գնդի վաշտերը № 38 զբաղմունքի հետ միասին յետ քաշվեցին Չերմա գետի մյուս կողմը՝ Յերմակովու և Ուսայե գծի վրա: Մայիսի 14-ի ամբողջ որը մարտ եր տեղի ունենում Գոլովի համար: Հետեվյալ որն արդեն պարզվեց, վոր Բալախովիչը կարող և շրջանցնել մեր աջ թևը և զորքեր ափ հանել լճի կողմից: Այս հանդամանքը հարկազրեց մեր զորքերին մայիսի 15-ին մաքրել Գոլովը և քաշվել Կունեստո գետի մյուս կողմը, իսկ հետո, մայիսի 18-ին, անցնել Չակրոպիվենկա և Կամենկա գծի վրա, Ժյուլա գետից դեպի հյուսիս:

Ճակատի գրությունը խստորեն բարդացավ նախկին սպաներից մի շարք հրամանատարները, այլ և սպիտակների կողմն անցած առանձին զորամասերի մատնությամբ և դավաճանությամբ:


Մայիսի 20-ին Չուչ լճի Ֆլուտիլիային հրաման տրվեց Ռոսկոպել գյուղի բազայից անցնել Պսկովի լիճը: «Ուզա» և «Յերմակ» նավերը, գույքով բարձած բեռնանավը բուքարի վերցրած մի կատերի հետ դուրս յեկան Պսկով, բայց, հասնելով մինչև Ոստրովց գյուղը, կրակ բաց արին Ոստրովցի և Պոզորովյեյի վրա ու, բարձրացնելով սպիտակ զվարդիական անդրեյսկյան զորոշակ, ուղղություն վերցրին դեպի Կունեստո գետաբերանը, վորտեղ և հանձնվեցին սպիտակներին:

Մայիսի 23-ի առաջին գիշերը հրաձգային գունդը, վոր գիրքեր եր գրավել Իզորոսկի ռայոնում, դավաճանորեն անցավ սպիտակների կողմը: Սպիտակ հստոնացիներն անմիջապես հարձակման անցան և զբաղեցրին Իզորոսկը: Այսպիսով, դուրս յեկավ, վոր մեր ճակատը Պսկովի մոտ ճեղքված է:

Այդ կանխորոշում եր Պսկովի անկումը:

Քաղաքի եվակուացիան տեղի ունեցավ բացառիկ ծանր պայմաններում: Ոգտվելով ճակատում կրած մեր անհաջողություններից՝ սկսեցին խլրտալ հակահեղափոխական տարրերը թե քաղաքում և թե շրջակա գյուղերում: Սպիտակ զվարդիական ազինաները հրդեհումներ եյին կատարում: Տերտերա-կուլակային ագիտացիայի ազդեցության տակ գյուղերում բռնկվեցին կուլակային խռովություններ:

Պլուսա—Ստրուգի (այժմ Կարմիր Ստրուգի) կայարանամիջում պայթեցվեց յերկաթուղագիծը և կտրվեց հազորակցությունը Պետրոզրոդի հետ: Աչնուհետև այդ նույն ճանապարհը կտրվեց՝ 72-րդ վերստի վրա կամուրջը պայթեցնելով: Պսկով կայարանում ծաղեց հրդեհ, վորի հետեվանքով պայթեցին մի քանի պայթուցիկ ականներ: Իրանից հետո դասալիքները խռովություն բարձրացրին Սելեչնյովա կայարանի ռայոնում: Այդ խռովության պատճառով դադարեց Պսկով—



Սխեմա 5. Թագճական գործողությունները Գզով-Գեկոյան ուղղության վրա.

Պարզեց գծով կատարվող հաղորդակցությունը, բայց շուտով այդ խողովու-  
թյունը լիկվիդացիայի յենթարկեցին՝ այնտեղ ուղարկված զորքերը՝  
Մայիսի 23-ի լեռնեկոյան պայթեցվեց Գեկով-Բուլդոյե գիծը 14-րդ

վերստի վրա՝ ազգա-սանխտարական գնացքն անցնելուց առաջ։ Դրացքը խորտակվեց, և ջարդված վտգոնները խափանեցին ճանապարհը։ Այսպես՝ հարձակում գործող սպիտակ գվարդիականութանն ողնում եր թիկունքում թագնված հակահեղափոխությունը։

Մեր գործառնները դեռ քաղաքից չեյին դուրս յեկել, յերբ Վելիկայա գետի ափին հայտնվեց սպիտակ եստոնական հետևակը։ Նա շարժվեց դեպի Ուզինսկի կամուրջը (այժմ Կարմիր Բանակի կամուրջ) դրահապատի պաշտպանության տակ։ Սկսվեց կրակային մարտը։ Այդ վճռական մոմենտին լավեց ուժեղ պայթյունի ձայն։ Կամուրջը նստեց ջրի մեջ և արդելեց թշնամուն անցնել Վելիկայա գետի աջ ափը։ Այդ պայթյունը կատարեց ականա-պայթուցիկ վաշտի հրամանատար ընկ. Ա.



Կարմիր Բանակի կամուրջը (նախկին Ուզինսկի) Պակսված և կորուստ յերևում ե այն մասի վերանորոգումը, գոր պայթեցվեց 1919 թ.։

Ա. Չեպուրինը, վորը հենց այդտեղ ել զոհվեց՝ իր մարտական պոստում։ Դրանից հետո մեր գործառնները մաքրեցին քողաքը։

Ուզինսկի և Ռիգայի յերկաթուղային կամուրջները պայթեցնելուց հետո, սպիտակ եստոնացիները, վախենալով նոր պայթյուններից, այլևս չհետապնդեցին նահանջողներին։ Ականատեսները պատմում են, վոր ՎՊաղաքում դեռ հագիվ շրջում եյին անհատ կարմիր բանակայինները, հյուժված ու հոգնած, իսկ յետ մնացած դավաճան սպաները, վորոնք առաջ Կարմիր Բանակում և հիմնարկություններում եյին ծառայում, արդեն ուսադիրներ եյին կպցրել։ Խթաններ եյին դրել ու թրեր կապել սպիտակներին դիմավորելու համար։ Սկսվեց թալանը։ Բուրժուազիան իր աներն եր տեղափոխում փափուկ կահ-կարասիք, ոսյալներ ու դաշնամուրներ, տրյումոններ։ Պետրոպավլով-

սկայա փողոցում ջարդեցին մատրակայի, լուցկու, ծխախոտի, յուղի նազմի պահեստները: Սկսվեց մեծ ջարդ:

Մայիսի 26-ի առավոտյան սպիտակ եստոնացիները գրավեցին քաղաքը: Մեր զորամասերն այդ ժամանակ նահանջեցին դեպի Չերնյակովիցի և Պոզորելկա գիծը և այնուհետև Կեպ և Չերյոխա գետի մյուս կողմը: Միաժամանակ Չուզի ճակատամասի այն զորամասերին, վորոնք գեռ շարունակում էին իրենց ձեռքում պահել Ժյուլյա գետի բնագիծը, հրաման տրվեց հեռանալ դեպի Կվաշենկինա Գորա, Ստարկովա, Պեսկի գյուղերը և այդպիսով արևմուտքից պաշտպանել ճակատը Պեսոգորդի հետ կապող յերկաթուղագիծը:

### ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Սպիտակ զորքերը յեկել են ազատագրելու իրենց յեղբայրներին», — այսպես եր սկսվում դեներալ Ռոձյանկոյի մայիսի 15-ի հրամանը: Հրամանի հետևյալ պարագրաֆներում պարզապես մատնանշվում եր, թե սպիտակ հրամանատարութունը «յեղբայրներ» ասելով ում եր հասկանում: Հրամանում կախողանի միջոցով մահվան պատիժ եր, հայտարարվում կոմունիստներին, խորհրդային իշխանությանը համակրողներին, խորհրդային հիմնարկութունների ծառայողներին և այլն, առանց բացառելու և կանանց: Սպիտակ լրագրերը բացարձակապես կոչ էին անում հրեաներին ջարդելու:

Սկզբնական շրջանում սպիտակները հայտարարեցին, վոր գյուղացիներին իրավունք են տալիս հավաքել իրենց զրաված հողերի բերքը: Սակայն հետո հայտարարվեց, վոր բոլոր հողերը պետք և վերադարձնել իրենց նախկին տերերին և «հողերի վոչ մի ինքնակամ գրորովում չի թույլատրվում»: «Գեմոկրատական» ճոճաւն Փրազներով սպիտակներն իրենց գրաված վայրերում վերականգնում ելին կալվածատիրական իշխանութունը: Ամենուրեք կալվածատերերը վերադառնում էին իրենց կալվածքները և իրենց հաշիվներն էլին մաքրում գյուղացիների հետ Գյուղերում կատարվում էին մասսայական խուզարկութուններ, պատանդներ էլին վերցվում, մարդկանց ձերբակալում և դանակոծում էին՝ խորհրդային իշխանությանը համակրելու մեջ մահնաանշան կասկածանքի համար: Չէին խնայում մոչ կանանց, մոչ ծերունիներին:

Ահա թե ինչպես են նկարագրում ականատեսներն այդպիսի բռնութուններից մեկը:

«Ճալեյիվո գյուղում ընկեր Մարինա Գրիգորյևիվային ձերբակալեցին վորպես խորհրդային իշխանության համակրողի: Յերբ նրան հարցրին, թե «Ո՞վ ես դու, կոմունիստ չե՞ս արդյոք», Մարինան խիստ վրդովված, համարձակ ու բացարձակ հայտարարեց. «Սպանելու չեք

յիկել, ճիւղաղներ. սպանեք ելի, յեթե այդպես ե. յես կոմունիստ եմք, Գլուղացիների բազմութեան ներկայութեամբ նրան գլորեցին ցեխի մեջ և սկսեցին ծեծել Սակայն նա մտրակի տակ ել ըզալում եր. շոտհիւններ, մարդասպաններ, հոգեսպաններք: Յերբ վերջացրին զանակոծել նրան, նա ընկած եր գետնին արյունաշաղախ, ամբողջովին ցեխի մեջ կորած, մերկացված մարմնով: Շուք չեք կարող սպանել ինձ, հոգեսպաններք,—ասաց Մարինան վեր կենալով: Նրան կըրկին գետին գլորեցին և նորից սկսեցին ծեծել... Այդ խորտանգուժներից հետո Մարինան հաշմանդամ մնաց իր ամբողջ կյանքումք:


Տեղական բնակչութեանը լավ ե հիշում այն դաղանային բռնությունները, ծաղրանքներն ու ծեծերը, վորոնցով սպիտակները հավերժացրին իրենց ներկայութեանը: Համարյա գյուղ չկա, վորտեղ սպանված չլինեն կոշմարային հիշողութեաններ սպիտակների տիրապետութեան մասին: Սովորաբար սպիտակների գալուստը ուղեկցելովում եր նրանով, վոր տեղաբնիկն ու կուլակները մատնում եյին գլուղական չքավորութեան ակտիվիստներին: Այդպես ձերբակալվեցին ու հետո գնդակահարվեցին չքավոր գլուղացիներ Անախա Ոստաշովը և Իվան Լուկաշովը Յամակովիցի գյուղում, Իվան Կորոլկովը և Յեզոր Յուրկինը Նովոսուտի գյուղում, չքավորութեան կոմիտեյի անդամ բաարակ Գոլիաը Ուսոյե գյուղում և այլն:

Բուլակ-Բալախովիչի շտաբի ու պարետային վարչութեան գալուց հետո Պսկովում անմիջապես սկսվեցին մասսայական խուզարկութեաններն ու ձերբակալութեանները: Մայիսի 28-ի դիշերը, Վելիկայա գետի ափին, նախկին պաշտոնատները շենքի յետևում տեղի ունեցավ խորհրդային ծառայողների խմբի առաջին գնդակահարութեանը: Գնդակահարվածների թվում եյին Կոսայարովը—սոցապահովագրութեան վարիչը, Պոզեմսկին—փորագրիչը, վորը շտամպներ ու կնիքներ եր պատրաստում խորհրդային հիմնարկութեանները համար, Մարյա Բելորոկովան—Պսկովի Արտակարգ հանձնաժողովում անձնագիր գրողը և մյուսները: Գնդակահարվածների դիակները նետվեցին Վելիկայա գետը և մի քանի որ հետո միայն յերևացին Պսկովայի գետաբերանում:

Բնակչութեանը սարսափեցնելու համար 9 մարդու կախեցին կենտրոնական փողոցների լապտերների սյուներից: Քաղաքում անզաղար գործում եր սպիտակ հակահետախուզութեանը: Բանտերն տնմիջապես լիքը լցվեցին բանտարկյալներով: Մշտական մահապատիժների տեղը Հեղափոխութեան զոհերի հրապարակն եր (նախկին Սեննայա), Այստեղ Բալախովիչի հրամանով կախաղան եր կանգնեցված: Ամեն շաբաթ՝ շաբաթ որերին մահվան դատավճիռներ ելին կալացվում, իսկ

կիրակի որն առավոտուան շուկա լեկած շրջակա բնակչությանը «խը-  
րտտելու համար» մահապատիժներ եյին կատարում: Դատավճիռը կա-  
տարում եր ինքը Բալախովիչը: Մահապատժի յենթարկվածներին հենց  
այդտեղ թաղում ելին հողի մեջ: Բացի դրանից, բազմաթիվ գնդակա-  
հարություններ եյին կատարվում Դիմիտրովսկի գերեզմանատան ցան-  
կապատի լեռուում:

Տեղական բնակչուհի Վ. Վ. Անտիպովան պատմում ե. «Յերբ յես  
Սովետական փողոցը դուրս յեկա և տեսա լապտերների սյուներից  
կախված դիակները, իսկույն ինձ վատ զգացի ու հենվեցի անկյունի



1919 թվին Բալախովիչի պարասած կտաղանը Հեղափոխության գոհերի  
(նախ. Սեննայա) հրապարակում, Պսիսովում:

մետաղի սյունին (այդ սյունն այժմ ել կա, թեև անկյունի տունը  
քանդել են): Քիչ հանգստանալով՝ յես նկատեցի, վար ինչվոր մի բան  
խփում ե իմ ուսերին: Ինչպես պարզվեց, այդ սյունին նույնպես մարդ  
եր կախված... Յես փախա դեպի Սովետական հրապարակը: Սակայն  
այնտեղ ևս լապտերների սյուներից կախված եյին յերկու մարդ:

Սպիտակներն այդպես դաժանորեն վարվեցին նաև Յամբուրդում:

Սպիտակները քաղաք մտան թե չ, սկսվեցին ձերբակալություն-  
ներ: Կալանավորում եյին բոլոր նրանց, ովքեր թեկուզ աննշան չա-  
փով կասկածանքի եյին յենթարկված խորհրդային իշխանությանը  
համակրելու մեջ: Կախողան բարձրացրին խորհրդային շատ ծառա-  
յողների: Կախում եյին քաղաքի զլխավոր փողոցում, կախում եյին  
ծառերից զինվորական գորանոցների մտա: Այստեղ կախողան բարձ-

բացրին հետաքննչական հանձնաժողովի նախագահ ընկեր Լոխեյին, արժեքաթիւնական աշխատող ընկ. Բուստրոմին և շատ ուրիշներին: Մահապատժի մուս վայրը գտնվում եր կայարանից վոչ հեռու: Ներկայումս այդ վայրը վոչ մի բանով չի նշված: Առաջ այստեղ սեմաֆոր կար, և տեղական բնակիչները լավ եյին ճանաչում այդ վայրը: Այստեղ, անտառի յեղրին, սպիտակները գնդակահարում եյին իրենց գոհներին, Մահապատժի յենթարկվածներին կխաթաղ եյին անուամ հողում: Յերը մեր գործամասերը վերադրավեցին Յամբուրգը, այդտեղ հայտաբերվեցին հողի տակից գուրս ընկած սպիտակ գվարդիական տեուրի ղոհերի ձեռքերն ու վտօքերը:



Սպիտակ տեսուրի գոհերի հուշարձանը Դմիտրովյան գերեզմանոցի պատի յետևում, Գակովում:

Յամբուրգ եյին քշում տանում սպիտակներն իրենց գրաված գյուղերից վերցրած բազմաթիւ պատանդներին: Դրանք չքավոր եյին: Բիչ չեր նաև Նարվայից վերցրած բանվորների թիւը, մեծ մասամբ ձրեմգումի մանուֆակտուրայից: Նրանց կալանքի տակ եյին առել սպիտակ գվարդիականների թիկունքում կատարած ընդհատակյա հեղափոխական աշխատանքի համար: Նրանց թվում եր նաև Նարվայի կուսակազմակերպչական ակտիւ աշխատող ընկ. Վիլլախը (կախաղանով մահապատժի յենթարկված): Մարդկանց մեծ կուտակումների և վատ սննդի հետևանքով կալանավորների մեջ սկսվեցին համաճարակ հիվանդություններ:

Սպիտակներն առանձնապես անողոք դատաստան եյին տեսնում գերիներին հետ: Անխտիւր կախում եյին ըտլոր կոմունիստներին և

խորհրդային իշխանությանը համակրողներին, Մնացած մարդկանց առաջ հարց ելին դ՛նում՝ անցնել իրենց մոտ՝ ծառայության, և հրաժարվելու դեպքում կախում կամ գնդակահարում ելին:

Սպիտակներն իրենց հարձակման սկզբին գերի վերցրին 19-րդ հրաձգային զինվորայի 3-րդ բրիգադի հրամանատարին, ցարական բանակի նախկին զննելու Նիկոլայիվին: Նա մեկն եր այն հին սպաներից, վորոնք առանց տատանումների, պրոլետարական հեղափոխության առաջին օրերից անցան խորհրդային իշխանության կողմը և իրենց զիտելիքներն ու փորձերը ազնվորեն նվիրեցին Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ստեղծման և ամրապնդման գործին:

Սպիտակներն առաջարկեցին ընկ. Նիկոլայիվին, վորպես նախկին սպայի, անցնել իրենց մոտ ծառայության: Ընկ. Նիկոլայիվը կտրակոտնապես հրաժարվեց գրանից: Մահապատժի սպառնալիքները չփոխեցին նրա վորոշումը: Այն ժամանակ սպիտակները նրան տարան Յամբուրգ և քաղաքի ու շրջակա գյուղերի ամբողջ բնակչությանը հայանեցին ընկ. Նիկոլայիվի առաջիկա մահապատժի մասին: Առավոտից սկսած բռնի կերպով շուկայի հրապարակն ելին քշում ժողովրդին:

Քաղաքում այժմ ել ապրում են այդ մահապատժի շատ ականատեոներ, վորոնք յերիտասարդ սերնդին պատմում են քաջարի հրամանատարի մասին, թե ինչպե: նա զոհվեց բանվոր դասակարգի գործի համար: Ահա ինչ են պատմում ականատեոներն այդ մահապատժի մասին:

Հրապարակում 1919 թ. սկզբից կանգնեցված եր Կարլ Մորջուի հուշարձանը: Սպիտակները, գրավելով քաղաքը, քանդեցին այդ հուշարձանը և նրա տեղը կախազան կանգնեցրին: Այդ հենց այն տան դիմաց եր, վորտեղ գտնվում եր սպիտակ գվարդիական շտաբը: Պատը՝



19-րդ հրաձգային զինվորայի 3-րդ բրիգադի հրամանատար Ա. Պ. Նիկոլայիվ, վորին սպիտակները գերի վերցրին մահապատժի լինթարկեցին Յամբուրգում:

գամբ դուրս յեկավ գեներալ Ռոճյանկոն՝ համհարզներով շրջապատված, Ընկ. Նիկոլայեվին հրապարակ բերին պահակով շրջապատված։ Նա իրեն շատ հանդիստ եր պահում։ Քանի դեռ թմբուկ էյին հարում, նա կանգնած նայում եր իրեն շրջապատողներին։ Յերբ վերջացրին զատավճռի ընթերցումը, բուրբի առաջ շարդեցին նրա զգեսներալահան սուրբը։ Կախողանի տակ տարուրեստ եր դրված։ Ընկ. Նիկոլայեվին ինքը բարձրացավ տարուրեստի վրա, բացեց տուժուրկայի ոճիքը, ողն իր վիղը գցեց, ձգվեց ու ասաց. «Ի՞նչ խլում եք ինձնից իմ կյանքը, բայց դուք չեք կարող խլել ինձնից իմ հավատը մարդկանց դալիք լերջանկության նկատմամբ»։ Յետևից մոտ վազեց դահիճը՝ յենթասպաներից մեկը, և վոտքով խփեց տաբուրետին, վորպես յի այն դուրս գցի ընկ. Նիկոլայեվի վոտքերի տակից։ Ինչվոր պատճառով այդ չհանջողվեց յենթասպային։ Կողքին կանգնած սպան զգավեց նրա վրա. պարանը բռնած զինվորները ձիգ ավին այն դեպի վեր, իսկ դահիճը յերկրորդ հարվածով դեն շարտեց տաբուրետը... Պարանը կապեցին յերկաթե սյունին, վոր կանգուն եր մնացել Կարլ Մարքսի քանդված հուշարձանի ցանկապատից։

Սպիտակ գվարդիական ավանտյուրան լիվիդեացիայի յենթարկելուց հետո, ընկ. Նիկոլայեվի մարմինը կիսաթաղ վիճակում գտնվեց քաղաքային գերեզմանատանը, տեղափոխվեց Պետրոգրադ և թաղվեց այնտեղ։ Տեղական բնակչությունն այդ ժամանակից շուկայի հրտարակն անվանեց Նիկոլայեվյան հրապարակ։

### ՃԱԿԱՏԸ ՏԱՏԱՆՎԵՑ

Յամբուրգը հանձնելուց հետո ամբ զորքերը յերկար զորասյունով ձգվեցին դեպի Կերստովո տանող անտառային ճանտղարհի վրա։ Նեղ ճանապարհը բռնված եր մարդկանց համատարած հոսանքով, հրանոթներին, սայլերին հոսանքով։ Տեղ-տեղ զորամասերն իրար էյին խառնըվում։ Վոչ վոք չեր մտածում հետախուզության և պահպանության միջոցների մասին։ Մինչդեռ Կերստովո գյուղն արդեն գրավել էյին սպիտակ գվարդիականները։

Սպիտակները թույլ ավին, վոր մեր զորասյունը մոտենա Կերստովո գյուղին և կրակ բաց արին նրա վրա։ Նահանջողների մի մասը նետվեց դեպի Կոտլի և Բոլ. Ոգերտիցի։ Մյուս մասերը նեղն ընկան անտառում և կողմնակի ճանապարհով դուրս յեկան Կոպորյեյի մոտ։ Մանր հրետանին թաղվեց ճահճի մեջ։ Հրանոթների մի մասը նետվեց Սոլիա գետի մեջ։ Չկար ղեկավարության միասնություն և կապ զորամասերի միջև։ Չորամասերից մի քանիսը, ընդհանրապես, հետո յերկար ժամանակ վորոնում էյին իրար։ Որինակ՝ 6-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի մնացորդներին դիվիզիայի շտաբը գտավ միայն մայիսի 19-ին Վիտինոյում։ Ընդվորում, դիվիզիայի շտաբի գլխահատականով, զորամասերն այնքան են քայքայված, վոր վոչ մի

լուրջ խնդիր չեն կարող կատարել և նրանց ոգտագործելու բոլոր փորձերը կարող են միայն վերջնականապես վնջնչացնել գնդերը»:

Այդ ժամանակ լավ չեր դրությունը նաև ձախ թևում, Վեյման կայարանի ուսմանում:

Մայիսի 18-ին, կեսորին, սպիտակները, Վրուդա կայարանը պաշտպանող կարմիր զորամասերի խոր թիկունքը շրջանցնելով, հանկարծակի գրոհեցին նրանց վրա արևելքից: Հարվածն այնքան անսպասելի չեւ, վոր կարձիքները համարյա առանց մարտի բռնվելու թողեցին կայարանը, զրահողնացքը և պարենի բազան:

Այդ նույն օրը Կոպորյեյի ծովախորշում հայտնվեցին թշնամու հրետանավ ու մեկ ակնակիր, իսկ սրանց յետևից հայտնվեց Յ տրանսպորտային նավ՝ դեսանտով: Համարյա միաժամանակ դեսանտային ջոկատներ ափ հանվեցին Պեյախու, Սիստա-Պալկինո և Իոլգովո գյուղերի մոտ: Թեև նրանցից մեկը Դուգովոյի մոտ հաջողութամբ գրոհի յենթարկվեց Կրոնշտադաի բերդային գնդի կողմից և հետ շարվեց դեպի Սիստա-Պալկինո, մնացած յերկու ջոկատները Կոպորյեյի ուղղության վրա կատարած իրենց գործողություններով ել ավելի դժվարացրին Նարվայի մարտական ճակատամասի զորամասերի նահանջը (սխեմա 4):

Կիսահալ ջրերից տակավին չչորացած ճանապարհներով ձգվել էյին գումակները: Հոգնած ձիերը դժվարութամբ ելին դուրս քաջում սայլերի ու հրոնոթային հրետասայլերի անիվները կաշուն կավահողից: Նրանց յետևից շարժվում եր հետևակը մարտիկների խիստ նոսրացած շարքերով:

Մեր զորամասերի նահանջը դեպի Պետրոզրադի մոտակա մատույցները շարունակվեց մինչև մայիսի վերջը՝ առանց կանգ առնելու: Չեյին կատարվում հարձակման անցնելու վերաբերյալ զանազան ժամանակներում արված հրամանները: Համալրումները զալիս էյին մեծ սւշացումներով, մանր զորամասերով և վատ էյին վարժված սւ սպանողինված: Այդ պատճառով նրանք չէյին կարող բեկում առաջ բերել ճակատի մարտական գործողությունների մեջ: Հաճախակի էյին դարձել նախկին սպաներից կազմված հրամկազմի, նրանց հետ նաև ամբողջ ստորաբաժանումներով սպիտակների կողմն անցնելու դեպքերը: Ըսկատան ակնհայտորեն կորցնում եր իր կայունությունը:

\* \* \*

Այդ ժամանակ սպիտակների հարձակողական թափն սկսել եր սպառվել:


Սպիտակների հյուսիսային կորպուսի ուժերի սահմանափակ լինելը, 5-6 հազար մարդուց վոչ ավելի, ալև կապի միջոցների ու

կողմակերպված թիկունքի բացակայութիւնն ավելի և ավելի խըստորեն եյին դժվարացնում սպիտակ գվարդիականներէ հետագա առաջխաղացումը: Գններալ Ռոձյանկոն հետագայում գրում եր իր հիշողութիւններում. «Այդ ամենը մեզ համար վատ հետեանք կարող եր ունենալ, վոչ իմ և վոչ մի ուրիշի մտքով անգամ չեր կարող անցնել գրավել Պետրոգրադն այնքան աննշան ուժերով. սակայն և յետտալ արդեն բոլշևիկներէց ազատագրված վայրը ցանկալի չեր»:

Սպիտակ զինեալը չի գրում այն պլաններէ մասին, վոր նա և նրա զործակիցները նշում ելին, չի գրում և այն ուժերի մասին, վորոնց վրա նորանք հույս ելին դնում: Ընկեր Ստալինը բացահայտեց այդ պլաններէ իսկական իմաստը և սպիտակ հրամանատարութեան հաշիվները:

«Ի՞նչը սովյալներով, — գրում եր ընկեր Ստալինը «Պետրոգրադականայա պրավդայում» 1919 թ. հուլիսի 8-ին, — հակառակորդը հույս եր դնում վոչ միայն, կամ, ավելի ճիշտ, վոչ այնքան իր սեփական ուժերի վրա, վորքան իր կողմնակիցներէ, այն է՝ մեր զորքերէ թիկունքում, Պետրոգրադում և ճակատներում սպիտակ գվարդիականներէ ուժի վրա: Ամենից առաջ Պիտերում ապրող բուրժուական պետութեաններէ (Ֆրանսիական, շվեյցարական, հունական, իտալական, հոլանդական, դանիական, ռումինական և այլն) ալսպես կոչված դեսպանութեանները, վորոնք, հոգուտ Յուդենիչի և Կոնզլո-Ֆրանս-Ֆիննա-հասոնական բուրժուազիայի, զբաղված եյին սպիտակ գվարդիականներին ֆինանսավորելով ու լրտեսութեամբ: Այդ պարոնները աջ ու ձախ առատորին դրամներ եյին շուսյում մեր բանակի թիկունքում կաշառելով այն ամենը, ինչ կարելի յեր կաշառել: Այնուհետև ոտես սպայութեան այն ծախված մասը, վորը մոռացել եր Ռուսաստանը, կորցրել եր պատիվը և պատրաստ եր անցնելու բանվորադուղացիական Ռուսաստանի թշնամիներէ կողմը: Վերջապես, Պետրոգրադի պրոլետարիատի կողմից վերավորանք ստացած նախկին մարդիկ, բուրժուական ու կալվածատերերը, վորոնք, ինչպես հետո պարզվեց, զենք եյին կուտակել և հարմար մոմենտին եյին սպասում մեր զորքերի թիկունքին հարված հասցնելու համար: Հենց այդ ուժերի վրա լեր հույս դրել հակառակորդը՝ հարձակվելով Պետրոգրադի վրա: Գրավել Կրասնայա Գորկան, Կրոնշտադտի այդ բանալին, և շրանով իսկ թուլացնել ամբողջած ռալոնը, ապստամբութեան բարձրացնել ամբողջներում և կրակ բանալ Պետրոգրադի վրա այն հաջովով, վոր, ընդհանուր խառնաշփոթութեան մոմենտին, ընդհանուր հարձակումը միացնելով ապստամբութեան հետ Պետրոգրադում, շրջապատի և գրավի պրոլետարական հեղափոխութեան ոջախը, — ահն վորոնք եյին հակառակորդի հաշիվները»:

Մայիսի վերջին նահանջող կարմիր զորամասերի ճակատը հասավ Դուզովո (Գոպուրյեյի ծովախորշը) — Վորոնինո — Մեդուշի — Մուխոմիցի — Գուլյեվո — Դիվեռակայա գծին:



Սխեմա 6. Մեր զորամասերի հարձակման անցքերու փորձը՝ 1919 թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 11-ը:

Այդ ժամանակ սպիտակների ճնշումն այնքան թուլացավ, վոր 7-րդ բանակի հրամանատարութունը, վերջապես, իր մեջ այնքան ուժ գրասով, վոր վորձ արեց հարձակման անցնել կազմակերպված ձևով (սխեմա 6):

Մայիսի 27-ին 7-րդ բանակի հրամանատարութունը հրաման տվեց հարձակման անցնելու մայիսի 29-ի լուսադեմին: Նարվայի իրմբավորմանը խնդիր առաջադրվեց՝ ճեղքել սպիտակների ճակատը Յամբուրգի խճուղու ուղղությամբ և, մտնելով թիկունքը, ջախջախել նրանց գլխավոր խմբավորումը — դնդապեա Պալենի շոկատը, — վորը Կիկերինոյից շարունակում էր հարձակումը Յելիզավեաինոյի վրա:

19-րդ հրաձգային դիվիզիայի 2-րդ բրիգադից, 1-ին Կրոնշտադտի բերդային գնդից և 6-րդ բանակից նոր յեկած 77-րդ հրաձգային գնդից կազմված ռալթյան հավաքական դիվիզիան հարված պետք է հասցնեք Բեդուենիցի և Իլեշի ուղղությամբ և դուրս գար Լուգա գետի վրա:

Միաժամանակ 6-րդ հրաձգային դիվիզիան պետք է հարձակման անցնեք Ուխովոյի և Կլոպիցի ճակատում և հետո դուրս գար Լուգա գետի ու Սամրո լճի վրա: Հեծյալ բրիգադին, վոր պետք է Սիվերոկայա կայարան գար, հրամայված էր շարժվել Մոսնիցիի և Վերեստ կայարանի միջով դեպի Լոժգոլովոյի և Սամրո լճի աայոնը, խնդիր ունենալով անկեցել 6-րդ հրաձգային դիվիզիայի հարձակմանը: Ռեզերվ էր նշանակված Գատչինոյում կանգնած 2-րդ Պետրոգրադյան հրաձգային գունդը: Գատչինոյին պետք է մոտենային 2-րդ հրա-



Ա. Ս. Բեկասով

ձգային դիվիզիայի յերկու գունդ:

Ռազմական լրտեսութունն ու դավաճանութունները ցանցապատել եյին խորհրդային զորքերի շտաբներն ու շատ զորամասեր, վորի հետևանքով սպիտակներին հայանի դարձան վոչ միայն Նարվայի զորամասերի կազմն ու խմբավորումը, այլ և նրանց առաջադրված խնդիրները և նույնիսկ նրանց տրամադրութունները: Նախկին սպաներից հրամկազմի մեջ քիչ դավաճաններ չեղան, վորոնք կապված էյին սպիտակ հրամանատարության հետ: Միվերակալայի աայոնում,

Ռոժդեստովենս գյուղում, դավաճանորեն սպիտակների կողմն անցավ Պետրոգրադից նոր լեկած 3-րդ Պետրոգրադյան զնդի 3-րդ գումարտակը: Այդ գումարտակը կազմակերպված էր ցարական պահեստային Սիմյոնովյան զվարդիական զնդի մնացորդներից և աղտոտված էր անհարազատ տարրերով՝ վաճառականների, նախկին տնտեսների և առևտրականների վորդիներով: Սպիտակ զվարդիականները տեղեկանալով այդ զնդի տրամադրութայն մասին, Թալարյան զնդով հարձակում գործեցին նրա վրա և մայիսի 29-ի գիշերը մտան Վիրա գյուղը: Գյուղում դասավորված 3-րդ գումարտակի խոռվարաններն սպանեցին զնդի հրամանատար ընկ. Տավրինին, զնդի կոմիսար ընկ. Կուլպելին և զնդի բոլոր գումարտակների կոմիսարներին: Այդտեղ գտնված բրիգադի կոմիսար ընկ. Ա. Ս. Ռակովը, իմանալով դավաճանութայն մասին, դիրք մտնելով շտաբի շենքում՝ պաշտպանվեց սպիտակներից զնդացրով և նազանով մինչև վերջին փամփուշտը: Բոլոր փամփուշտները ծախսելով, ընկ. Ռակովը սպանեց իրեն վերջին զնդակով: Կոմունիստների հետ դասաստան տեսնելուց հետո դավաճաններն անցան սպիտակների կողմը: Հետագայում նրանց միացան նաև զնդի մյուս ստորաբաժանումները:

Այդ դավաճանութունն ոգնեց սպիտակ զվարդիականներին առաջ շարժվել մինչև Մեծնո և պայթեցնել Միվերսկայա կայարանի մոտ գտնված լեռկաթուղային կամուրջը: Բայց և այնպես նարվայի խմբավորման մնացած ճակատում, առանձնապես աջ թևում, մեր զորամասերն անցան հարձակման և սկսեցին նեղել լայն ճակատով յերկարաձգված սպիտակներին:

Մայիսի 31-ին Բալթյան դիվիզիայի ճակատի հանդեպ դասավորված սպիտակների զլխավոր ուժերը քրվեցին դեպի Կոսլի գյուղի ռայոն: 6-րդ հրաձգային դիվիզիայի աջ թևը տիրեց Բեզուսիցի գյուղին: Հունիսի 3-ին Բալթյան դիվիզիայի աջ թևը դուրս յեկավ Սոումա գետի գծի վրա, Ուսայե և Պավլովո ճակատամասում: Դիվիզիան յեկած պիտերյան կուրսանանների հավաքական ջոկատը վերցրեց Ուդոստրո, Միստա, Կորոստովիցի, Նեգոդիցի գյուղերը: Այդ ժամանակ 6-րդ հրաձգային դիվիզիայի աջ թևում գործող 158-րդ հրաձգային դուևդն առաջ շարժվեց դեպի Բրիգոզովո—Ուլսովո—Ռոնկովիցի գիծը, իսկ դիվիզիայի այն զորամասերը, վորոնք հարձակվում էին Բալթյան յերկաթուղագծի լեռկայնքով, մարտ մղելով զբաղեցին Մինկովոն, Կիկերիվոն և Պոլոպովիցին:

Սակայն հաջողութունը յերկար չտևեց, Բոլոր հանգամանքները հարկադրում են յենթադրել, վոր այդ հարձակումը դիտավորյալ կերպով ձեռնարկվեց, առանց բավարար չափով կենարոնացնելու հուսալի ուժերն աջ թևում—Բալթյան դիվիզիայի ճակատամասում—զլխավոր հարվածի ուղղութայն վրա: Հարձակման համար ստեղծված չեյին նաև

անհրաժեշտ սեզերովներ: Որինակ՝ 6-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիական սեզերվում փաստորեն կար միայն մի փոքրիկ շուկատ՝ բաղկացած 80 մարդուց: Ոգնութեան համար ուղարկված համալրումը տեղ չհասավ: Վատ եր կողմակերպված նաև զորամասերին պարենի անհրաժեշտ տեսակներով մատակարարելու դործը: Բալթյան դիվիզիան նույնիսկ թիկունք չուներ: Այդ բոլորի հետևանքն արտահայտվեց շուկով: Քրանով մի անգամ ևս ապացուցվեց՝ ինչպես այն ժամանակվա ղինվորական ղեկավարութեան անընդունակութունը՝ կատարելու իր խնդիրներն այդ ժամանակ ճակատում ստեղծված պայմաններում, այնպես և մեր շաբաների աղտոտվածութունը՝ լիտիոնին իրենց քայքայիչ աշխատանքն, անցկացնող դավաճաններով ու լրտեսներով:

Սպիտակները, տեղեկանալով մեր զորամասերի հարձակման պլանին մասին, Ոսարովյան և Ռեվելյան գնդերը կենտրոնացրին իրենց համար կարևոր նեղուրիցի—Բեգունիցի ուղղութեան վրա և անցան հակահարձակման: Այդ նույն օրը սպիտակները մեր զորամասերին հարկադրեցին նահանջել դեպի Մեստանովս, Գուլբուրդիցի, Լոշկովիցի, Մուրասովս: Տեղի ունեցան մարտեր փոփոխակի հաջողութուններով: Բեգունիցին ձեռքեձեռք եր անցնում: Սակայն սեզերվներ չկային: Ուշանում էին ոգնական ուժերը: Փորձ արվեց ծավալել հարձակումը 6-րդ հրաձգային դիվիզիայի ճակատում, բայց այդ փորձն էլ յակալանարդյունքներ չտվեց: Մարտամթերքներն սկսեցին ստացվել ընդհատումներով: Սպիտակ ղվարդիականները շարունակելով հարձակվել, իրենց ձախ թևով, ստիպեցին 97-րդ հրաձգային գնդին, իսկ նրանից հետո և Բալթյան դիվիզիայի մյուս զորամասերին նահանջել դեպի Գուստրուժի—Վորոնինս գիծը, հունիսի 5-ի լեքեկոյան դեմ: Դիվիզիայի շտաբը ղեկուցում եր, վոր յեթե անմիջապես ոգնական ուժեր չուղարկվեն, նա հույս չունի զորամասերի նահանջն այդ ընդգծում կանգնեցնելու: Սակայն շտաբովեցին հարկավոր ոգնական ուժերը՝ Ինչպես հարկն և չապահովված հարձակումը ստիպեց մեր զորքերին յետ քաշվել նախորդ նրանց կողմից դրաված ճակատի գծից և հետագայում վերածվեց նահանջի: Յեղ իրոք, մեր զորամասերը հունիսի 11-ին նահանջեցին Կովաշ գետի աջ ափը: Այդ նույն օրը, ձախ թևում, Վերեստի ուսոնում, դավաճաններն սպիտակների կողմն անցավ Պետրոգրադյան հեծյալ բրիգադի 2-րդ հեծյալ գունդը նախկին սպա հրամանատարների ղլխավորութեամբ: Յերը գնդի կոմիսարն ու կոմունիստները փորձեցին կանգնեցնել դավաճաններին, սպանվեցին նրանց ձեռքով:

Սարիցի գյուղի (Լուգոս քաղաքի մոտ) կուլակների դավաճանութեան պատճառով գոհվեց 1-ին Լուգոսյան գումարտակի կոմիսար ընկ. Գալբերգը:

Սպիտակները՝ հարձակման համար այնպիսի ժամանակ ընտրեցին, յերբ ջոկատը, դենքը թողնելով՝ բնակարաններում, միտինդի լեր հավաքվել տեղական դպրոցը։ Պահպանությունն չեր նշանակված։ Աղատունն գյուղ մտնելով՝ բանդիտները աներից վերցրին հրացանները և, դինվելով նրանցով, հանկարծակի հարձակվեցին կարմիր բռնակալիներին վրա։ Առաջ յեկավ խառնաշփոթություն։ Ընկ. Գալբերդը նետովեց դեպի գումարտակի շտաբը, բայց գումարտակն արդեն անձնասուր եր յեղել սպիտակներին։ Ընկ. Գալբերգին շրջապատեցին և դերի վերցրին վերավոր։ Նա սպանվեց զգվելի ծաղրանքներից հետո, իսկ նրա մարմինը ձգեցին գյուղի մոտից հոսող վելիգեթա գետի ավի։

Մշտական անհաջողությունները փակասում, նողկալի մատնություններն ու դավաճանությունները, կուլակա-դասալիքների խըռովությունները, — այս բոլորն անչափորեն քայքայում էին 7-րդ բանակի մարտունակությունը։ Շփոթմունք եր արևում ամբողջ 7-րդ բանակում, ճակատը տատանվեց, թշնամին մոտենում էր Պետրոզրագին։ Հարկավոր եր անմիջապես փրկել զբությունը<sup>1</sup>։

<sup>1</sup> Կ. Յե. Վարոսիով, «Մատենը և Կարմիր Քանակը», Կուսկրատ, 1935 թ., էջ 29 (սուս.)։

ՊԻՏԵՐԻ ԶԱԿԱՏԸ, ՎՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԶԱԿԱՏԸ

Լենինյան կուսակցութեան Կենտրոնական կոմիտեն մի կոչով գլխեց Պետրոգրադի, Պսկովի, Նովոքոռոդի և Պիտերին մոտակա մյուս նահանգների կուսակցական և խորհրդային կազմակերպութեաններին:

«Կարմիր Պիտերը գտնվում է լուրջ սպառնալիքի տակ, — ասված էր այդ կոչում. — Պիտերի ճակատը դառնում է Հանրապետութեան տանակարևոր ճակատներից մեկը:

Խորհրդային Ռուսաստանը չի կարող Պետրոգրադը հանձնել նույնիսկ ամենակարճ ժամանակով:

Պետրոգրադը պետք է պաշտպանել ինչ գնով ուզում է լինի, Չափազանց մեծ է այդ քաղաքի նշանակությունը. նա առաջինը բարձրացրեց ապստամբութեան դրոշը բուրժուազիայի դեմ, և առաջինը նաև տարավ վճռական հաղթանակը:

Կենտրոնական կոմիտեն պահանջում էր լաբել բոլոր ուժերը մտրիլիզացիայի յենթարկել և Պիտերին ոգնութեան ուղարկել բոլորին, ովքեր ընդունակ են գնալ կրելու:

Միաժամանակ Կենտկոմը վորոշեց Կարմիր Պիտերի պաշտպանութեանը կազմակերպելու համար այնտեղ ուղարկել ընկեր Ստալինին, «1918—1920 թ.թ. ժամանակաշրջանում ընկեր Ստալինը հանդիսանում էր, թերևս, միակ մարդը, վորին Կենտրոնական Կոմիտեն մարտական մի ճակատից մյուսն էր պցում, ընտրելով հեղափոխութեան համար ամենից ավելի վտանգավոր, ամենից ավելի ահավոր վայրերը: Այնտեղ, վորտեղ համեմատաբար հանգիստ էր ու բարեհաջող, վորտեղ մենք հաջողութուններ եյինք ունենում, — այնտեղ Ստալինը չէր յերևում: Սակայն այնտեղ, վորտեղ ամբողջ մի շարք պտտճառների ուժով կարմիր բանակներն եյին ճարճատում, վորտեղ հակահեղափոխական ուժերը, զարգացնելով իրենց հաջողութունները, սպառնում եյին խորհրդային իշխանութեան գոյութեանն իսկ, վորտեղ շփոթութունն ու խուճապը կարող եյին ամեն ըտպե վերածվել տնճարակութեան, կատասարոֆի, — այնտեղ հայտնվում էր ընկեր Ստալինը:

Նա գիշերները չեր քնում, նա կազմակերպում էր, նա իր հաստատունն ձեռքն էր վերցնում ղեկավարութիւնը, նա կոտորում էր, անողոք էր և—բեկում էր ստեղծում, առողջացնում էր պարագան: Ինքը ընկեր Ստալինն այդ մասին գրում էր 1919 թ. Կենտկոմին ուղղած նամակներին մեկում, ասելով, վոր իրեն շարժնում են ուղղակիան դերատեսչութիւնն ախոռները մաքրելու մասնազետ<sup>1</sup>:

1918 թ. ամառն ու աշնանը ընկեր Ստալինը կազմակերպեց Ցարիցինի ներսական պաշտպանութիւնը, նախորդ սպիտակ զվարդիական լրտեսներից մաքրելով Հյուսիսային Կովկասի ուղղակիան շրջանի շտաբներն ու թիկունքները: 1918—19 թ.թ. ձմեռը ընկեր Ստալինը Կենտրոնական Կոմիտեյի հանձնարարութեամբ, Ֆ. Ս. Ջերժինսկու հետ միասին վերացրեց Յ-րդ բանակի քայքայումը և կազմակերպեց Արևելյան ճակատի կարմիր բանակների հաղթական հարձակումը Կովկասի դեմ:

Պիտեր մամանելով՝ ընկեր Ստալինն այդտեղ Պետրոգրադի ճակատի շտաբներում և զորամասերում հանդիպեց չափազանց ծանր պայմանների, մասնութիւնների ու դավաճանութիւնների, լրտեսութեան, հակահեղափոխական դավադրութիւնների, հանդիպեց 7-րդ բանակի ղեկավարութեան անճարակութեանն ու լիակատար խառնաշփոթութեան, ճակատի քայքայմանն ու Կարմիր Պիտերը սպիտակներից պաշտպանելու անընդունակութեան. այս բոլորը դավաճանական նպատակներով մեր կուսակցութեան մեջ սողոսկած Տրոցկու եղեկավարութեանն պտուղներն էին:

Ընկեր Ստալինը հենց առաջին օրերից անցավ յետուն գործունեացութեան: Նա իսկույն ևեթ իր ձեռքը վերցրեց ղեկավարութիւնը և կազմեց չափ ու սահմանն անցած թշնամուն կործանիչ հարված հասցնելու պլանը:

Ընկեր Ստալինի ստրատեգիական պլանն արմատապես տարբերվում էր այն պլաններից, վորոնք կազմվում էին ղինվորական մասնազետների կողմից մինչև նրա ժամանումը: Այդ մասնազետների պլաններում գլխավոր տեղը հատկացվում էր ոգնական ուժեր ուղարկելուն (հաճախ առանց հաշվի առնելու նրանց վորակը), զորքերի վերախմբավորմանը և այլն: Ընկեր Ստալինն իր պլանում ամենից առաջ յեղնում էր այն բանից, վոր ահհրաժեշտ է անխնա վորչնացնել լրտեսական և դավաճանական սպիտակ զվարդիական բները, ինչպես Պետրոգրադի ճակատում զորքող մեր զորամասերի թիկունքում, այնպես և այդ զորքերի ներսում: Նա մոբիլիզացիայի յենթարկեց Կարմիր

<sup>1</sup> Կ. Յե. Վորոխով, «Ստալինը և Կարմիր Բանակը», Կուսհրատ, 1935 թ. ԿԶ 7—8:

Պիտերի հերոսակաւն սրբոլետարիատի հեղափոխական յեռանդը նրան թշնամուց պաշտպանելու համար Բացի դրանից, ընկեր Ստալինը նախատեսեց զորքերի մարտունակութիւնն ամրացնելու միջոցները՝ ղեկավարութեան սխտեմը վերակազմելու միջոցով, անհուսալի հրամանատարներին հեռացնելու և նրանց նոր հրամանատարներով փոխարինելու միջոցով, վորոնք անասմանորեն նվիրված եյին սրբոլետարական հեղափոխութեան զործին, գնդերում կուսակցական և կոմյուրիստական կորիզն ուժեղացնելու, մարտիկների մեջ քաղաշխատանքը ծավալելու միջոցով, վոր վերջին ժամանակ փաստորեն ընդհատվել եր նահանջելու պատճառով և այլն: Աերջապես, ընկեր Ստալինի պլանը նախատեսում եր այն, վոր հարկավոր և բավարար չափով ուժեր ու միջոցներ կուտակել լայնորեն մտածված վճռական հարձակման համար:

Ընկեր Ստալինն արատաւոր ներթափանցութեամբ հալտաբերեց ըստր խոցերը. անխնա վռնչացնելով այն ամենը, ինչ վարակված եր ու փաած, նա առողջացրեց ճակատն ու թիկունքը և բանակային որդանիդմն աղահոյեց անհրաժեշտ ուժերով ու միջոցներով՝ վճռական մոմենտին թշնամուն լետ մղելու համար, յերբ նա մոտենա կարմիր Պիտերի մտաւաղ մատուցներին:

Ընկեր Ստալինը սրբոլետարական հեղափոխութեան ամբողջ Պետրոզրադի վրա կախված մահացու վտանգի որերին աշխատում եր առանց ձևքերը ծակելու, շրջապատողներին աղչեցնելով իր անսպառ յեռանդով և ընդունված վորոշումները յերկաթե հաստատակամութեամբ կենսադործելով: Ականատեսներն իրենց հիշողութիւններում նկարագրում են ընկեր Ստալինին, թե ինչպես նա զեկուցումներ եր ընդունում շատրային համեստ վագոնում, վոր կանգնած եր Բալթիան յերկաթուղագծի պահեստի գծերից մեկի վրա, ինչպես նա ուշ գիշերներին գլուխը կուցրած աշխատում եր քարտեզի վրա, ինչպես խորհրդակցութիւններ եր անցկացնում ռազմածովային մասնագետների հետ և մերժում եր նրանց «խորհուրդները», թշնամու կրակի զոնայում ոպերացիաներն եր զեկավարում ճակատում, յելույթներ եր ունենում միաինգներում... Վորտեղ ել նա լիներ, ամենուրեք ստեղծագործական բողեւիկյան թափ ու յեռանդ եր մացնում, վողեորելով շրջադատողներին՝ թշնամուն վռնչացնելու աննկուն վճռականութեամբ:

## ՀԱՐՎԱԾ ԹԻԿՈՒՆՔԻ ՀԱԿԱՀՆՆԱՓՈՒՅՄԱՆԸ

Ինութագրելով պարագան, վոր ստեղծվել եր այն ժամանակ Պետրոզրադի ճակատում, Լենինը ըստր աշխատավորներին ուղղած դիմումի մեջ գրում եր.

«Սպիտակ գվարդիականների հարձակումը Պետերբուրգի վրա՝

ակնհայտորեն պայացուցեց, վոր ամբողջ ճակատամերձ շերտում, յուրաքանչյուր մեծ քաղաքում լայնորեն զարգացած են լրտեսութեան, գաղտնառութեան կազմակերպութեանները, կամուրջների պայթեցումները, թիկունքում պատամարտութեաններ կազմակերպելը, կոմունիստների և բանվորական կազմակերպութեանների ակնառու անդամների սպանութեանների կազմակերպումը...»

1919 թ. ամառվա դեմ Պետրոգրադի բնակիչների թիվը խիստ նվազեց՝ հասնելով մինչև 800 հազար մարդու, Նրանցից ավելի քան 200 հազարը, այսինքն՝ բնակչութեան մեկ քառորդը կազմում էլին բանվորներն իրենց ընտանիքներով: Պիտերի պրոլետարների մասին Վլադիմիր Իլիչ Լենինը բազմիցս հիացմունքով և արտահայտվել, վորպես Ռուսաստանի բանվոր դասակարգի ամենից լավագույն, առաջավոր, ամենից ավելի դիտակից շոկատներից մեկի մասին: Պիտերի պրոլետարները յերբեք չեյին յենթարկվում դատարկ Ֆրազներին, բուրժուազիայի կողմից վախեցնելուն:

Պետք է նկատի ունենալ, վոր 1919 թ. ամառը Պետրոգրադում կային բավական թվով պրոլետարական դիկտատուրային թշնամի տարրեր: 1917 թ. հոկտեմբերին ջախջախված բուրժուազիան նորից գլուխ եր բարձրացնում Յուդենիչի հաջողութեանների կապակցութեամբ: Բուրժուազիայի մի մասը, վոր առաջուց փախել եր Պիտերից, այժմ վերադառնում և պատրաստվում եր միանալու սպիտակ գվարդիական ճակատի հետ: Սպիտակ գվարդիական զործակալներն ու ոտարերկրյա հետախույզները բնակչութեան մեջ տաղնապալի, պրովոկացիոն լուրեր էյին տարածում, սերտ համաձայնութեամբ աշխատելով ոտարերկրյա դեսպանութեանների ու հյուպատոսութեանների հետ:

Ընկեր Ստալինի ցուցումով ուժեղացվեցին պահպանութեան և հսկողութեան միջոցները, ինչպես ճակատամերձ շրջանում, այնպես և Պետրոգրադում: Շուտով ՎՊԿ-ան հայտարերից լրտեսական և հակահեղափոխական կազմակերպութեան Պետրոգրադի բաժանմունքը, վորը կոչվում եր «ազգային կենտրոն»: Այդ կազմակերպութեանը սերտորեն կապված եր Կուլյակի, Յուդենիչի և Դենիկինի հետ:

Այդ ստոր կազմակերպութեանը հաջողվեց հայտարերել հետևյալ հանգամանքի շնորհիվ: Լուգայի սկզբութեան վրա սպանվեց մի անհայտ մարդ, վորը փորձեց անցնել սպիտակների մոտ: Կարմիր բանակայինները մանրամասն խուզարկութեան չեթարկելով սպանվածին, նրա մոտ գտնված գլանակներից մեկի խողովակում գտան մի տոմս, վորը հասցեագրված եր դեներալ Ռոձյանկոյին: Այդ տոմսում ի միջի այլոց գրված եր.

«... Ձեզ հանձնված դրքերը Պետրոգրադի նահանգը մանելիս

կարող են սխալներ լինել, և այն ժամանակ կտուժեն արն անձնավորութիւնները, վորոնք զաղտնաբար մեզ չափազանց խոշոր ոգուտ են տալիս (այստեղ առաջին հերթին նկատի ելին առնված սպիտակ գլարդիական դավաճանները, վորոնք գտնվում եյին մեր զորքերի շարքերում:—Գ.Կ.) Այդպիսի սխալներից խուսափելու համար արդոք հնարավոր չե՞ք գտնում նշանաբան (պարոլ) մշակել: Առաջարկում ենք հետևյալը. յիթե մեկը վորևէ ձևով կամ Ֆրագով կապի այս խոսքերը՝ «ինչ գնով ուղում ե լինի» և «Վիկ» բառը, և միևնույն ժամանակ աջ ձեռքը դիպնի աջ ականջին, նա հայտնի կլինի մեզ...

Կարմիր բանակայինները տոմսը ներկայացրին վերադասութեան կարգով: Մի քանի որից հետո Ֆինլանդական սահմանի վրա բռնվեցին յերկու լրտես, վորոնք փորձում եյին անցնել սահմանը: Նրանց մոտ գտնվեցին Պետրոգրադի բազային կենտրոնի ղեկավարների նամակները, ստորագրված «Վիկ» պայմանական նշանով:

Այդ դավադրութեան հանցադործ թելերի ծայրը հասավ մինչև Պետրոգրադի մի խոշոր կապիտալիստ Շտեյնիզգերի բնակարանը: Պաշտպանութեան ժամանակ նրա մոտ գտնված նամակների բաղդատումը և ձերբակալութեան ցուցմունքները հնարավորութիւն տվին հաստատելու, վոր Շտեյնիզգերը յեղել և բազային կենտրոնի Պետրոգրադի բաժանմունքի ղեկավարը և ճակատում կատարվող քայքայիչ հանցավոր աշխատանքի վոգեշնչողներից մեկը:

Այդպիսի կենտրոնի հանցադործ թելերը ձգվել եյին դեպի Պետրոգրադում գտնված ոտարերկրյա դեսպանութիւններն ու հյուպատոսութիւնները և այդ սպիտակ լրտեսական կազմակերպութիւնը սիրտորեն կապում եյին արտասահմանյան լրտեսութեան նշանավոր ներկայացուցիչներ Պոլ Իյուկսի, Կյուրցի և մյուսների հետ: Ինչպես հետաքննութիւնը պարզեց, դավաճանութեանը մասնակցել են 7-րդ բանակի շտաբից, Բալթյան տորմիդից և Պետրոգրադի ամրացված ուսոնի ամբողջ մի շարք աշխատողներ, այդ թվում նաև Պետրոգրադի ողային պաշտպանութեան պետ Լիշինը, բանակի ավտոտրանսպորտի պետ Լիխտերմանը, հրետանու տեսուչ Լեբեգևը, բանակային ատդիակայաններից մեկի պետը և ուրիշները: Իավադիբնիների մեջ աչքի ընկնող դեր եր կատարել հսերունի Պետրովսկայան, վորի վորդին՝ ՎիլդեՎալին թագնվել եր կուսակցական տոմսով և պատասխանատու աշխատանքի յիր սողոսկել 7-րդ բանակի քաղաքաժնում:

Այդ դավադրութեան հայտարարումը ակնառու կերպով ցուց տվեց, վոր լրտեսութիւնն ու դավաճանութիւնը թափանցիկ են ամեն տեղ, վորտեղ բթացած ե յեղել աշխարհութիւնը, վորտեղ չի յեղել պատշաճ կարգապահութիւն, վորտեղ խախտվել են բոլոր կայան կուսակցութեան

և կառավարութեան ցուցումները, վորտեղ հանցազորած անհոգութիւնն է թագաւորել:

Պետրոզրադի Արտակարգ հանձնաժողովի հովաքած փաստական առատ նյութից յեննելով՝ վճռական միջոցներ ձեռք առնվեցին Պետրոզրադը բոլորովին մաքրելու հակահեղափոխական տարրերից: Բաղաքի բուրժուական թաղամասերը զլիտվին յենթարկվեցին խուզարկութեան: Այդ խուզարկութեան հետևանքով ձերբակալվեցին այն բոլոր անձնավորութիւնները, վորոնք հրազեն ունեյին առանց համապատասխան թուլլավութեան, և այն բոլոր անձնավորութիւնները, վորոնք յենթակա էյին կասկածանքի հակահեղափոխութեան, լրտեսութեան և սպեկուլացիայի մեջ:

Այդ խուզարկութիւնը նոր փաստական ամենահարուստ նյութ տվեց Պետրոզրադում հակահեղափոխական կազմակերպութիւնները հայտաբերելու և նրանց կապը թշնամու հետ հաստատելու համար: Յրանսիական, իտալական, հունական, շվեյցարական, հոլանդական, դանիական և ռուսինական դեսպանութիւններում հայտաբերվեցին զնդացրեր, հրացաններ և հրապաշարներ: Ռուսինական դեսպանութեան մեջ նույնիսկ թնդանոթ գտան: Խուզարկութեան ժամանակ ընդամենը վերցվեց 6626 հրացան, 142 հազար փամփուշտ, 644 ատրճանակ, հաստոցավոր զնդացրեր, մեծ քանակութեամբ նոսակներ, պիրոկսիլինի գլաններ պայթեցումների համար և այլն:

Մասնութեան և լրտեսութեան մեջ բռնվածները զնդակահարվեցին, մնացած կասկածանքի յենթակա անձինք աքսորվեցին:

Յերկաթե հետևողականութեամբ անցկացված ստալինյան միջոցառումներն ավելորդ անգամ ընդգծեցին ժողովրդի թշնամիներ, ներկայումս զնդակահարված Ջինովյեվի ու Յելդոկիմովի՝ Պետրոզրադի կազմակերպութեան այն ժամանակվա ղեկավարների սնանկութիւնը վերահաս վտանգի դեմ պայքարելու գործում և նրանց դավաճանական դիրքավորումը: Ստալինյան միջոցառումները միտանդամից առողջացրին մասնութիւններով ու դավաճանութիւններով թունավորված Պետրոզրադը և կրիտիկական մոմենտին ամբաշնորհեցին Պիսերի պրոլետարիատի շարքերը ճակատում և թիկունքում դասակարգային թշնամու դեմ վճռական պայքար մղելու համար:

Պետրոզրադի ճակատում լրտեսութեան, դիվերսիայի և դավաճանութեան դեմ մղած պայքարի փորձը լիովին հաստատում է ընկեր Ստալինի այն խոսքերը, վոր նա ասել է 1937 թ. բոլշևիկյան կուսակցութեան Կենտրոնական կոմիտեյի Փետրվար-մարտյան պլենումում:

«Պատերազմի ժամանակ ճակատամարտը շահելու համար կարող է պահանջվել կարմիր բանակայինների միջանի կորսուտ: Իսկ նրան համար, վորպեսզի ճակատում այդ շահումը ձախողվի, դրա համար

բավական են միջանի լրտեսներ վորևե տեղ բանակի շտաբում կամ նույնիսկ դիվիզիայի շտաբում, վորոնք կարող են գողանալ սպերատիվ պլանը և հանձնել այն հակառակորդին: Յերկաթուղային մեծ կամուրջ կառուցելու համար պահանջվում են հազարավոր մարդիկ: Սակայն այդ կամուրջը պայթեցնելու համար բավական է ընդամենը միջանի մարդը:

1919 թ. Պետրոգրադի ճակատի դեպքերը ցույց տվին, վոր լայնորեն ճյուղավորված լրտեսական-դիվերսանտական թշնամական կազմակերպության լիկվիդացիան համարժեք էր խոշոր ճակատամարտ շահելուն:

### ԲՈՒՈՐԸ ԴԵՊԻ ՊԻՏԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկեր Ստալինի առաջարկությամբ բուլղիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեն վորոշեց Պետրոգրադի ճակատը ճանաչել առաջինն իր կարևորությամբ:

Այդ վորոշման համադրատախան, Կենտրոնական կոմիտեն նշեց և՛ ուժերի բաշխումը, ալտինքն, վորոշեց՝ Արևելյան ճակատից տեղափոխված դիվիզիաներից լերկու յերրորդը տալ Պիտերին, մեկ յերրորդը Հարավային ճակատին:

Պետրոգրադին ոգնելու համար Սիմերիոսկից ուղարկվեց 4-րդ հրաձգային դիվիզիայից 3 բրիգադ, Սամարայից՝ մեկ բրիգադ 2-րդ հրաձգային դիվիզիայից մեկ հրետանական դիվիզիոնի հետ միասին, Կոտելնիչից՝ 3 բրիգադ 10-րդ հրաձգային դիվիզիայից, Կոստրոմայի, Ռիբինսկի, Իվանովո-Վոդնենսկի և Տվերի դասընթացների կուրսանտներից կազմված ջոկատը, ջողարկման դպրոցը, Մոսկվայից՝ մեկ մարտկոց և յերկու պահակային վաշտ, Կաղանից՝ մեկ հեծյալ բրիգադ և միջանի այլ զորամասեր:

Հունիս ամսի ընթացքում Պետրոգրադի ռազմական շրջանում մորելիզացիայի յենթարկվեց 21.168 բանվոր, իսկ հուլիսին՝ 11.929 բանվոր:

Կենտրոնական կոմիտեյի դիմումին ի պատասխան՝ Պիտերին մոտակա նահանգների կուսակցական կազմակերպությունների նահանգիկոմներն ուղարկեցին զգալի քանակությամբ կոմունիստներ համալրման համար: Ամրացան զորամասերի կուսակցական կազմակերպությունները: Կարմիր բանակայինների մեջ ծավալվեց կուսակցական—քաղաքական լայն աշխատանքը Կարմիր Պետրոգրադի պաշտպանության լոզունգի կազմակցությամբ:

Բուլղիկյան ագիտացիայի հրավառ խոսքը, կուսակցականների ու կոմյերիտականների բարձր ակտիվությունն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան մեր զորամասերի դրուժյան վրա: Նահանջի

պատճառով հուսալքված գնդերում սկսեցին վերականգնել կարգադաս-  
հությունն ու ներքին կարգը։ Տեղական միջառի կուսակցական կազ-  
մակերպություններ չբավականացան միայն կոմունիստներին ճակատ  
ուղարկելով։ Պետրոգրադի նահանգի կուսակցական կազմակերպու-  
թյունների, տեղական գործկոմիների և արմիությունների նախաձեռ-  
նությամբ սկսեցին կազմակերպվել կամավորական ամբողջ ջոկատները։  
Այդ ջոկատները, ճակատ գալուց հետո, մտնում էին այնտեղ գտնված  
զորամասերի կազմի մեջ կամ բանակային նոր կազմակերպված մասերի  
մեջ, և այնտեղ կազմում էին ամուր կորիզ։ Այսպես, որինակ, այդ  
ժամանակ Գատչինայում կազմակերպվեց 1-ին համահավաք հրաձգա-  
յին գունդը, վորը համալրվել էր կալինինի, Նովոլադոքայի, Շլիսել-  
բուրգի, Լուգայի և կուսակցական մյուս կազմակերպությունների կո-  
մունիստներով։ Այդպիսի շատ ջոկատներ ստացան ինքնուրույն  
նշանակում։ Այդ ջոկատները մարտնչում էին արագ վրա տվող  
թշնամու դեմ՝ Կարմիր բանակի գնդերի հետ կողք-կողքի և ցուցարե-  
րեցին ինքնագոհութան և քաջագործության անդուգական որինակներ։

Ընկեր Սաալինը միջոցներ ձեռք առավ կարգավորելու այն զոր-  
քերի ղեկավարութունը, վորոնք նահանջից հետո քառասյին դրության  
մեջ էին գտնվում։ Ֆիննական ծոցի հարավային ափի (բացի կրասնո-  
գորսկի ամրացված ռայոնից) և մինչև Գոզլի գուգահեռը Պլյուսս  
գետի վերին հոսանքի միջև դասավորված զորամասերը մտան Նար-  
վայի խմբավորման մեջ։ Այս խմբավորման մեջ մտան Թ-րդ հրաձգա-  
յին դիվիզիան, Բալթյան դիվիզիայի զորամասերը, Լուգայի հրաձգա-  
յին բրիգադը և մի շարք ուրիշ մանր զորամասեր։ Նարվայի խմբա-  
վորման շտաբը գտնվում էր Գատչինայում։

Ընկեր Սաալինի հոգատարության շնորհիվ բարելավվեց զորքերի  
բոլոր անհրաժեշտ մատակարարումը և առաջին հերթին մարտամթերք-  
ներով։ Այդ նպատակով սահմանվեց նոր պաշտոն—Նարվայի ճակատ-  
ամասի թիկունքի պետի պաշտոնը։ Այս միջոցառումը միանգամայն  
անհրաժեշտ էր, վորովհետև մեր զորքերի թիկունքում գործում էին  
սպիտակ զվարդիական լրտեսներն ու դիվերսանտները, վորոնք մայիս,  
հունիս և հուլիս ամիսների ընթացքում կազմակերպեցին կուլակները  
և դասալիքների մոտավորապես 30 յեւլյայթի Այդ յեւլյայթները սերտոր-  
ին կապված էին ճակատի մարտական գործողությունների հետ և  
ներանց նպատակն էր ոգնել սպիտակ զվարդիականությանը։ Նրանք  
շուտով լիվիզացիայի յենթարկվեցին թիկունքի կազմակերպված ու-  
թյան շնորհիվ։

Թիկունքի շտաբի խնդիրն էր՝ պահպանել հեղափոխական կարգը  
թիկունքում, հայտարարել դասալիքներին, Պետրոգրադի պաշտպա-  
նության կոմիտեյի ուղարկված համալրումներից գնդեր կազմել թիկունքի

պահպանութեան համար: Հետագայում ստալինյան այդ միջոցառման վորձը հաշտութեամբ կիրառուեց նաև մյուս ճակատներում:



Քաղաքի կուսակցական կազմակերպութիւնները, արհմիութիւնները և Պետրոգրադում կազմակերպված ներքին պաշտպանութեան շտաբը, անձամբ ընկեր Ստալինի ցուցումներով, յետանդուն պատրաստութիւններ տեսան Պիտերը պաշտպանելու համար:

Պետրոգրադի Պորհուրդը, արհմիութիւնների խորհուրդը և բանվորուհիների համաքաղաքային կոնֆերանսը մի դիմում ընդունեց, ուղղված աշխատավորներին, վորի մեջ ասված էր.

«Մի նոր Կորնիլով ե շարժվում մեր Կարմիր Պետերբուրգի վրա: Յարակաւ չիրկու գեներալներ—Յուդենիչն ու Ռոձյանկոն, ցարական զնդապետ Բալախովիչի հետ միասին, կապիտալիստներից կաշառված, հավաքել են մի քանի հազար սպիտակ զվարդիական սպաների և Պետերբուրգի վրա լեն գալիս, վորպեսզի թալանեն այն, կոտորեն բանվորներին ու բանվորուհիներին, կարմիր բանակայիններին ու նավաստիներին: Դրան կարող ե միայն մի պատասխան լինել, նույնպիսի պատասխան, ինչպիսի պատասխան իր ժամանակին մենք ավինք Կորնիլովին:

Մորիլիզացիայի յեն յենթարկվում բոլոր բանվորները, մորիլիզացիայի յեն լենթարկվում ամենապատասխանատու աշխատողները: Մի քանի որով հետաձգվում ե ընթացիկ աշխատանքը, մինչև վոր մենք կքննք նորարուս կորնիլովականներին: Սպառազինվում են բոլոր բանվորները:

Ձերբակալել դասալիքներին, արհամարհել յերկշտաներին, Վոչընչացնել բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն խանդարել քաղաքի հանդիսալը:

Պետերբուրգը պաշտպանող կարմիր բանակայինները չեն համարձակվի նահանջել: Ամբողջ Պորհուրդային Ռուսաստանն ե գալիս մեզ սպանութեան: Պետք ե մի անգամ ընդմիշտ վերջ տալ սպիտակ բանդաներին, վորոնք թրևում են Պետերբուրգի շրջակայքում: Պետք ե կոտրել Ֆիննական ու եստոնական սպիտակ զվարդիականների ձեռքառնները՝ Պետերբուրգի դեմ վտանձագութիւն անելու:

Կարմիր Պետերբուրգը հանգիստ ու վստահորեն հայտարարում ե.

«Պետերբուրգը կպաշտպանի իրեն և կխրատի նրա վրա հարձակվող բոլոր լպիրշներին»:

Ամբողջ քաղաքում, բոլշիկյան կուսակցութեան ռայոնական կամիսակներում, գործարաններում ու ֆարրիկաներում կազմակերպ-

վեցին կոմունիստական վաշտեր ու դասակներ, վորոնցից կազմվեց Պետրոգրադի կոմունիստական գումարտակը: Այդ գումարտակում նշանակված կուսակցութեան բոլոր տնօրէնները պարտավոր ելին բազմական ուսուցումն անցնել առանց կարվելու իրենց ծառայութեան պարտականութունները կատարելուց:

Մարտիկները կուսակցական կոմիտեաների որադահուցութունն ու պահպանութիւնն էլին կատարում, կատարում ելին ներքին պաշտպանութեան շտաբի, կուսակցական որգանների և Արտակարգ Հանձնաժողովի որգանների հանձնարարութիւնները:

Ընկեր Սաալինի ղեկավարութեամբ կազմակերպվեց քաղաքի ներքին պաշտպանութիւնը: Ներքին պաշտպանութեան շտաբը մշակեց մի պլան, վորով նախատեսվում էր Պետրոգրադի բոլոր մարտական առկա ուժերի ու միջոցների տակախկապես նպատակահարմար բաշխումը:

Ամբողջ քաղաքը բաժանված էր չորս մարտական ճակատամասի, ինչպես ալիք ցույց է տրված 7-րդ սխեմայում:

Ք 1 ճակատամասն ուներ պաշտպանողական յերեք դիժ և պաշտպանում էր Պետրոգրադը հյուսիսից, Ֆիշլանդական սահմանի կողմից: Ծակատամասի պաշտպանութեան համար նշանակված էր 2 գումարտակ՝ դաշտային հրետանու յերկու հրանոթով: Ք 1 ճակատամասի հետ սերտ համագործակցութեան մեջ էր Ք 2 մարտական ճակատամասը պաշտպանողական լերկու դժով: Այդ ճակատամասի խնդիրն էր—արգելք հանդիսանալ հակառակորդի հնարավոր փորձերի՝ ծովի կողմից դեսանտ անի հանելու, իսկ մյուս կողմից՝ պահպանել Ք 3 ճակատամասի թիկունքը շահարավոր հարձակումներից, ինչպես հակահեղափոխական տարրերից, նույնպես և հակառակորդից: Ք 2 ճակատամասի ուժերն էին՝ 2<sup>1</sup>/<sub>2</sub> գումարտակ լերկու հրանոթով և տասներկու գնդացրով: Ք 3 ճակատամասի վրա խնդիր էր դրվում՝ արգելափակել թշնամու դեսանտային գործողութիւնները ծովի կողմից: Ցամաքային հակառակորդի դեմ մղած կռիւներում նա պետք է սերտ տակախկան համագործակցութեան մեջ լինէր Ք 4 ճակատամասի հետ: Ծակատամասի ուժերն էին՝ 7 գումարտակ և դաշտային 5 թնդանոթ: Վերջապես, Ք 4 ճակատամասը, վորի ուժերն էին կազմում 5 գումարտակ, 4 հրանոթ և 36 գնդացիր. այս ճակատամասը պետք է պաշտպանէր քաղաքը հարավից և հարավ-արևելքից: Նրան պետք է ամրացնէր ականակիր «Սամոնը», վոր կանգնած էր Նևայի նավաշինական գործարանի մոտ:

Պարետային անբողոքով տնընդհատ որադահուցութուն էլին տնում սովառնակները:

Հյուսիսից անմիջապես Պետրոգրադին կից ուսյոնը հարաբարաված



արհեստանոցի կամ ցեխի բանվորները Այս միջոցառման հետևանքով ուժեղ կերպով բարձրացավ Պիտերի պրոլետարների կազմակերպված-  
ծուխյունը թշնամու դեմ մղած պայքարում: Գնդերի կազմի մեջ ելին նշանակվում միայն այն մարդիկ, վորոնք բնագույնի էլին վորպես ազնիվ և հուսալի մարդիկ, վորոնք ընդունում էլին խորհրդային իշխանութան պատգոմը: Առ 18-ը հունիսի պիտանի ճանաչվեց և գնդերը նշանակվեց 12.906 մարդ:

Պաշտպանողական դեբերում ամբողջուններ կառուցելու համար Լարկադուական կարգով մորիլիդացիայի յենթարկվեց մոտ 10.000 մարդ ընակչութան անաշխատ տարրերից:

Այս բոլոր միջոցառումների շնորհիվ քաղաքն ապրում էր մարտական լարված կյանքով: Մինչև ուշ գիշեր հրապարակներում ուղե-  
մական ուսուցում էր անցկացվում կոմունիստական գումարտակներին և Պետրոգրադի Պորհրդի բանվորական գնդերի հետ: Որ ու գիշեր չէր դադարում աշխատանքը Ռիկ(բ) ուսուցական կոմիտեներում և Աշխատանքի պլատոում, վորտեղ տեղավորված էր արհմիութուններին մարդային խորհուրդը: Բազաքի ներքին պաշտպանութան ուսուցական շտաբները ղեկավարում էլին ամբողջուններ կառուցելու աշխատանքը: Փողոցներով շարունակ անցնում էլին թարմ զորական մասերը, վորոնք գալիս էլին Պետրոգրադը պաշտպանելու և ճակատ ուղարկվող համալրումները:

Հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարութամբ՝ ահա ալսպես էլին պատրաստվում բանվորական Պիտերի ճակատն ու թիկունքը թշնամուն վճռական հակահարված տալու և ջախջախելու համար:

### ԽՈՒՎՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ ԵՎՐԱՍՆԱՅԱ ԳՈՐԿԱՅՈՒՄ

Այնինչ, սպիտակների սկզբնական հաջողութունները ճակատում ու մեր միջանի ստորաբաժանումների թշնամու կողմն անցնելն ու մատնութան ղեպքերը գլխապտույտի բերին սպիտակ հրամանատարութայնը: Յուղենիչն ու Ռոձյանկոն ձեռնամուխ լեղան սպիտակ կորպուսի վերակազմութայնը՝ ստեղծելով նրանից Հյուսիս-արևմտյան բանակ:

Կնդապետ Պալենի շուկատը վերջնականվեց 1-ին կորպուս: Մրա կազմի մեջ էլին մտնում, յուրաքանչյուրը շորսական գնդերից բաղկացած, 2-րդ և 3-րդ գիվիգիաները և հեծյալ յեգերական գունդը: 2-րդ գիվիգիան կազմված էր թալաբյան, Սեմլոնովյան, Ուտրովյան և Ուրալյան գնդերից և Դանիլովի շուկատից: 3-րդ գիվիգիան կազմված էր Վոլինյան, Ռեվելյան, Բալթյան և Երասնայա Գորկայի՝ գնդերից: վերջին գունդը յենթադրվում էր կազմակերպել Երասնայա Գորկայի՝

մեր կալազորի կազմից, վորտեղ դավաճանները խոտվութուն էյին պատրաստել և ուզում էյին անցնել սպիտակների կողմը: Չ-րդ կորուստի կազմի մեջ էյին մտնում 1-ին դիվիզիան, վորը կազմված էր Գնորգելյան, Կոլիվանյան և Գրովյան դնդերից և Բալախովիչի շոկատը, վորը նույնպես յինթադրվում էր դիվիզիայի վերածել:

Սպիտակները Գնորգարդի համար մզած պայքարում նշում էյին տիրել Կրոնշտադտը անգլիական նախատորմի աջակցութիւմը: Իսկ մինչ այդ՝ նրանք պատրաստվում էյին հակահեղափոխական խոտվութուն բարձրացնել «Կրասնայա Գորկա», «Սերայա Լոշադ», «Որբուչև» ամբողջներում:

«Կրասնայա Գորկա» ամբողջում խոտվութուն բարձրացրեց ամբողջի պարետ, ցարական ծառայության նախկին պորուչիկ Նեկլյուզովը, վորն իր շուրջն էր համախմբել նախկին սպաներից մի խումբը: Նեկլյուզովը, խոտվութուն նախապատրաստելով, գործում էր «ազգային կենտրոնի» ուղղակի ցուցումներով, իսկ վերջինս իր հորթին կատարում էր անգլիական լրտես Պոլ Դյուկաի առաջադրանքները: Դավադիրները ձգտում էյին ապստամբեցնել «Կրասնայա Գորկայի» կալազորի մարտիկների անդիտակից մասին, ընդգծել կոմիսարների և կոմունիստների: Այդ նպատակին հասնելու համար դավաճանները դիմեցին դեմագոգիկ հանցագործ պրիոմներին: Այսպես, որինակ, Նեկլյուզովը թույլ էր տալիս, վոր ամբողջում խախտվեն պահակային և ներքին ծառայության կանոնադրային կանոնները: Այդ բացահայտորեն թուլացնում էր կարգապահութունը կալազորում: Յերը կոմունիստները դեմ դուրս յեկան՝ այդ քայքայիչ գործողութուններին, Նեկլյուզովը ու նրա արքայականներն սկսեցին մեղադրել կոմունիստներին, վոր, իրր թե, նրանք ճնշում են գործ դնում և «կողմնակից են» հին սեփամին: Այդ կաղմալուծիչ տակտիկան զրգռում էր կարմիր բանակայիններին ամենից ավելի հետաձևաց տարրերին կոմունիստների և խորհրդային իշխանության դեմ: Մարտիկների վրա էլ ավելի մեծ աղբեցութուն ունենալու համար, վորոնց մեծ մասը մորիլիզացիայի յեր յինթարկված շրջակա գյուղերից, Նեկլյուզովը, պրոպոկացիայի յենթարկելով նրանց անբավականութունը, պարբերաբար հրետակածության իր յինթարկում այդ գյուղերը, հենվելով, իրր թե, իրեն արված հրամանի վրա: Նման պրիոմներով դավաճաններին հաջողվեց իրենց կողմը գրավել խարված մարտիկներին: Այդ խաբվածների մեջ էյին ամբողջի գնդացրային խմբի կարմիր բանակայինները և 12 դուլմի մարտկոցի հրետավորները:

Այս ամենը կատարվում էր «Կրասնայա Գորկայի» կալազորի կուսակցական կազմակերպության ղեկավարների աջքի առաջ, վորոնք ցուցաբերեցին հեղափոխական զգոնության լիտկատար բացակայութուն և հանցագործ անհոգութուն: Այդ տեսակետից ցուցադրելի է

Պետրոզրադի պաշտպանութան կոմիտեյին ներկայացրած Կրոնշտադտի ծովային բազայի կոմիսարի զեկուլցը, Այդ զեկուլցը բազայի կոմիսարը կազմեց Կրոնշտադտի բերդի ամրոցների հետազոտման հիման վրա, կատարված ընկեր Ստալինի ցուցումով, ընկեր Ստալինի Պետրոզրադի ճակատ ժամանելու հենց առաջին որերին: Այդ զեկուլցու արված է «Կրասնայա Գորկա» ամրոցի դրության բնութագիրը և ասված է բառացիորեն հետևյալը.

«Թե հրամանատարական կազմի և թե խմբի տրամադրությունը միանգամայն բավարար եւ Բերդը կարող է հուշս դնել ամրոցի վրա, վորպես միանգամայն հուսալի հենարանի վրա... Վոչ մի տեղ չնկատվեցին դավաճանության մեջ կասկածանք հարուցող նշաններ»:

Այնինչ թշնամին մոռենում եր: Ամրոցի առաջավոր մատուցները պաշտպանող Կրոնշտադտի 1-ին և 2-րդ դնդերը և 105-րդ հրաձգային գունդը, իրենց գլուխն անցած նախկին սպաներից խարված, առանց մարտ մղելու անցան սպիտակների կողմը: Հունիսի 12-ին հակառակորդն արդեն հայտնվեց ամրոցից 7 կիլոմետրի վրա:

Այդ մատնություններն ու ամրոցի քաղաքական կազմի հեղափոխական գզոնության բացակայությունը հնարավորութուն ավին դավաճաններին հունիսի 13-ի գիշերը ձերբակալելու ամրոցում գտնված ըստ կոմունիստներին, մոտ 200 հոգու, և խաբեբայությամբ դիտարթի անելու Կրոնշտադտից նոր չեկած կոմունիստական ջոկատին: Բոլոր ձերբակալվածները, ընդհանուր թվով մինչև 375 հոգի, բանտարկվեցին բետոնե կաղեմատներում:

Դավաճաններն անմիջապես ռադիոգիր ուղարկեցին սպիտակ հրամանատարությանը, վոր ամրոցը պատրաստ է նրա հրամանները կատարելու: Այնուհետև Նեկյուդովը դիմեց մյուս ամրոցներին՝ միանալու խռովությանը: Հակահեղափոխական տարրերը Կրոնշտադտում և ամրոցներում սկսեցին ծավալել տենդային գործունեություն, սերմանելով խռոնակություն և խուճապ Հունիսի 13-ի ցերեկը խռովությունն իր արձագանքը գտավ նաև «Որբուչև» և «Սերայա լոշադ» ամրոցներում, իսկ նույն որը մոտ ժամի 15-ին Նեկյուդովը հեռախոսով դիմեց Կրոնշտադտին՝ անձնատուր լինելու ուլտիմատումով, հակառակ դեպքում սպառնում եր հրետակոծել Կրոնշտադտը ծանր հրանոթներով: Վորովհետև պատասխան չստացվեց, ամրոցի 12 դյուլմանոց մարտկոցը հրակ բաց արեց քաղաքի վրա: Ի պատասխան խռովարարների կողմից սկսած հրետանական կրակի, Բալթյա նավատորմի «Պետրոպավովսկ» և «Անդրեյ Պերվոպաննի» նավերը, վորոնք կանգնած էին նավահանգրստում, սկսեցին հրետակոծել «Կրասնայա Գորկան»: Սակայն այդ հրետակոծումը վոչ մի վնաս չհասցրեց, վորովհետև արկերը չեկին հասնում նրան: Կրոնշտադտի բազայի պետը և ծովային մյուս «մասնագետները», վորոնք, ինչպես հետ պարզվեց, խռովարարների կողմն էին և նախորդ համաձայնության էին չեկել խռովարարների հետ,

նազերի ծով դուրս դառնն զիմ արտահայտվեցին, համարելով այդ «աննպատակահարմար», վորը հակասում է ծովային տակտիկային-կրոնշտադտի բնակչութեան մեջ խուճապ սկսվեց:

Շփոթութեան մեջ ընկան նաև ամբողջ շատ զինվորական աշխատողներ:

Դրութեանը փրկեց ընկեր Ստալինի յեռանդուն միջամտութիւնը: Նա ինքը՝ ճակատ դնաց և ղեկավարեց խռովարար ամբողջի դիմ կատարվող գործողութիւնները: Ամենից առաջ նա փոխեց ծովային «մասնագետներին» կորզողութիւնը նազեր ծով դուրս չբերելու մասին:


«Պետրոպոլիսի» և «Անդրեյ Պերվոպանին» գծանավերը ծով դուրս լեկան ամբողջին մոտիկ: Հունիսի 14-ին նրանց միացան «Ուլեզ» հածանավը և եսկադրային ականակիրները: Ամբողջ սկսեցին հրետակոծել ուղղակի ճակատից: Այդ հրետակոծութեանը խռովարարներին զգալի կորուստներ հասցրեց: Ընդամենը ամբողջ վրա արձակվեց 12 դուլմանոց յոթհարյուր յերեսունութ արկ «Պետրոպոլիսի» և «Անդրեյ Պերվոպանին» գծանավերից, 130 միլիմետրանոց յոթհարյուր հիսուն արկ՝ «Ուլեզ» հածանավից և 100 միլիմետրանոց հարյուր քառասունհին արկ՝ եսկադրային ականակիրներից:

Ամբողջում կալանավորված կոմունիստները հետագայում պատմում էին. «Մովից կրակը քանի դնում ուժեղանում էր: Նեկլյուզովը պատասխանում էր ավելի ու ավելի թույլ: Ամբողջում ավելի ու ավելի հաճախ էին պայթում արկերը: Սպիտակ գվարդիականները ջղայնանում էին: Նեկլյուզովը պատրաստվում էր փախչելու: Կալանավորներին կամ գնդակահարութիւն էր սպասում կամ կործանում ամբողջ հետ միասին, վորը սպիտակները մտադիր էին պայթեցնել: Կալանավորները, վճռելով, վոր հասել է ժամանակը, նրանք սկսեցին ձիգերի ու պայթյունների դրոպիցի աակ քանդել պատուհանների մեջ ամբողջված սեւերը: Յեւքն ազատ էր, մնում էր միայն խաբել պահակին: Առաջին ընկերը, վոր դուրս թուավ պատուհանից, շփոթվեց և նկատվեց ժամապահի կողմից: Առաջին անհաջողութիւնը տեսնելով և գտնելով, վոր գործը տանուլ չի տրված, թուավ մյուս ընկերը, վորը մոտ վաղեց ժամապահին և բղավեց. «Էլյանքդ փրկիր, ամբողջ պայթեցնում են»: Դրանից հետո նա վաղեց հողաթմբի վրա և նույնը հայանեց նաև խրամատներում գտնվածներին:

Պահակն ու խրամատներում գտնվածները սկսեցին փախչել իրենց կյանքը փրկելու համար: Կալանավորներն ոգտվեցին այդ մոմենտից, և մոտ հիսուն ընկեր փախչելով ազատվեցին»:

Մի քանի հազար մարդուց բաղկացած ամբողջ կայագորը, ոմբահոծման ազդեցութեան տակ սկսեց այս ու այն կողմ փախչել: Արդեն հունիսի 15-ի առավոտից մի քանի խմբեր յեկան Որանիննբաում,


վորտեղ այդ ժամանակ ավարտվում էր Առաինյա խմբավորման կազմակերպումը, վորը նշանակված էր խողովուրթունը ցամաքից ճընջելու համար: Առաինյա խմբավորման մեջ էլին մտնում նավաստիների 1-ին եքսպեդիցիոնը ջոկատը՝ 500 մարդու կազմով, 4 հրանոթով, նա-



«Անգրեյ Պերվոզվաննի» գծանավը հրետակածում է «Կրասնայա Գորկայի» խողովաբաշներին:

վաստիների Ձ-րդ եքսպեդիցիոնը ջոկատը՝ 800 մարդու կազմով, Պետրոգրադի բազայի նավաստիների ջոկատը մեկ զրահապատով և մեկ զրահահարթակով:

Հունիսի 16-ի մոտ կեսօրին Առաինյա խմբավորման զորամասերն անցան հարձակման: 1-ին ջոկատը, գրավելով Լանկելովոն և Մալ, կոնտրոլովոն, գրոհի գնաց Տեմենգոնտը գրաված հակառակորդի վրա: Այդ ժամանակ Պետրոգրադի բազայի նավաստիների ջոկատը, ծովից աջակցութուն ստանալով «Գալչումակ» ակառակորդից, սկսեց հարձակվել «Կրասնայա Գորկայի» վրա: «Ողը թնդում էր արկերի դրդոցից ու շոռահից,—պատմում էյին հետո այդ հարձակման մասնակիցները:—Մեր ջոկատը հարձակվում էր Բուլ Բորկիի վրա: Գետինը դրդում էր արկերի պայթյուններից, վորոնք ողն էյին բարձրացնում ծառերն ու դեռուկեն շարտում հողն ու խճերը յերկաթուղու գծից տասնյակ սաժեն հեռու: Առջևից ընթանում էր զրահագնացքը, վոր կրակում էր հակառակորդի ամրացված դիրքերի վրա: Մի քանի ժամ տեղ հրացանային, գնդացրային և հրետանական մարտից հետո և նավաստիները շտուրմային շեշտակի հարձակումից հետո, հակառակորդը դուրս քշվեց ամրացված դիրքերից և ստիպված յեղավ հեռանալ Բուլ Բորկիից



Սյունիքի Մեծ Կղզի և Սյունիքի քաղաքի միջև գտնվող Արաքսի խաղաղարկի և Մեծ Կղզիի միջև գտնվող ճախարի մասին 17.6.19. ժամանակի քարտեզը

Թողնելով այնտեղ յերկու սալլ անգլիական մահուդե հանգերձանք և մի քանի տասնյակ գնդացիք»:

Ընկեր Ստալինը, գտնվելով կրակի զոնայում, անձամբ ղեկավարում էր թե Առափնյա խմբավորման այդ հարձակումը և թե ծովի կողմից խռովարար ամբոցի ուժակոծումը:

Նավաստիների շեշտակի հարձակման տակ խռովարարները նա հանջում էին ամբողջ ճակատով, Հաճախակի դարձավ հակառակորդ ղինվորների փախուստը մեր կողմը: Հունիսի 15-ի ուշ յերեկոյան խռովարարների ջոկատը, Նեկլյուդովի գլխավորութամբ, հետացավ ամբոցից՝ իր հետ վերցնելով վորպես պատանդներ ձերբակալված կոմունիստներին և խորհրդային իշխանութանը բարձր համակրողներին:

Յրուտ ճահիճների միջով ձգված անտառային ճանապարհներով խռովարարները, իրենց միացած ինգերմանյան ղյինների հետ միասին հետացան Կալինինյի ուղղութամբ: Ամեն մի կանգառման ժամանակ ալս կամ այն գլուղում նրանք տասնյակներով գնդակահարում էին ձերբակալվածներին: Գնդակահարվածների մեջ կային և նրանց կանայք, վորոնք ճաշ էին բերել իրենց ամուսիններին համար: Ձոնվածների մեջ էր Կրոնշտադտի Սորհրդի նախագահ Մ. Մ. Մարտինովը, վորը Կրոնշտադտից ճակատ էր յեկել կոմունիստական այն ջոկատի հետ, վորին Նեկլյուդովը գերի վերցրեց խորեքայական միջոցով:



Մ. Մ. Մարտինով, Կրոնշտադտի Սորհրդի նախագահը, վորը դողանաբար սպանվեց սպիտակների ձեռքով Երասնայա Գորկա ամբոցում:

Փորձեցին վոնչացնել ամբոցի ամբողջ հրետանին, բայց նրանց հաջողվեց փչացնել միայն 5 հրանոթ:

Կալինին, Կովաշի և մյուս գլուղերում մինչև որս ել պահպանվել են գոհված ընկերների գերիզմանները: Սպիտակ գվարդիականները ձերբակալվածների վերջին խմբին գնդակահարեցին գնդացրով Կերնովոյի մոտ, անտառի յեղրին: Մեր հարձակվող զորամասերն այստեղ դուռն խոշտանգված դիակներին ամբողջ կուլտեր:

Հունիսի 16-ին, գիշերվա ժամի 12 անց 30 բողոյին Երասնայա Գորկա ամբոցը գրավեցին Առափնյա խմբաման զորամասերը: Այդ նույն ժամանակ ամբոցին մոտեցավ մեր զրահագնացքը՝ «Սերբայա լոշոդ» և «Ուրուչև» ամբոցները դեռևս ավելի շուտ գղջացին իրենց մեղքը: Նահանջի ժամանակ սպիտակ գվարդիականները

«Կրասնայա Գորկա» ամբոցը վերցնելուց հետո ընկեր Սաախնը գրում էր Լենինին.

«Ծովային մասնագետները հավատացնում են, վոր «Կրասնայա Գորկայի» գրավումը ծովից՝ գլխիվայր և բերում ամբողջ ծովային գիտությունը, Ինձ մնում է միայն վողբալ այդպես կոչված գիտությունը: «Գորկայի» արագ գրավումը բացատրվում է իմ և ընդհանրապես վոչ զինվորականներին կողմից սպերատիվ գործերին ամենակոպիտ կերպով միջամտելով, վոր հասնում էր մինչև ծովի ու ցամաքի ուժերին արված հրամանները փոխելուն և մեր սեփական հրամաններն ընդունել տալուն Իմ պարագն էմ համարում հայտնել, վոր յես այսուհետև նույնպես պետք է գործեմ այդ ձևով, չնայած գիտության նկատմամբ իմ ունեցած ակնածությանը»:

#### ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՍՏԻՆՆԵՐԻ ՀԵՐՈՍՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր գործերն այնուհետև դուրս յեկան Կովաշի գետի, Կալիզնի և Լոմոնոսովո գծի վրա: Պետրոգրադից յեկած պետրոգրադյան բազայի նավաստիների ջոկատը և Կրոնշտադտից 97-րդ հրաձգային գունդը հարձակումը շարունակեցին Ուստ-Տուդիցիի վրա (սխեմա 8):

«Հարկ լեղավ հարձակվել գերերը դժվարին պայմաններում՝ ճահիճներով, լերբ տեղ-տեղ ընթանում էինք մինչև գետինըս ջրի միջով, — պատմում են մասնակիցները, — նավաստիների յերկրորդ վաշտը հարձակվում էր Ուստ-Տուդիցիի վրա գերերը: Նրա հրամանատարն էր ջոկատի պետի ոգնական Ի. Լևաչևը, Գյուղին մոտեցանք լուսադեմին: Վաշտը պակեց գետինն. առաջ շարժվեց յերեք հոգուց բաղկացած հետախուզություն: Ծահճի կողմից անտառը ձգվում էր մինչև գյուղի բանջարանոցները: Հետախուզությունը մտավ բանջարանոցները և, վոչ վոքի չտեսնելով, սկսեց զգուշությամբ մոտենալ խրճիթներին: Հանկարծ կալերից մեկի մոտ հայտնվեց մարդկանց մի խումբ: Հետախուզները հազիվ կարողացան թազնվել խրամում, վորը տանում էր ուղիղ դեպի անտառը. սպիտակները կրակ բաց արին և առաջ շարժվեցին: Սակայն սպիտակները գետինն պակեցին, կորցնելով մեկ սպանված և մեկ վիրավոր հետախուզյաների կրակից: Սկսվեց անկարգ հրաձգություն, նավաստիները, կրակելով խրամի միջով, սողալով անցան դեպի անտառը: Յեվ ահա հետախուզյաներից մեկին ծանր վիրավորեցին: Նա այլևս հեռու սողալ չեր կարող, Հետախուզյաներից մեկը սկսեց կապել վիրավոր ընկերոջ վերքը, իսկ մյուսը կրակելով պաշտպանվել մոտեցող սպիտակներից: Վիրավոր ընկերը տեսնելով, վոր քիչ փամփուռներ են մնացել, խնդրեց ընկերներին գնդակահարել իրեն

խել իրենք հեռանան: «Կմեռնենք բոլորս միասին և չենք թողնի մեզ յեղբորը», — պատասխանեցին նրանք:

Ամենակրիտիկական մոմենտին, լերբ մնացել եր միայն մի պահու- նակ փամփուշտ և ատրճանակը լցրած վեց փամփուշտով, լավեց միա- համուռ ռուսայի» ձայն: Այդ 2-րդ վաշտն եր՝ առաջից վազող ընկեր- Լեվաչևի հետ, վոր ներխուժեց գյուղը: Սպիտակները կարճատև դի- մադրությունից հետո փախան, թողնելով մեկ հրանոթ և լերթային խոհանոցներ: Մարտի ժամանակ սպանվեց ընկեր Լևաչևը:

Այդ հարվածից հետո սպիտակները կանգ առան Վյարեպելսոյում սակայն նավաստիները վողկորված Ուստ-Ռուդիցիի մոտ տարած հաղ- թությամբ և վոգեշնչված ներխուժած թշնամուռ Պետրոգրադից դուր- քշելու և ջախջախելու ցանկությամբ, կործանեցին սպիտակներին ի- բենց շեշտակի հարվածով:

Սպիտակները նահանջում ելին ամբողջ ճակատով:

Բալթիական նավատորմը համառ մարտ մղեց ինտերվենտներին դեմ զոչ միայն ցամաքում, այլև ծովում պահպանելով Պիտերին մո- տիկ ջրային մատույցները: Հունիսի յերկրորդ կեսից սկսած թշնամուռ սավառնակները համարյա ամեն ուր թոխչքեն, ելին կատարում կրոն- շաադտի վրա: «Գավրիիլ» և «Ազաբա» ակտնակիրները գրոհի յեն- թարկվեցին անգլիական «ՃԾ» սուզանավից, բայց վերջինս խորտակվեց նրանց կողմից: Հունիսի 18-ի գիշերը անգլիական կատերը, անցնելով մեր պահապան նավերի միջով, աննկատելի մոտեցավ «Ուկ» համա- նավին և նրա վրա տորպեդ արձակեց: Հածանավը խորտակվեց:

Հարկ լեղավ ամբողջ ժամանակ պատրաստ լինել, ամենափոքր անփութությունն անգամ աղետ եր սպառնում:

Յամբուրգը մեր զորամասերից զբավվիլուց հետո՝ հակառակորդու- առանձնահատուկ համառություն ցուցաբերեց. կրոնշաադտի նավա- հանգստում կանգնած մեր նավատորմը խորտակելու փորձերի մեջ: Սկսվեցին մռթ գիշերները: Ըստ յերևույթին, թշնամին վորոշեց հույց գրանից ել ոգավել: Ոգաստոսի 18-ին, մոտ ժամի 3 անց 45 ռուսային, ադում լավեց պրոպելլերների աղմուկը: Նավերին արվեց տագնապի- ադանշան: Շուտով լավեց այն ռումբերի պայթյունների խուլ հար- վածների ձայնը, վոր նետում եր հակառակորդը: Նավերի անձնակազ- մերը և մարտկոցի երի հրանոթային համրանքները կանգնեցին ծած- կառանների յետևը: Այդ ժամանակ, սավառնակներից բացվեց գնդացրու- լին կրակ լուսատու գնդակներով: Բաղմաթիվ լուսավոր աղեղներ ակո- սում ելին յերկինքը հրթիռների նման, Հանկարծ լավեցին հրետանական ձիգի բի ձայներ «Գավրիիլ» պահապան ակտնակրի վրայից, Այդ տեղի ունեցավ ժամի 4-ն անց 20 ռուսային: Պարզվեց, վոր «Գավրիիլ» կրա- կում եր թշնամուռ յերկու կատերների վրա: «Գավրիիլ» ակտնակիրը

Չրասուել յանելով նրանցից մեկը, սկսեց կրակ բանալ ևս յերկու կա-  
տերների վրա, վորոնք փորձում էին դուրս գալ նախահանգստից:  
Համարա միաժամանակ լավեցին տորպեդներէ պայթյունի ձայներու  
Ուղղակի մյուս նավերի նավաստիներէ աչքի առաջ թեքվոյ ու արագ  
Չրասուել յեղավ «Պամլատ Աղովա» վարժական նավը: Ճեղքվածք  
ստացալ նաև «Անգրեյ Պերվոզմանի» դժային նավը: Հարձակմանը  
մասնակցող անգլիական յոթ կատերներից խորտակվեց յերեքը: Մար-  
տից հետո «Գավրիիլը» գերի վերցրեց ջրի վրայից 9 անգլիացի, վո-  
րոնցից յերեքը սպա էին:

Բալթյան նավատորմի քաջարի նավաստիներէ գործողութիւնները  
բարձր գնահատականի արժանացան ընկեր Ստալինի կողմից:

«Ձի կարելի չվող շուն ել, — ասում եր նա, — վոր Բալթյան նավատորմը,  
վորը կործանված էր համարվում, վերածնվում է ամենաիրական կեր-  
պով: Այս բանը խոստովանում են վոչ միայն բարեկամները, այլև  
հակառակորդները: Նույնքան ուրախալի յե և այն, վոր ուսական  
սպայության խոցը — նրա ծախվածութիւնը — ամենից քիչ է վնասել  
նավատորմի հրամանատարական կազմին. այնպես վոր գանվեցին  
մարդիկ, վորոնք ի պատիվ իրենց, ավելի բարձր գնահատեցին Ռու-  
սաստանի արժանապատուութիւնն ու անկախութիւնը, քան անգլի-  
ական վոսկին: Ել ավելի մխիթարական է այն, վոր Բալթյան նավա-  
տորմի նավաստիները կրկին գտան իրար և իրենց սխրագործութիւն-  
ներով վերակենդանացրին ուսական հեղափոխական նավատորմի լա-  
վազուէն տրադիցիաները: Առանց այդ պայմանների Պետրոգրադը  
պաշտպանված չէր լինի ամենավտանգավոր անակնկալներէ՝ ծովի  
կողմից»:

Կարմիր Պիտերի համար մղած նավաստիներէ հերոսական պայ-  
քարը պայծառորեն արտացոլված է «Մենք կըոնշտադտից ենք» և  
«Բալթիկցիներ» հիանալի կինոնկարներում:

### ԴԵՊԻ ՀԱՐՁԱԿՈՒՄ ԱՄԲՈՂՁ ԶԱԿԱՏՈՎ

Կովաշի գետի գծի վրա Առափնյա իմրավորման դուրս գալուց  
հետո, հունիսի 21-ին մեր զորամասերն անցան գետը և մի քանի ուր  
տևող կռիվներից հետո գրավեցին Դոլգովոն, Լուժկին, Պետրովիցին,  
Դյորիցին: Ձախ թևում կուրսանտների ջոկատը համառ կռիվներից  
հետո վերցրեց Տերենտևովոն և Ստաբոզիորյեն, վորից հետո մեր զոր-  
քերն առաջ շարժվեցին մինչև Վորոնինո, Մարաինովո, Սավլոյին, Ս.  
Բուրյա, Ն. Դորրյանիցի: Հակառակորդը փորձեց հուկանաբձակման  
անցնել և վերադարձնել այս անգամ իր կորցրածը, բայց հաջողու-  
թիւն չունեցաւ: Նույնիսկ կասկովո — Ռոզովիցի — Լիսինո — Չապոլյե

ճակատում, Բալթիական յերկաթուղու յերկայնքով հարձակման անցած սպիտակ գվարդիական Թալարլան ու Վոլինյան լավազույն զբնդերն այս անգամ չկարողացան ճեղքել մեր ճակատը և հարկադրված յեղան նահանջել:

Այդ որերին ընկեր Ստալինը գրում եր Լենինին.

«Մեր գործամասերում բեկումն սկսվել է: Մի շաբաթվա ընթացքում մեզանում չե չեղել մասնակի կամ խմբովին անցնելու վոչ մի դեպք: Դասալիքները վերադառնում են հազարներով: Հաճախակի յեն դարձել հակառակորդի բանակից մեր բանակն անցնելու դեպքերը: Մի շաբաթում մեր կողմն է անցել 400 մարդ, մեծ մասամբ զենքով: Բերեկ ցերեկով սկսվեց մեր հարձակումը: Թեև խոստացված համալրումը աակավին չի ստացվել, այնուամենայնիվ, ալլևս չեր կարելի կանգնած մնալ նույն գծի վրա, վորի վրա մենք կանգ եյինք առել— չափազանց մտա եր Պիտերին: Առայժմ հարձակումն ընթանում է հողողութլամբ. սպիտակները փախչում են. այսօր մենք վերցրինք Կերնովո—Վորոնինո—Սլեպինո—Կասկովո գիծը: Վերցրել ենք զերիներ, 2 կամ ավելի հրանոթ, ավտոմատներ, փամփուշտներ: Թշնամու նա վերն ալլևս չեն յերևում, ըստ յերևութին, վախենում են Վերասնայա Գորկայից», վորն այժմ լիովին մերն է: Շտապ կարգով ուղարկեցեք իմ անորինութլյան. տակ 2 միլիոն փամփուշտ»:

Ընկեր Ստալինն անձամբ ղեկավարում եր այդ հարձակման բացառությունը: Վոչ մի բան չեր վրիպում նրա սենտուն ուշադրութլյունից: Որինակ՝ յերբ Վերասնայա Գորկայի խոովութլյունը ճնշելուց հետո 7-րդ բանակի հրամանատարութլյունը հրաման ավեց կուրսանաների ջոկատին ճակատից վերադառնալու մասին, ընկեր Ստալինը առաջինն եր, վոր դրանում նկատեց այն վտանգավոր սխալը, վոր հենց սկզբում թուլացնում եր մեր զորքերի հարձակման հաջող դարգացումը: Այդ առթիվ նա իսկույն ևեթ հեռագրեց.

«Բանակի հրամանատարի հրամանը՝ կուրսանաներին յետ ուղարկելու մասին, գտնում եմ անտեղի, զործի համար վնասակար ստորակետ այդ հրամանը կատարման յենթակա չե վերջակետ Կոմիսար Լեպսեյին հայտարարում եմ նկատողութլյուն հեղափոխական զգոնութլյան բացակայութլյան համար 230»:

Պաշտպանութլյան խորհրդի լիաւորութլյամբ Ստալինն:

Այս հեռագիրը ճակատի գործողութլյուններն ընկեր Ստալինի կողմից կոնկրետ ղեկավարելու բազմաթիվ որինակներից մեկն է: Բացի դրանից, այդ հեռագիրը ցույց է տալիս, թե ընկեր Ստալինը ինչպիսի խոշոր նշանակութլյուն եր տալիս ղինվորական կոմիսարի դերին: Բուշկիկյան զգոնութլյան սուր սրած ղենք, մշտական զգուշութլյուն դեպի թշնամու դավերը, անսահման նվիրվածութլյուն և սեր դեպի իր հայ-

ընդհանր, սերտ կապ մասսաների հետ, մշտական պատրաստակամություն իր բոլոր ուժերը նվիրելու, իսկ յեթե հարկավոր լինի, նվիրելու նաև իր կյանքը կուսակցության գլխավոր գծի համար մղած պայքարում, — ահա ինչպիսի հասկումներ են եր դաստիարակում ընկեր Ստալինը, հոգատարութեամբ աճեցնելով խորհրդային իշխանության համար մարտնչողների հիանալի կազմեր:

Մեր հարձակումը շուտով ծավալվեց 7-րդ բանակի ամբողջ ճակատով մեկ: Հյուսիսային խմբավորման զորամասերը, հաղթահարելով սպիտակ գվարդիականների կատաղի դիմադրությունը, հուլիսի 5-ի յերեկոյան դուրս յեկան Միստա—Պակինո—Կոպորյե—Մակլակովա—Գոլուբովիցի—Բեգուշիցի—Կանարչինա—Ռոնկովցի—Չերեպովիցի գծի վրա: Մեր զորամասերը, հարձակվելով Բալթիական յերկաթուղագծի յիրկայնքով, նույն օրը համառ կռից հետո գրավեցին Վոլոսովո կայարանը: Սպիտակ գվարդիականները նահանջելիս պայթեցրին կայարանի շենքերը: Այդ մարտերով հաջողությունը հուսալիտրեն ամբաստանող մեր զորամասերի սգաին:

Նահանջի մասին ավել մոտ վոչ մոտ շեր մտածում,

Հուլիս ամսին մեր հարձակումը շարունակվեց ծավալվելու Այդ առթիվ ընկեր Ստալինը գրում էր «Պետրոգրադական պրավդայում».  
«Սպիտակ ֆինները Ուոնեցի մոտ, ձգտելով գրավել Լոգեյնոյե Պոլեն, յետ են մղված և քշված դեպի Ֆինլանդիայի սահմանները: Պետրոգրավոսկից մի քանի վերստի վրա կանգնած հակառակորդի Պետրոգրավոսկի խմբավորումն այժմ արագաթափ նահանջում է մեր զորամասերի շեշտակի հարձակման տակ, վորոնք անցել են այդ խմբավորման թիկունքը: Հակառակորդի Պսկովի խմբավորումը ձեռքից բաց թողեց նախաձեռնությունը՝ կանգ առնելով միայն մի տեղում, իսկ տեղատեղ նույնիսկ նահանջելով: Ինչ վերաբերում է հակառակորդի Նարվայի խմբավորմանը, վորն ամենից ակտիվն է, վոչ միայն չհասավ իր նպատակին, այլ ընդհակառակը, նահանջում է առանց կանգ առնելու մեր զորքերի շեշտակի հարձակման տակ, քայքայվելով ու հետզհետե նվազելով Կարմիր Բանակի հարվածների տակ, դեպի Յամբուրգ տանող ճանապարհների վրա: Այդպիսով պարզվեց, վոր վաղաժամ էլին Անտանտի ճիշերը հաղթություն մասին: Չարդարացան Գուչկովի և Յուզենիչի ակնկալությունները...»

Ռոձյանկովի և Յուզենիչի դժբախտությունն այն է, վոր նրանց չի բավականացնում վոչ տարածությունը, վոչ մարդկային նյութը, վոչ հացը: Ֆինլանդիան ու Նարվանդիան, իհարկե, վորոշ բազա կարող են լինել ռուսական ռազմազերիներից սպիտակ գվարդիական զորամասեր կազմակերպելու համար, սակայն նախ՝ վոր այդ ռազմագերիները սպիտակ գվարդիական զորամասերի համար չեն կարող լինել

բազմաթիւ և միանգամայն հուսալի մատերիալ լերկրորդ՝ հենց իրա-  
գրութիւնը Ֆինլանդիայում և Յատլանդիայում, նկատի ունենալով  
այնտեղ զարգացող հեղափոխական խմորումը, բարեհաջող պայմաններ  
չի ներկայացնում սպիտակ գվարդիական զորամասեր կազմակերպելու  
համար. յերրորդ՝ կամաց-կամաց և սխտեմատիկ կըճատվում և Ռո-  
ձյանկոյի և Բալախովիչի զրազմած տերիտորիան (ընդամենը մոտ յերկու  
գավառ) և Խերսոնսկի Վոլախո-տրեմտյան բանակիչ համար, յեթե  
ընդհանրապես վիճակված և նրան ստեղծվել, շուտով տեղ չի ունենա  
բացառապէս և մանյովրելու Վորովնեայի, պեսք և խոստովանել  
այդ, վոչ Ֆինլանդիան, վոչ Յոտոնիան, առայժմ դոնե Ռոձյանկո-  
Բալախովիչ—Յուդենիչի համար չեն ներկայացնում Վերանց սեփական  
տերիտորիան: Բանակ առանց թիկունքի— այսպիսին և Վոլախո-  
տրեմտյան բանակը: Ի՞նչ խոսք, վոր այդպիսի բանակը չի կարող  
յերկար ապրել, յեթե, իհարկե, դեպքերի շրթայի մեջ չներխուժի վորեւե-  
նոր, լուրջ, հակառակորդի համար բարենպաստ՝ միջազգային բնութիւն  
հանգամանք, վորի վրա, բոլոր տվյալներով, հակառակորդը հույս դնե-  
լու վոչ մի հիմք չունի:

Կարմիր բանակը պեսք և հաղթանակի Պետրոգրոդի տակ:

#### ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԶԱՆՁԱՆՈՒՄԸ 1919 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԸ

Ոգոստոսի սկզբներին ճակատի դիժը հետզհետե մոտենում եր  
Յամբուրգին, շնայած վոր սպիտակները բազմիցս կատաղի փորձե-  
արին՝ մեր ձեռքից նախաձեռնութիւնը խլելու և հարձակման անցնե-  
լու Ոգոստոսի 4-ին 48-րդ հրաձգային գունդը և կուբանտները ջո-  
կատը մարտ մղելով անցան Սուկա գետի ճահճային հովիտը և տիրե-  
ցին Զապոլյի և Ալեքսեյեվկա գյուղերը, իսկ 48-րդ հրաձգային գունդը  
գրավեց Կերստովոն և Կիլլին (սխեմա 9):

Մեր զորամասերն առանձնապես գծվարութեան հանդիպեցին Կիլ-  
լի մոտ, Սկզբում 48-րդ հրաձգային գնդի հարձակումն այդ գյուղը  
վրա յետ մղվեց սպիտակ գվարդիականների հրացանա-գնդացրային  
ուժեղ կրակով, վորոնք ամբացել եյին այդ գյուղի մատուցներում  
Գնդի ստորաբաժանումները յետ քաշվեցին՝ մարտադաշտում թողնելով  
սպանվածներ և վիրավորներ: Սակայն այդ ժամանակավոր անհաջո-  
ղութիւնն էր, Հրամանատարներն ու կոմունիստները վերականգնեցին  
կարգը գետին պռակած զորաշրթանների մեջ, Վաշտի հրամանատար  
ընկ. Կալինինը հակառակորդի կրակի տակ իր յետակից զեպի նոր հար-  
ձակում տարավ մարտիկներին, Մարտիկ-կոմունիստներ Լոշկինն ու  
Քոզգանովը կարմիր բանակայինների խմբակով դարանում հայտա-  
բերեցին սպիտակների դաշունային գնդացիը, անցնելով նրա թիկուն-



տական պատրաստութեան բերելով գնդացիքը, խաչոր կորուստներ պատահանց սպիտակ գվարդիականներին, յետ մղելով նրանց հակազդողնայդ գյուղի վրա:

Չնայած սպիտակ գվարդիականներին բոլոր ջանքերին, նրանց չհաջողվեց կանգնեցնել մեր հարձակումը, Միաժամանակ 154-րդ, 156-րդ և 158-րդ գնդերի մասերը, 46-րդ հրաձգային գնդի հետ միասին գրավեցին Լիտվիզնան, Լյալիցին, Ուոլոյեն, Ուշչևիցին, իսկ 155-րդ և 157-րդ հրաձգային գնդերը դուրս յեկան Պոտոնիցիի դժի վրա և սկսեցին հարձակվել Կոլոտիցիի և Մոլոսկովիցի կայարանի վրա. Մեր հեծելազորը, ոգտվելով սպիտակների նահանջից, կուրսանտները վաշտի հետ միասին Ուոլոյեյից շարժվեց դեպի Տիկոպիս կիսակայարանը և գրավեց այն: Այդ ժամանակ 2-րդ հրաձգային դիվիզիայի ձախ թևում 16-րդ և 17-րդ հրաձգային գնդերը հարկադարեցին սպիտակ գվարդիականներին թողնել Ուստյեն, Գանկովկան և Ռոդեֆին:

Հետևյալ որը, ոգոստոսի 5-ին, 46-րդ և 48-րդ հրաձգային գնդերը, նեղելով Թշնամուն, կուրսանտների ջոկատի հետ միասին դուրս յեկան Լուգա գետի մոտ և ներխուժեցին Յամբուրգ: Սպիտակները հանդիպեցին նրանց հակազդողով, մոտ 600 սվինի կազմով, վորի մեջ մտնում էին Տուլայի ջոկատը և ծովային վաշտը: Տեղի ունեցավ փոռոցային մարտ: Այդ մարտի յեղքը վորոշեցին մեր զրահապատները, վորոնք ընթանալով կրակ բաց արին սպիտակ գվարդիականներին վրա: Սպիտակ գվարդիականների մի մասը՝ փախուստի մասնվեց, իսկ մյուս մասը շտապով նահանջեց Լուգա գետի մյուս կողմը: Ընդվորում ծովային վաշտը համարյա ամբողջովին վոչնչացվեց:

Այսպես գրավվեց Յամբուրգը: Մեր զորամասերը գրավեցին Լուգա գետի աջ ափը, գետի հոսանքով դեպի վեր՝ մինչև Սերեֆինոն, իսկ դեպի ներքև՝ մինչև Ժարինոն. 155-րդ և 157-րդ հրաձգային գնդերը գրավեցին Մոլոսկովիցի կայարանը, Կոլոտիցի, Սիբիկովցի և Յարլունիցի գյուղերը. նավաստիների ջոկատն ու 168-րդ հրաձգային գունդը վերցրին Վիյամարն կայարանը և Մանուլովս ու Սերգենյե Սելո գյուղերը (սխեմա 9):

Կուրսանտների ջոկատը, հետապնդելով Լուգա գետի մյուս կողմը նահանջած հակառակորդին, անցավ գետը և գրավեց Նովոպյատնիցկոյե գյուղը:

Ճակատի գիծը հիմնականում հաստավեց Լուգա գետի յերկայնքի վրա և հետագայում չփոփոխվեց մինչև հոկտեմբեր ամիսը:

Սպիտակներն իրենց նահանջի ժամանակ զգալի ավերումներ կատարեցին Յամբուրգում: Նրանք, նահանջելով գետի մյուս կողմը և պայթեցնելով յերկաթուղային կամուրջը, շարունակեցին հրետակոծել քաղաքը: Իրանից խիստ վնասվեց սալգործկոմի յերեք հարկանի շեն-

քը: Մի քանի տեղ հրդեհ ծագեց: Քանդվեցին քաղաքային ելեկտրա-  
կայանը և փոստի շենքը:

Քաղաքը վերցնելու ժամանակ մարտում ընկած մարտիկներին  
մորմինները և դանադան տեղերում գտնված սպիտակ գվարդիական  
տեսարի բազմաթիվ զոհերը թաղվեցին քաղաքի կենտրոնում, Կարլ  
Մարքսի անվան պողոտայի պուրակում: Տեղական բնակչության  
խնդրանք իսկուհի ևեթ կտրատվեցին պուրակը շրջապատող ծառերը,  
վորոնց վրա սպիտակ գվարդիականները կախել էին իրենց զոհերին:

\* \*

Յամբուրգից հետո շուտով ազատագրվեց նաև Պսկովը:

Հունիս և հուլիս ամիսներին կռիվները Պսկովի ճակատամասում  
ընթանում էին փոփոխակի հաջողությամբ: Մեր զորամասերի հաճա-  
խակի փորձերը՝ հարձակման անցնելու և յետ վերցնելու Պսկովը, վեր-  
ջանում էին անհաջողությամբ: Կեպ գետի անցարանները զրավե-  
լու համար մղած մարտերն աչքի էին ընկնում իրենց հատուկ համա-  
ությամբ: Գետանցները մի քանի անգամ ձեռքեծեռք անցան: Այդ  
մարտերին 10-րդ հրաձգային դիվիզիայի հետ մասնակցում էր նաև  
Պսկովի կոմունիստական գումարտակը:

Ոգոստոսի կեսերին 10-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը  
զրավեցին Բորոտնոն, Լեժնոն, Վերետյան, Տերերուշինոն, Ջակլինյեն,  
Ն. Բլյանիցին, Պոլյանան: Այդ նույն ժամանակ Նստոնական բրիգա-  
դը և 11-րդ հրաձգային դիվիզիան իրենց ձեռքում ելին պահում Պլո-  
կան, Յերշին, Անխուկինոն, Գորոնչարովոն, Գրիբուլին (սխեմա 10),

Մեր զորամասերը, ոգտագործելով 11-րդ հրաձգային դիվիզիայի  
ձախ թևի ձեռնտու դասավորությունը Պսկովի նկատմամբ, ոգոստոսի  
15-ին յուսնդուն հարձակման անցան Գրիբուլիի ուսյոնից դեպի Իդ-  
բորսկ և Նովոկրբորսկի ուղղությամբ, ալըպիսով իսկ սպառնալով Նս-  
տոնիայից կտրել Պսկովի ուսյոնում գտնված սպիտակ գվարդիական  
և սպիտակ եստոնական զորամասերին: Հաշիվը ճիշտ դուրս յեկավ: Յերը  
մեր զորամասերն ոգոստոսի 19-ին առաջ խողացին դեպի Շեպեց—Շա-  
խինցի—Վոլկովա—Ավդալետ գիծը, սպիտակ գվարդիականները հար-  
կադրված յեղան արագ կերպով այստեղ փոխադրել 2-րդ սպիտակ ես-  
տոնական դիվիզիայի այն զորամասերը, վորոնք մինչ այդ գործում  
էին Վելիկայա գետի աջ ափին: Այդ թուլացրեց սպիտակների այն  
ուժերին, վորոնք պաշտպանում էին Պսկովը հարավ-արևելքից: 11-րդ  
հրաձգային դիվիզիայի հավաքական բրիգադը և Նստոնական բրիգադը  
ոգտագործեցին այդ բարենպաստ պարագան ու հարձակման անցան:  
Ոգոստոսի 22-ին նրանք մարտ մղելով հասան Ստանկի—Ռյուխա—  
Բուդնիկ—Գորկա—Վեդրա գծին:

10-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը նույնպես հարձակման տնցան և հասան Կեպ դեռին՝ մարտեր մղելով այդ գետի անցարաններին համար Պոզլիպլե—Յարլոնեց ճակատամասում:


Այդ ժամանակ եստոնական և համահավաք բրիգադներն արդեն հասել էին Ջերեխա դեռին, իսկ 83-րդ և 2-րդ Լատիշական զնդերին նույնիսկ հաջողվեց անցնել Վելիկայա գետի ձախ ափը և գրավել Գոլոլեկան և Պանևան, վերցնելով 20 զերի և 3 գնդացի: 11-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը նույնպես առաջ շարժվեցին և գրավեցին Նեկլոյը, Շախինցին և Վոլկովան:

Սպիտակ գվարդիականները, տեսնելով, վոր անխուսափելիորեն պետք է հանձնել Պսկովը, քաղաքից հանեցին բոլոր կալանավորներին և քշեցին նրանց դեպի Գոպլ: «Մեզ քշեցին դեպի Յելիզարևսկի վանքը,— պատմում էր հետո կալանավորներից մեկը:—Յուցակով գուրս կանչեցին 11 հոգի և կախեցին անտառում, ջրաղացի լեռնում, հայտարարելով, վոր բոլոր կախվածները հրամանատարներ և կոմունիստներ են... Գոպլ քշեցին լեռք բանտի կալանավորներին. մենախցերում նստած էին 20-ական մարդ: Կերակրում էին շատ վատ՝ որական տալիս էին քառորդ ֆունտ հաց, ապուր չկար: Առավոտյան տալիս էին յեռացրած ջուր և աղ: Տարածված էին քոսն ու լնդախոր: Կալանավորների մեջ էին յերկու յեղբայրներ Սևերովները, Ողերովը, Մինուտինը, Ստեպանովը, Սեմյոնովը՝ մի 50 տարեկան գյուղացի: Սրանց բոլորին կախեցին սեպտեմբերի 3-ին Գրոմովյան անտառում, Սկամյա գյուղից յերկու կիլոմետրի վրա»...

Ոգոստոսի 26-ին, վաղ առավոտյան մեր զորամասերը մտնեցան Պսկովին հարավից, կարելով սպիտակներին՝ Դվինսկի և Ռիգայի խճուղիներով նահանջելու ճանապարհները ժյուլա գետի մյուս կողմում: Նրանց մի մասը հեռացավ լճով՝ շոգենավերով: Առաջինը քաղաք մտան 88-րդ և 87-րդ հրաձգային զնդերի մասերը: Սրանց յետևից, Սալաչի մոտ Կեպ գետի անցարաններին համար մղած տաք կռիվներից հետո, մտնեցան 85-րդ և 88-րդ հրաձգային զնդերը:

Քաղաք վերադարձան և 85-րդ հրաձգային զնդի մեջ մտած Պսկովի կոմունիստական գումարտակի Ֆնացորդները, վոր յերեք ամիս շարունակ մարանջում էր սպիտակ գվարդիականների դեմ:


Յամբուրդի և Պսկովի գրավումով վերջ էր արված սպիտակ գվարդիականների կողմից Պետրոգրադի վրա կատարվող հարձակմանը: Սոցիալիստական Հայրենիքի համար մղած պայքարի պատմության մեջ շատ պանծալի էջեր գրեցին Պիտերի բանավորները, Բալթիկի նավաստիները, կուսակցութան կողմից ուղարկված կոմունիստները, մեծ Ստալինի ղեկավարութամբ պաշտպանելով Կարմիր Պիտերը հակահեղափոխությունից:



Մանկա 10. Գեղիկի կամուրջից հեռավորությունը:

Պետրոգրադի ճակատում ընկեր Ստալինի մատուցած պատմական ծառայությունները նշվեցին նրանով, վոր նա պարզեցրեց Կարմիր գրոշի շքանշանով, Ահա այդ պարզեցուման մասին լեզած վորոշման տեքստը.

«Մահացու վտանգի բոլորին, լերը Խորհրդային իշխանությունը, չորս կողմից շրջապատված թշնամիների նեղ ողակով, յետ եր մղում թշնամու հարվածները, այն բոլորին, յերբ 1919 թ. հուլիսին Բանվորա-Գյուղացիական Հեղափոխութեան թշնամիները մոտենում ելին Կրասնայա Գորկային, Խորհրդային Ռուսաստանի համար այդ ծանր ժա-



Կեպ դեպ—1919 թ. ոգոստոսին շեռանցների համար մղած մարտերի տեղամասը:

մին, Համառուսական Կենտգործկոմի նախագահութեան կողմից մարտական պոստում նշանակված Իոսիֆ Վխատրիոնովիչ Ստալինն իր լեռանդով ու անգուլ աշխատանքով կարողացավ միաձուլել Կարմիր Բանակի տատանված շարքերը, Ինքը գտնվելով մարտական գծի ուսյոնում, նա մարտական կրակի տակ, իր անձնական որինակով վոգեշնչում եր Խորհրդային Հանրապետութեան համար մարտնչողների շարքերը, Պետրոգրադի պաշտպանութեան գործում նրա մատուցած բոլոր ծառայությունները հավերժացնելու համար, իսկպես և հետագայում Հարավային ճակատում նրա կատարած անձնվեր աշխատանքը հավերժացնելու համար, Համառուսական Կենտգործկոմը վորոշեց Ի. Վ. Ստալինին պարգևատրել Կարմիր դրոշի շքանշանով:

ՅՈՒԴԵՆԻՁԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԸ

Աշուհը յեկավ:

Մտայլ ու դորը յերկինքը ցածր կախվել էր Պրիբալթիկի մերկացած անտառների վրա: Ամբողջ ռերբով ձազում էր մանր անձրևը: Զուրբ լցվել էր փոսերն ու ցածր լեռները. անտառային մամուլատեղանքերը ձձեկ էյին ջուրը սպունգի նման, կպչուն ցեխով էյին ծածկվել բանուկ ճանապարհները: Վաղուց չէր յեղել այդպիսի «հրատած» աշուհ:

Յամբուրզը համարյա յերկու ամիս սպրում էր ճակատամերձ քաղաքի կյանքով: Գիտի վրա, առանձնապես մութ ու անլուսին գիշերներին, հաճախ էր բռնկվում հրաձգությունը սպիտակ զվարդիականների հետ, վորոնք դրավել էյին հակառակ ափը: Բազմիցս քաղաքը յինթարկվեց հրեատանու շրտոնելային արկակոծմանը: Փողոցներում շարժումը յերեկոներին շուտ էր դադարում: Լուգա գետի վերին ու ստորին հոսանքով պահապան էյին կանգնած գյուղերի վրա բաժանված մեր պահապան ուղեկալները:

Ճակատային անհանգիստ կյանքը հաճախակի հրաձգություններով սովորական էր դարձել նույնիսկ քաղքենիների համար: Հետախուզությունն արդեն դադարել էր հետաքրքրվել հակառակորդի գոյությամբ, և մարտական շփումն արդեն նրա հետ համարյա մոռացված էր: Զորամասերի զգոնությունը բխցավ նաև նրանով, վոր որը-որին սպասում էյին հաշտության պայմանագիր կնքելուն ծստոնիայի հետ:

Մեպտեմբերի 28-ին Յուդենիչը դեմոնստրատիվ հարված հասցրեց Պսկովի ճակատամասին և ճեղքեց մեր ճակատը: 7-րդ բանակի հրամանատարությունը սթափվեց և Յամբուրգի ճակատից ճեղքվածքի վայրն ուղարկեց բանակային բոլոր ռեզերվները: Յուդենիչն էլ հենց դրան էր ձգտում:

Աշնանային մի մութ գիշեր, նա Մուրավիցսոյի մոտ հանկարծակի անցավ Լուգա գետը և հոկտեմբերի 11-ի առավոտյան տիրեց Յամբուրգին: Հարվածն այնքան անակնկալ էր, վոր մեր զորամասերը կորցրին կապն իրար միջև և սկսեցին նահանջել արևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով:

Մեր նահանջը Յամբուրգից յերկաթուղագծի յերկայնքով պաշտպանում էր դրահազնացքը: Նա իր կրակով պաշտպանվում էր սպիտակ զվարդիականներից և կանգ առավ Տիկուպիս կիսակայարանի մոտ: Նրա դիպուկ կրակը կասեցրեց հակառակորդի դեպի առաջ անց-

Ներու բոլոր փորձերը Այն ժամանակ սպիտակները Յամբուրգում վերցրած շոգեքարշերից մեկի մեքենավարին դուրս հանեցին շոգեքարշից, 19րդի գոլորշիով, բացեցին սեզուլլատորը և շոյեքարշը լիքն թաց բաց թողին մեր զրահագնացքի վրա: Մարտիկները չգիտեցին: Նրանք հրանոթով դիպուկ կրակ բաց արին արագասլաց շոգեքարշի վրա և հենց առաջին 3-4 ձիգերից արկերն ընկան շոգեքարշի վրա: Արկերից մեկը դիպավ կաթսային ու ծակեց այն: Գոլորշին դուրս յեկավ, և շոգեքարշը կանգ առավ:

Ոգտվելով մեր մի քանի շտաբների անգործութունից, վորտեղ կրկին ներսողոսկել էին դավաճանները նախկին սպաների թվից, սպիտակները լայնորեն սկսեցին շրջանցել ու թևանցել մեր նահանջող զորքերին:

Հոկտեմբերի 15-ին արդեն նրանք վերցրին Պլուսա կայարանը, Սերբերյանկան և Լուզա քաղաքը:

Սպիտակ գվարդիականներն ամենուրեք վայրագորեն դատաստան էին տեսնում տեղական բնակիչների հետ: Այսպես, որինակ, Մարուզի կալարանում (այժմ Կարմիր Մարուզի) տեղի ուսուցչուհուն ձերբակալեցին միայն այն պատճառով, զոր կասկածում էին, թե նա կոմունիստուհի լի: Նրան բռնաբարեցին և կախեցին: Այդ նույն կայարանում ձերբակալեցին 17 տարեկան Նինա Բոզդանովային: Սպիտակ սպան հրամայեց մտրակով նրան 25 հարված հասցնել նրա համազույացիների ներկայությամբ: Նինա Բոզդանովան խելախորեն հայտարարեց սպիտակ գվարդիականներին. «Յեսս ձեզ թույլ չեմ տա, փողովդդի խաբերաններ ու դահիճներ, զոր դուք ինձ ծաղրի յենթարկեք: Ավելի լավ է՝ կախեք ինձ: Մեկ կոմունիստուհի կդադարի աշխարհից, բայց կոմունիզմի գաղափարները դուք չեք սպանի»:

Նինա Բոզդանովային անմիջապես կախեցին:

Մեր զորամասերի նահանջի ժամանակ շատ հրամանատարներ, կարմիր բանակայիններ ու քաղաշխատողներ բարձր անձնագրության արինակներ ցույց տվին, ձգտելով կանգնեցնել թշնամու առաջխաղացումը: Նրանք հաճախ իրենց կյանքն էին դոնում, վորպեսզի կատարեն իրենց պարտքը:

Կիպենով նահանջելու ժամանակ յերկու գնդակով վիրավորվեց սապյոր ընկ. Ֆյոդորովը: Չնայած վիրավորված լինելուն, յես չեք Ֆուսկ իր ընկերներից: Նա ընկնում էր, բարձրանում ու կրկին շարունակում իր ճանապարհը: Ծանապարհին տեսնելով վայր ընկած հրացան, նա վերցրեց այն և տարավ իր հետ: Հետագայում նա ասում էր. «Ենչպես կարող եի յես թողնել հրացանը: ԶԳ՝ զոր նա յե, զոր պաշտպանում է մեր իշխանութունը»: Այդ ժամանակ նահանջում եր պարետային խմբի կարմիր բանակային ընկ. Մարկելիչը: Սպիտակներ

բից պաշտպանվելին նա վերավորվեց վոսքից: Մանր եր վերքը. ընկ-  
Մարկելիը քայլել չեր կարող. չցանկանալով գերի ընկնել սպիտակ-  
նների ձեռքը, ինքնասպանութիւն գործեց:

Կիողենի տակ կովի ժամանակ զոհվեց նաև դիվիզիայի կոմիսար  
ընկ. Մազինը: Նահանջի դժնդակ որերին նա վոչ մի բուպե հանդիստ  
չեր առնում, անդադար շրջագայում եր զորամասերը, վոգևորում եր  
կարմիր բանակայիններին, ոգնում եր հրամկազմին, հրահանգում  
եր քաղաշխատողներին: Արհամարհելով վտանգը, նա Կիպենում Թաօց  
մինչև վերջին բուպեն, սպիտակների ձեռքն ընկավ և գնդակահար-  
վեց նրանց կողմից:

Մշինակայա կայարանում քաղաշխատող ընկ. Գրուշինը, գերի  
ընկնելով, հրաժարվեց ցուցմունքներ տալ և հայտարարեց, վոր ինքը  
կոմունիստ ե, և վոր ժողովրդի շահերն. իր համար բարձր են ամեն  
բանից:



Վ. Ո. Մազին:

բան, բայց վոչ մի բան չիմանալով նրանից, գնդակահարեցին:

Սպիտակ դավադրականները հասան Կոզաշի գետի մոտ, նույ-  
նանուն գուղին կից: Գնդացրային դասակի հրամանատար ընկ.  
Իլինը, տեսնելով սպիտակներին, սայլապանի ոգնութամբ սայլից  
իջեցրեց գնդացիրը, ինքը պառկեց նրա յտևում և կրակ բացեց սպի-  
տակների վրա: Ընկ. Իլինը յերկու ժամ շարունակ կասեցում եր  
թշնամու հարձակումը: Սպիտակները սպիտակար արին նրան, յերբ  
նա ծախսեց բոլոր փամփուշտները: Այդ ժամանակ վրա հասան մեր

Ընկ. Գրուշինին կախեցին  
յերկաթուղային հողաթմրի մոտ,  
հեռագրասյունից: Մահից առաջ  
նա ասաց իր դահիճներին. «Յես  
իմ ամբողջ կյանքում յեղել եմ  
ազնիվ աշխատող և չեմ կարող  
ստոր լինել: Յես ուրախութամբ  
եմ մեռնում հանուն այն զաղա-  
փարի, վորին միշտ ծառայել եմ»:

Բեգունիցիում սպիտակ զը-  
վարդիական շտաբը բերին ճա-  
կատում գերի ընկած մի մար-  
տիկ-կնոջ: Հարցաքննության ժա-  
մանակ նա ուղղակի հայտարա-  
րեց, վոր ինքը կոմունիստունի  
յե և հրաժարվում ե վորեւ տե-  
ղեկութիւն տալ: Յերեք որ շա-  
րունակ հարցաքննում եյին նը-



յարանին... Իրանք արդեն կարմիր Պետրոզբաղէ մոտակա արվարձաններն ելին:

Պիտերի վրա կախովեց նոր սպառնալիք, վորը պակաս սարսափելի չէր, քան ամառվա սպառնալիքը: Պիտերի վրա՞ այդ հարձակումը հանդիսանում էր Խորհրդային հանրապետութեան վրա Անտանտի նոր արշավի մի բաղկացուցիչ մասը:

Համաշխարհային բուրժուազիան հաշտվել չէր կարող տաջին արշավի անհաջողութեան հետ. նա կողմակերպեց հակախորհրդային յերկրորդ արշավը, ձգտելով արյան մեջ խեղդել բանվորներին և գյուղացիներին Խորհուրդների լերկիրը: Նորանոր թնդանոթներ, տանկեր, թեաներով հանդերձանք ու զինասարք և այլն ափ հանվեցին նավահանդիսատներում սպիտակ գվարդիականների համար: Ծատոնիան հաշտութեան մասին բանակցութեաններ ելլ սկսել Խորհրդային հանրապետութեան հետ, բայց Անտանտի ճնշման տակ ձգձգեց իր պատասխանը խորհրդային առաջարկութեաններին:

Անտանտի պլանի համաձայն, Մոսկովայի ուղղութեան վրա զբլխավոր հարվածը պետք է հասցնէր Դենիկինը: Յուզենիչը պետք է ոժանդակ հարված հասցնէր և վերջներ Պետրոզբաղը: Այդ արշավի գլխավոր կողմակերպիչներից մեկի, Անգլիայի ռազմական մինիստր Չեքլիլի հաշիվներով, Պետրոզբաղը պետք է վերջվէր սեպտեմբեր ամսին, իսկ Մոսկովան՝ դեկտեմբերին:

Ճիշտ է, Յուզենիչը թեև ուշ սկսեց իր հարձակումը, բայց նա լեռանդով իր սխալն ուղղեց, կատարելով իր տերերի կամքը:

Կապիտալիստական բոլոր յերկրներին ռազիոնայաններն ազմուկ քարձրացրին Յուզենիչի «անորինակ հաղթանակների մասին»։ Թերթերն ու ժուռնալները դետեղում էին նրա նկարը: Կատաղի սպեկուլյացիա սկսվեց սպիտակ գեներալի արշավի շուրջը... «Յիննական ծոնազան սպեկուլյանտները,—գրում է Վ. Գոռնը, սպիտակների հյուսիս-արևմտյան կառավարութեան նախկին անդամը, իր հիշողութեաններում:—Նրանց տեսնելով, արեւոյնիցին և քաղցեանները: Իրենց կյանքում առևտրով չգրաղված մարդիկ սկսեցին զանազան ազրանքներ գնել, վորոնք կարող էին պետք զալ Պետրոզբաղում, վերադաճառում էին այդ ազրանքները յերկրորդ և յերրորդ անձանց: Սպեկուլյացիան բարձրացրեց գները նորմալից մի քանի տնդամ: Հիսինգֆորսից ու Ռեկից արդ տեղը վարակեց և Կոպենհագենի առևտրականներին:

Կառավարութեանն ամեն կողմից ձանձրացնում էին զանազան գործակալները, միջնորդները և ուղղակի շարքացակալները, վորոնք, իրարից առաջ բնկնելով, առաջարկում էին զանազան նախա-

գծեր, կոմբինացիաներ կամ ուղղակի առաջարկում եյին մթերքներու Ամենից ավելի անպատկանները, ընդդիմադրութիւն ստանալով, զարտուղի ճանապարհով գններալ Յուդիսիի մոտ եյին հասնում, ձգտելով անմիջապէս նրա հետ պայմանագիր կնքել մատակարարման վերաբերյալ և այլն»:

Մի խոսքով՝ կադիտալիստական պարագիտները, ամբողջ սպիտակ զվարդիական վահակը հրճվում եր կանխավայելելով Յուդիսիի շէ Հյուսիս-արևմտյան բանակի կողմից Պետրոգրադի շատազրավումը:

### Լենինի ԿոզՈՎ

Այդ ահարկու որբերին Վ. Ի. Լենինը մի կոչով դիմեց Պետրոգրադի բանվորներին և գյուղացիներին.

«Ընկերներ. հասել ե վճռական մոմենտը: Յարական գններալները մի անգամ ել ստացան մթերքներ ու ռազմական մատակարարում Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի կապիտալիստներից, մի անգամ ել կալվածատերերի վորդյակներէ բանդաների հետ փորձում են վերցնել Կարմիր Պիտերը: Թշնամին հարձակվեց այն ժամին, յերբ մենք հաշտութեան շուրջը բանակցութիւններ եյինք վարում մատչանդիայի հետ, նա հարձակվեց մեր կարմիր բանակայիններէ վրա, վորոնք հավատում եյին այդ բանակցութիւններին: Հարձակման այդ դավաճանական բնույթը մատամբ բացատրում ե թշնամու արտոյ հաջողութիւնները: Վերցված են Կրասնոյե Սելու, Գատչինան, Վերիցան, Դեպի Պիտերը կարված ե յերկու յերկաթուղագիծ: Թշնամին ձգտում ե կարել յերրորդ յերկաթուղագիծը—Նիկոլայեվյան յերկաթուղագիծը, և չորրորդը՝ Վորոգոյան յերկաթուղագիծը, վորպեսզի Պիտերը սովով վերցնի:

Ընկերներ, դուք բոլորդ դիտեք և տեսնում եք, թե ինչպիսի վիթխարի սպառնալիք ե կախված Պետրոգրադի վրա: Մի քանի օրում վճռվում ե Պետրոգրադի բախտը, վճռվում ե Ռուսաստանում Խորհրդային իշխանութեան ամբողջներից մեկի բախտը:

Յես հարկ չեմ համարում հիշեցնել Պետրոգրադի բանվորներին ու կարմիր բանակայիններին՝ նրանց պարտքի մասին: Համայն աշխարհի բուրժուազիայի դեմ մղած անորինակ իր դժվարութիւններով և անորինակ իր հաղթանակներով խորհրդային յերկամյա պայքարի ամբողջ պատմութիւնը մեզ ցույց տվեց Պիտերի բանվորների կողմից վոյ միայն պարտքի կատարման օրինակ, այլև վեհագոյն հերոսութեան, աշխարհում չտեսնված հեղափոխական խանդավառութեան և անձնփրութեան օրինակ:

Ընկերներ, վճռվում ե Պետրոգրադի բախտը: Թշնամին ձգտում ե մեզ հանկարծակիի բերել: Նրա ուժերը թույլ են, նույնիսկ աննշան. նա ուժեղ ե իր արագաշարժութեամբ, սպաների հանդդմութեամբ,

մատակարարման և սպառազինման տեխնիկայով, Մոս և ողնությունը Պիտերին: Մենք շարժեցինք ալդ ոգնությունը: Մենք շատ ավելի ուժեղ ենք թշնամուց: Մարտնչեցեք մինչև արյան վերջին կաթիլը, ընկերներ, կառնեցեք յուրաքանչյուր թիզ հողին. կայուն յեղեք մինչև վերջ. հաղթանակը հետու չի, Հաղթանակը մերը կլինի»:

Մանր փորձությունն առաջ բերեց վոչ թե վհատություն, այլ վիթխարի խանդավառություն քաղաք-գիղանտի ամբողջ աշխատավոր բնակչության մեջ. Բոլոր նրանք, ում համար մտախի եր ու թանգ Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխությունը, վոտքի յեղան մի մարդու պես, լկախացած թշնամուց նրան պաշտպանելու համար: Բողբիկներ Պիտերյան կազմակերպությունը ճակատ ուղարկեց իր լավագույն զավակներին, վորպես շարքային մարտիկներ, հրամանատարներ ու կոմիսարներ: Կուսակցության բաղձաթիվ անդամներ ճակատ ուղարկվեցին բանվորական մարտական շոկատների կազմում, վորոնք կազմակերպվեցին քաղաքում և նրա շրջակայքում: Բացի գրանից, Պետրոգրադում կազմակերպվեց և ճակատ ուղարկվեց յերկու կոմունիստական շոկատ:

Պետրոգրադից լես չմնացին Պետրոգրադի նահանգի տեղական կուսակցական կազմակերպությունները, վորոնք հոկտեմբերի 17-ից մինչև 22 ժամանակաշրջանում ճակատին տվին 1169 մարդ: Այդ թիվն առանձին նշանակութուն է ստանում, յեթե ուշադրության առնենք այն, վոր առ 5 սեպտեմբերի 1919 թ. Պետրոգրադի նահանգի կուսակցական կազմակերպություններում ընդամենը հաշվվում էր կուսակցության 2060 անդամ. ընդվորում անհրաժեշտ է հաշվի առնել, վոր այնպիսի կուսակցական կազմակերպությունների անդամները, ինչպես Յամբուրդինը, Լուդայինը և մյուսներինը, վորոնց տերիտորիաները գրավված էին սպիտակ զվարդիականների կողմից, արդեն Կարմիր բանակի շարքերն էին անցել դեռևս սպիտակների մտենալու ժամանակ:

Պետրոգրադի քաղաքային ուսյունների պատասխանատու կազմակերպիչների ժողովում, 1919 թվականի հոկտեմբերի 29-ին, տեղերից յեկած բոլոր զեկուցողները նշում էին, վոր կոմունիստները գլխովին մեկնել են ճակատն ու քաղաքի ներքին պաշտպանության ուսյունական շոկատները: Գործարաններում մնացել էին կուսակցականներ իրքը խմբեր, վորոնք բոլորովին պիտանի չէին դիվորական ծառայության համար իրենց առողջական դրության պատճառով:

Պետրոգրադը մենակ չմնաց այդ ծանր փորձությունների որերին: Հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 8-ը Պետրոգրադի ճակատան

1 Վ. Ի Լեճիճ, Յերկեր, հատ. XXIԿ, էջ 438:

յիկան Ռուսաստանի զանազան վարերից 704 կոմունիստ: Բացի դը-  
րանից, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Պետրոգրադ յիկավ Հան-  
րապետութեան Քաղաքական վարչութեան միջոցով ուղարկված կու-  
սակցութեան 668 անդամ:

Այդ պատասխանատու մոմենտին իրեն, վորպես բոլշևիկյան  
կուսակցութեան արժանավոր զավակ, ցույց տվեց նաև կոմիսրիտ-  
միութիւնը, Կոմյերիպմիութեան Պետրոգրադի կոմիտեն մեծ խան-  
դավառութեամբ տնցկացրեց 16 տարեկան և բարձր տարիքի կոմյե-  
րիտականներէ մորիլիզացիան: Մորիլիզացիան հենց առաջին 6 ժա-  
մուս ամից մոտ 500 կոմյերիտական և 150 կոմյերիտուէի:

Կոմյերիտականները, վորպես կանոն, մտնում եյին քաղաքում  
կազմակերպված շոկատներէ կազմի մեջ, Սակայն կային և ինքնու-  
րույն կոմյերիտական շոկատներ. որինակ՝ Նեայի քաղաքային ռայո-  
նի կոմյերիտական շոկատը, վորը դերազանցորեն մարտնչեց սոյի-  
տակ գվարդիականներէ դեմ Դետսկոյե Սելոյի մոտ. հեծանվորդներէ  
կոմյերիտական վաշտը, վորը մասնակցեց Կրասնոյե Սելոյի մոտ տե-  
ղի ունեցած ճակատամարտին և այլն:

Պիտերի կոմյերիտմիութեան որինակին հետեւեցին Դետսկոյե  
Սելոյի, Շլիսսելբուրգի, Զվանկայի, Կրոնշտադտի, Նովորադոգայի,  
Գաաչինայի, Սեստրորեցկի, Պետերգոֆի և մյուս վայրերի կոմյերի-  
տական կազմակերպութեանները, վորոնք իրենց ոգնութեանն ուղարկե-  
ցին Կարմիր Պիտերին: Այդ կազմակերպութեաններից Պետերգոֆի,  
Կրոնշտադտի և Կարլինի կազմակերպութեանները դեռեք տակ մը-  
տան լիակատար կազմով, Միստամանակ կոմյերիտական շոկատներ  
յիկան Վյատկայից, Մոսկվայից, Չերեպովեցից և այլ վայրերից:

Լենինի կոչին արձաւանքեցին հազարավոր բանվորներ: Մոսկ-  
վայի, Վիտեբսկի, Սմոլենսկի, Կոստրոմայի, Պենզայի, Վոլոգդայի,  
Վլադիմիրի, Վյատկայի, Յարոսլավլի պրովետարներն իրենց յեղաջ-  
րական ոգնութեանն ուղարկեցին Պիտերին:

Յուզենիչի դեմ մարտերում մասնակցած Շլիսսելբուրգի բան-  
վորներից մեկը պատմում ե. «Յերեկոյան ժամի 9-ին մեր գրծարա-  
նում լալեց շչակների տագնապով սուլոց, վոր բանվորներին արտա-  
կարգ ժողովի յեր հրավիրում: Բոլորն իմացան, վոր Պետրոգրադին  
վտանդ ե սպառնում: Յես չեմ հիշում այդպիսի մեծ ժողով՝ Շլիսսել-  
բուրգի վառոգային գործարանում իմ յեղած ժամանակ. ժողովում  
առաջինը յիւույթ ունեցավ բոլորի սիրելին՝ Քաղխորհրդի նախագահ  
ընկ. Չիկալովը: Նրա ճառը մի բոցավառ կոչ եր դէնքի, մարտի դի-  
մելու համար, Նա ինքը առաջին կամսլորներից մոկը յեղավ: Նրա-  
նից հետո, սկսեցին ցուցակագրովիլ բարձրագիլ բանվորներ, կազմե-  
լով մեծ հերթ, Այդ յերեկո ցույալսգրից 400 մարդ: Հետեւյալ որք

վաղ առավոտից սկսեցին դալ նոր կամավորներ: Յերեկը, ժամի յերկուսին ցուցակագրութունը տվեց 550 մարդ: Բոլորն ստացան զենք ու հանդերձանք, և հոկտեմբերի 17-ին դռնաբարտակը պատրաստ ուղարկվեց ճակատ»:

Պետրոգրադի և Պուլիովի խճուղիներով անվերջ հոսանքով դեպի ճակատ եյին շարժվում բանվորական բազմաքանակ շոկատները: Ամբողջ կալազորը, ներառյալ նաև միլիցիան, դաշտ եր դուրս բերված:

«Ճանապարհը հանկարծ կենդանացավ,—պատմում է Լիզովոյի մոտ Ուլյանովյան մանկական դպրոցի ուսուցչուհի ընկ. Մ. Վ. Միխայլովան,—ճանապարհների վրայով անցնող դռնակները, զնում եյին մարտկոցները, քայլում եյին դորքերը... Շատ բանվորներ գնացին: Նրանք դանազան տարազներ եյին հագած: Ջանազան ձևով եյին կրում և հրացանները: Ասցան և նավաստիները—սրանք բոլորը սև տուժուկաններով: Յեղանակն անձրևային եր: Վաղուց չվերանորոգված, քանդված խճուղին ծածկված եր ցեխով: Սակայն շոկատներն անցնում եյին կուռ շարքերով: Ջոկատներից մեկը գիշերելու համար կանգ առավ մեր դպրոցում: Մենք մեր մանուկներին հետ ողնեցինք բանվորներին՝ դիշերելու հարմարվել, մարագից ծղոտ բերինք, թեյ պատրաստեցինք: Յերեկոյան բանվորներից մեկը կորճատե կրուլց ունեցավ մանուկների հետ, խոսեց առաջիկա մարտերի նշանակութւյան մասին և այն մասին, թե վորքան կարևոր է պաշտպանել Պետրոգրադը սպիտակներից: Այդ վրույցը լսում եյին վոչ միայն մանուկները, այլև մենք, սարիքավորներս, և բանվորներից շատերը:

Առավոտյան շոկատը շարժվեց և ճանապարհ ընկավ: Իսկ դորքերի ու դռնակների շարժումը խճուղով շարունակվեց և շրանից հետո»:

7-րդ բանակի համալրումը կոմունիստներին, կոմյերիտականներին, բանվորների թարմ ուժերով, կուսակցական կազմակերպութւյններին ամբողջումը և զորամասերի կոմպլեկտավորումը քաղաշխատողներով—անմիջապես իրենց ազդեցութւյնն ունեցան զորամասերի ընդհանուր դրութւյան վրա. բարձրացավ մարտիկների տրամադրութւյնը, ամրապնդվեց վստահութւյնը թշնամու դեմ հաղթանակ տանելու նկատմամբ: Կոմունիստների ու քաղաշխատողների հոսանքն անշափօրեն բարձրացրեց քաղաքական դատարակչական աշխատանքը:

Միաժամանակ պայքար եր մղվում դասակիցների, մորթեպաշտների և յերկչոտների դեմ:

Կարմիր բանակային լայն մասսաների շարքերում քաղաքական

ազիտացիայի կարևորագույն զինքն եր հանդիսանում էր Ռոյսվայա պրավդա» թերթը, վոր հրատարակում եր 7-ըդ բանակի քաղ-բաժինը: Բաղաքական ամբողջ աշխատանքը ծավալված եր մեկ կենտրոնական լողունգի շուրջը, այն է՝ Պետրոգրադը, վորպես պրուլետարական հեղափոխության հենարանի, պաշտպանության լողունգի շուրջը:

### ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄԵԹՈՂԵՆԵՐԸ

Ընկեր Ստալինն այդ ժամանակ գտնվում եր Հարավային ճակատում և բուլղարիկների կուսակցության հենարանական կոմիտեյի հանձնարարությամբ կազմակերպում եր Դենիկինի ջախջախումը: Սակայն ճակատի ու թիկունքի ամբացման ստալինյան մեթոդները ինչպես և Պետրոգրադի պաշտպանության ստալինյան պլանը, սպիտակ գվարդիականներին ամառը յետ մղելու ժամանակ կուսակցված փորձը լայնորեն ոգտագործեց Պետերի պրուլետարիատը՝ Յուդենիչի աշխատանքին արշավին կործանիչ հարված հասցնելու համար:

Ինչպես ամառը, վճռական միջոցներ ձեռք առնվեցին թիկունքն ամբացնելու և լրտեսական հակահեղափոխական կազմակերպություններից մաքրելու: Զորամասերում ծավալվեց լայն բացատրական աշխատանքը, վորի հետևանքով զգալիպես բարձրացավ կարմիր բանակայինների զգոնությունը թե՛ ճակատում և թե՛ թիկունքում: Ահա այդ զգոնության սրինակներից մեկը:

Պետրոգրադ յեկավ համալրման մի վաշտ: Այդ վաշտի մարտիկներից մեկը փողոցով անցնելիս տեսավ, թե ինչպես առջևից դընացող կնոջից մի ծրար ընկավ: Մարտիկը վերցրեց ծրարը: Այդ ժամանակ յետ դարձավ կինը և, նկատելով, վոր ծրարը կարմիր բանակայինն է վերցրել, փորձեց թագնվել: Մարտիկի մեջ այդ կասկած հարուցեց: Նա հետևեց անհայտ կնոջը ու կանգնեցրեց նրան: Մարդն ու կինն իսկույն ուղարկվեցին Պետրոգրադի Արտակարգ հանձնաժողովը: Պարզվեց, վոր այդ կինը լրտես է, իսկ ծրարում գաղտնի տեղեկություններ եյին, վորոնք Յուդենիչին պետք է հանձնվեյին:

Այդ լրտեսուհու ձերբակալությունը հնարավորություն տվեց Պետրոգրադի Արտակարգ հանձնաժողովին քաղաքում և ճակատամերձ շրջանում հարտաբերելու լրտես: Կանգնվելուստի հակահեղափոխական մի խոշոր գավազրություն ուղղված խորհրդային իշխանության դեմ:

Պարզվեց, վոր այդ ստոր գավազրության կազմակերպիչներն են յեղել ոտարեկրյա, առաջին հերթին անգլիական և ֆրանսիական, կապիտալի ագենտները, կազմտական կուսակցության ներկայացուցիչների և նախկին այն գավազան սղանների հետ, վորոնք գտնվում



Դիվերսանտներէ ու լրտեսների խարդախ պլանը ձախողվեց ինչպես ամառը, Պետրոգրադում լինվին ծավալվեց քաղաքի պաշտպանութեան նախադատարաստութեանն այն դեպքի համար, յետո՛ք սպիտակ գվարդիականներին հաջողվի ներխուժել այնտեղ: Պետրոգրադի ամրացրած ուսյոնի ռազմական խորհուրդը, բուլշևիկներէ կուսակցութեան քաղաքային կոմիտեյի և քաղխորհրդի հետ միասին, հոկտեմբերի 17-ին հետեյալ վորոշումն ընդունեցին.

«Պետրոգրադի կազմակերպութեանն անմիջապես ձեռնամուխ ելլինում ներքին պաշտպանութեան կազմակերպմանը, Ներքին պաշտպանութեանը գլխավորում և ներքին պաշտպանութեան պետը:

Ռայոններում նշանակվում են ներքին պաշտպանութեան ռայոնական պետեր: Ռայոնները բաժանվում են սեկտորների...

Պետրոգրադի բանվորներէից ու բանվորուհիներէից կազմակերպվում են գլուժինաներ, խմբեր, ջոկատներ, վորոնց նպատակն և կենտրոնացված ղեկավարութեամբ հրով ու սրով հանդիպել սպիտակ գվարդիականներին Պետրոգրադի վերոցներում ու հրապարակներում:

Այդպիսի գլուժինաները ղինվում են հրացաններով, նազաններով, ձեռքի նռնակներով, գնդացիներով և դասավորվում են պաշտպանութեան հանգուցային կետերում ինժեներական պաշտպանութեան կազմակերպութեան համեմատ:

Յեթե նույնիսկ սպիտակ գվարդիականներին հաջողվի ներխուժել քաղաքը, ապա նրանք կզտնվեն իրենց համար ոտար պարագայում և հարկադրված կլինեն տառնձին խմբերի բաժանվելու, և նրանց դրութեանը կորստաբեր կլինի ներքին պաշտպանութեան մարտական կազմակերպման շնորհիվ: Հաջող պաշտպանութեան պայմանն և հանդիսանում յերկաթե կարգապահութեանը և անողոք դատաստանն այնքո՛ր մարդկանց նկատմամբ, վորոնք ուղղակի կամ անուղղակի հարվածում են ներքին պահպանութեան շահերին: Բոլոր հիմնարկութեաններէ, կազմակերպութեաններէ և առանձին աշխատողներէ պարտականութեանն և պայքարել դասալիքներէ, մորթեպաշաներէ, խուճապային լուրեր տարածողներէ դեմ:

Իսցի գրանից, 1919 թ. հոկտեմբերին Պետրոգրադի ամրացրած ուսյոնի (սխեմա 12) սահմանները մնում եյին նույնը, ինչպես ամառը, այդ ուսյոնն ստեղծելու ժամանակ, յերբ ընկեր Ստալինը գտնվում եր Պետրոգրադի ճակատում:

Պետրոգրադի ամրացրած ուսյոնի նախադժման և նրա սեկտորների բաժանելու աշխատանքում իրենց ուղղակի արտացոլումը գրտան ընկեր Ստալինի ցուցումները: Պետրոգրադի ամրացրած ուսյոնի տերիտորիան բաժանվում եր յերեք սեկտորի. 1-ին՝ Կարելյան, վորը Պետրոգրադը ապահովում եր հյուսիսից. 2-րդ՝ Գասչինայի, վորն էր

մեջ եր ընդգրկում Յամբուրգի և Պսկովի կողմից դեպի այդ սեկտորը բերող ճանապարհները և Յ-րդ՝ Լագոզայի վրա քաղաքը պաշտպանում եր Լագոզա լճի և միջլճային տարածութեան կողմից: Կրոնշտադա բերդը և Կրասնայա Գորկայի ամրացրած ռայոնը կազմում եյին չորրորդ սեկտորը: Բայց սրանք չեյին մտնում Պետրոգրադի ամրացրած ռայոնի կազմի մեջ և անմիջապես յենթարկվում եյին 7-րդ բանակի շեղ. Ուզմ. խորհրդին: Յուրաքանչյուրն այդ սեկտորներից, այդպիսով, իր մեջ եր ընդգրկում քաղաքի մտակ հենց այն մատուցները, վոր մատնանշել եր ամառը ընկեր Ստալինը:

Այս անգամ թշնամին ընդհուպ մոտեցել եր քաղաքին, և մաքսական զործողութիւնները փոխադրվել ելին Պետրոգրադի ամրացրած ռայոնի անբխտորիայի վրա (նրա Զ-րդ սեկտորի վրա): Քաղաքի պաշտպանութեան կրիտիկական որերին դեպքերը ցույց տվին նրա մատուցներում ղեկավարութեան կազմակերպական սխտեմի և նախապատրաստական բուրմի շրջառումները լիակատար նպատակահարմարութիւնը:

### ՄԱՐՏԱԿԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Ինչպես և ամառը, քաղաքի ամրողը բնակչութիւնն ակտիվորեն մտանակցում եր ճարտարագիտական ամրաշինական կառուցվածքներ պատրաստելուն: Աշխատանքները ղեկավարում եյին պաշտպանութեան շտաբները: Այստեղ եյին գալիս բազմաքանակ կամավորները՝ ճակատ ուղարկելու համար: Այստեղ ելին կազմակերպվում բանվորական շոկատները, այստեղից եյին սրվում քաղաքի ամրացման վերաբերյալ ցուցումները: Պաշտպանութեան ռայոնական շտաբները զործարաններում ու ֆաբրիկաներում ղեկավարում եյին բանվորական շոկատների կազմակերպումը. նրանք քաղաքում ծավալեցին ստիտարական հիմնարկութիւնների, շտապ ոգնութեան կայանները, թուղցիկ բուժօգնութեան կետերը և հիվանդանոցները, նրանք բաց արին սննդակետեր, պաշտպանութեան ռայոնական շտաբների միջոցով կրկին անցկացվեց բանվորների մորթիլիզացիա բուրմ վայրերում 18-րց մրնչև 40 տարեկան հասակը:

Տրամվայի բանվորները հանձն առան ժամանակին պարեն և դենք մատակարարել զորամասերի համար. բժշկական աշխատողները սանիտարական շոկատներ կազմակերպեցին և շտապ կարգով սովորեցրին, թե ինչպես պետք ե խնամել վիրավորներին. կարի արդյունաբերութեան միութիւնն ուղղակի վտար վրա կազմակերպեց շինելների ու տաք հագուստի արտադրութիւնը՝ Կարմիր Բանակը զբանցով ապահովելու համար. սննդագործների մեջ յետում եր հաց թխելու աշխատանքը. մետաղագործների միութիւնը հանձն առավ

կարգավորել արկերի արտադրութիւնը. Պետրոգրադի համար այդ կը խախտուին որբերին Պուտիլովի, Իժորայի, Որուխովի և մյուս գործարանները հսկայական աշխատանք կատարեցին:

Աշխատանքի պալատը, վորտեղ տեղավորված եր պրոֆեսիոնալ միութիւններու մարզային խորհուրդը, այդ որբերին ապրում եր տենդային կյանքով:

Պետրոգրադի ֆարրիկա-գործարանային ռայոններում չտեսնուած աշխուժութիւնն եր տիրում. բոլոր բանվորները, բանվորուհիները և նույնիսկ պատանիները, առանց ձեռքերը ծալելու, աշխատում էին քաղաքն ամբողջելու վրա: Յերեկը գործարաններում ու ֆարրիկներում լարված աշխատանքը, քաղաքն ամբողջելու հողային աշխատանքը յերեկոները և նույնիսկ գիշերները, գործարաններում և պաշտպանութեան ռայոնական շտաբներին կից կազմակերպված բանվորական ջոկատների ռադիական ռուսացումը,—ահա ինչով եր անցնում Կարմիր Պիտերի լուրաքանչյուր պրոլետարի որը, վորը պատրաստվում եր պայքարի, վոչ թե կյանքի, այլ մահվան պայքարի համար: «Այդ որբերին Պուտիլովյան գործարանում (այժմ Կիրովյան գործարան), վոր մոտ եր ճակատին,—պատմում ե այդ գործարանի բանվորներից մեկը,—կազմակերպվեց յեռակի Կուսակցութեան ռայոնական կոմիտեյում տեղի ունեցավ արտակարգ նիստ, վորտեղ վորոշվեց ստեղծել պաշտպանութեան ռայոնական շտաբ, վոր պետք է յինթարկվեր ամբողջած ռայոնի պետին:

Շուտով մենք տեսանք փախստականներին. դուղացիները դալիս էին իրենց սայլերով, վորոնց կապված գնում էին կովերը. սայլերը բարձած էին հացի պարկերով: Մենք վորոշեցինք կանգնեցնել յեկող մարդկանց Պուտիլովյան գործարանի և Նարվայի ուղեկալի մոտ և թույլ չտալ նրանց քաղաք մտնել: Մենք կազմակերպեցինք յերեք խափանման ջոկատ: Յեկով սապրորական մի վաշտ և ձեռնամուխ յեղավ ականելու Ստալիաների փողոցի և Պետերգոֆի խճուղու կամուրջները: Միաժամանակ Պուտիլովյան գործարանից մենք ջոկատներ կազմակերպեցինք և սղարկեցինք խրամատներ փորելու համար... Առավոտյան դեմ Սչատովիվայա փողոցում արդեն պատրաստ էին խրամատները և, բացի դրանից, պատրաստված եր 4 զնդացրային բուն: Լուսադեմին սկսեցին խրամատներ փորել ավելի հեռու՝ Կրասնոսելսկայա փողոցին մոտիկ: Այստեղ հարկավոր եր խրամատներ փորել և կառուցել լարափակոցներ: Վրմանք խրամատներ էին փորում, վրմանք ձողեր էին բերում, վրմանք հող էին փորում նրանց համար. մի որից հետո այստեղ ևս պատրաստ էին խրամատները...»:

Այստեղ պուլտիլովյաններին միացան և մյուս ֆարբիկներն ու գործարանների բանվորները:

«Պետրոգրադի գործարաններից մեկում (նախկին Ռեչկինի գործարան),—հիշում եմ մասնակիցներից մեկը,—այն մասում, վորն ավելի մոտ եր Պուլտիլովյան յերկաթգծին, հասուկ բաց վազոններ պատրաստեցին, վորոնց վրա պետք ե հաստեյին թիթե հրանոթներ: Վիթխարի աշխատանք կատարվեց զանազան պաշտպանողական ամբուլյուաններ կառուցելու համար: Կանայք հող եյին կրում: Պատանիներն ողնում եյին նրանց ցցեր դնելու և ալլն: Վերջին հաշվով մենք ունեցանք լիակատար պատրաստ ամբաշինական կառուցվածքներ ընդհուպ մինչև լարափակոցները»:

«Պաշտպանության մեր շտաբը, կուսակցության ուսյոնական կոմիտեյի հետ միասին, աշխատում եր անընդհատ: Բոլոր պուլտիլովյաններին մորթիլիզացիայի յենթարկեցինք խրամատներ փորելու համար,—պատմում եմ մյուս մասնակիցը, վոր այդ որերին զանվում եր Նարվայի ուսյոնի պաշտպանության շտաբի կազմում:—Գործարանում աշխատանքն ավարտելուց հետո ճաշում ելինք ճաշարանում: Ճաշից հետո կազմակերպված կերպով դնում եյինք խրամատներ փորելու և խրամատներ փորելուց հետո, մենք չեյինք ցրվում, այլ մնում եյինք մարտական պատրաստականությամբ գորանոցային դրության մեջ: Այսպիսով՝ ամբողջ որվա ընթացքում պուլտիլովյանները աշխատանքի ժամերին զենք եյին պատրաստում պաշտպանության համար, իսկ աշխատանքից հետո խրամատներ եյին փորում»:

«Թնդանոթները չեյին բավականացնում,—հիշում եմ «Ակորոխոդ» գործարանի բանվորներից մեկը:—Այն ժամանակ մենք պատրաստեցինք շարժական թնդանոթ: Դրա համար մենք հարթակը հարմարեցրինք և նրա վրա ամբարցրինք 3-դուլմանոց զենիթային թնդանոթը: Գործարանի փոքրիկ շոգեքարշի միջոցով թնդանոթը շարժվում եր տրամվայի դժով և կարելի յեր տեղափոխել հարկ յեղած տեղը»:

Այն ժամանակ Կիրովյան գործարանի մոտ այնպիսի բարձր շենքեր չկային, ինչպես այժմ: Այն ինչ հարկավոր եր զտնել ուղիղական դիտակետ,—պատմում եմ պուլտիլովյաններից մեկը:—Դրա համար մենք ընտրեցինք պուլտիլովյան յեկեղեցու հենց այն զանգահատունը, վորտեղից Նիկոլայ Ս-ի ուղիղիչիկները փոխվարյան հեղափոխության ժամանակ կրակում եյին պուլտիլովյան բանվորների վրա: Այդ յեկեղեցին մեզ համար ծառայեց վորպես դիտակետ թե ոգային պաշտպանության և թե թշնամու ցամաքային գործերի հայտնելու դիտելու համար: Հենց այդ զանգահատնից ել մենք ընտրեցինք առանձին կետեր, վորտեղ կարելի յեր դասավորել խրամատները և փորել զնգացրային բներ: Հենց այդտեղ մենք հեռախոս դրինք

խրամատները ու մեր ուսումնի պաշտպանութեան շտաբի հետ կապ պահպանելու համար»:

Նույն լարվածութեամբ ելին պատրաստվում պաշտպանելու իրենց հարազատ քաղաքը նաև մյուս գործարանների բանվորները: Ճակատն ու թիկունքը դարձել էին մի անբաժանելի, անհաղթելի ամբողջութուն: Ընդամենը մի քանի սրվա կմեջ, տառացիորեն բոլորի աչքի առաջ, քաղաքը բոլորովին կերպարանափոխվեց:

Փայտերի դարսակներից ու առձեռն նյութից խրամատներ ու բարեկադներ կառուցվեցին փողոցներում, հրապարակներում, առափնյա անկյունում: Պաշտպանութեան համար հարմարացրած շենքերի պատուհաններում ու խրամատներում հրակնատներ կառուցվեցին հողով լցրած պարկերից: Փողոցների խաչմերուկներում ու հրապարակներում բարձրացան ահավոր զրահավորված աշտարակներ գնդացիների ու դաշտային թնդանոթների համար: Այդ բոլոր աշխատանքների արդյունքն այն յեղավ, վոր քաղաքը վերածվեց մի ուժեղ ամրացված դոնայի: Յեթե թշնամուն հաջողվեր քաղաք ներխուժել, ապա նա, բաժանված լինելով քաղաքային թաղամասերով մեկմեկուց առանձնացված ջոկատների, կընկներ հրացան-գնդացրային և հրետանական խաչածե կրակի տակ և մատնված կլիներ պարտութեան:

Պաշտպանութեան առաջին գիծը կազմակերպված էր քաղաքի այն ժամանակվա հարավային ծալքամասի յերկայնքով և անցնում էր հիմնականում շուրջանակի յերկաթուղագծի յերկայնքով: Այստեղ խրամատներ էին փորված, վորոնք ուժեղացված էին փշալարից պատրաստած փակոցներով: Թևերից այդ պաշտպանողական գիծն իրենց կրակով պաշտպանում էին «Սևաստոպոլ» գծանավը, վոր խաբխիս էր գցել ծովային ջրանցքի սկզբին, և «Սամսոն» ականակիրը, վոր յեկել էր Նեայի հոսանքն ի վեր գտնվող Ռիբացկի գյուղի մոտ:

Պաշտպանութեան յերկրորդ գիծն անցնում էր Ուլոգնի ջրանցքի յերկայնքով: Ջրանցքի և նրան կից փողոցների յերկայնքով պատրաստված էր գնդացրերի տողահար և խաչածե կրակ: Ուլոգնի ջրանցքի և Նեայի միջև յեղած տարածութեան վրա պատրաստված էին մի շարք միջնական պաշտպանողական բնագծեր: Բազմաթիվ շենքեր հարմարեցված էին շուրջանակի պաշտպանութեան համար: Պաշտպանութեան յերրորդ գիծը կազմակերպված էր Նեայի աջ ափում (հյուսիսային): Ջրային այդ բնագծակ արդելքը (կամուրջները նախապատրաստված էին վոչնչացման) և հրանոթների ու գրնդացիների խաչածե կրակը այդ բնագիծը դարձրել էին ամենաուղեղ արդելքը թշնամու համար:

Ընդամենը քաղաքի հրապարակներում ու ամենազլխտվոր փողոցներում, առավելապես նրա հարավային և հարավ-արևմտյան մասերում, գրված էր մոտ 60 հրանոթ:



բաժանված եր յերկու սեկտորի վրա—աջ և ձախ: Նրանց միջև վորպես սահման եր ծառայում Ծինլանդական յերկաթուղու գիծը: Աջ (արևելյան) սեկտորում նշված եր ամբողջնել պաշտպանության յերկու գիծ. 1-նը՝ Լեօնայա ծայրամասի յերկայնքով դեպի Պոլիտեխնիկական ինստիտուտը, Պոկլոննայա սարը Ոգերկովի մոտ և Զորդը՝ շուրջանակի յերկաթուղագիծը: Զախ (արևմտյան) սեկտորում նշված եյին պաշտպանության յերեք գիծ. 1-ը—Պրիմորյեյի յերկաթուղու գիծը, 2-դը—Յելագինի, Կամեննի և Ապտեկարսկի կղզիների հյուսիսային ափը և 3-րդը—Պետրովսկ կղզու հյուսիսային ափը և Կարպովկա դեպի ձախ (հարավային) ափը:

Ժամ առ ժամ Պետրոգրադը դառնում եր ավելի ու ավելի անառիկ Ինչպես տեսնում ենք, Պետրոգրադի պաշտպանության հիմքում դրված եյին նույն միջոցառումները, վոր այնպես հաջողությամբ այստեղ գործադրեց ընկեր Ստալինը: Ինչպես և այն ժամանակ, միջոցներ ձեռք առնվեցին կուսակցական կազմակերպությունները նահանջած զորամասերում ամբացնելու, ղեկավար կազմը փոխելու, բոլոր տեսակի մատակարարումը բարելավելու, ճակատին ոգնելու համար թարմ զորամասեր, բանվորական ջոկատներ և համալրում ուղարկելու Ինչպես և այն ժամանակ, ճակատի հետ միասին թիկունքն ամբողջից և մաքրվեց խորհրդային իշխանությանը թշնամի տարրերից: Վերջապես, մտցվեց քաղաքի ներքին պաշտպանության սխսեմ, վորին մասնակցում եյին ինչպես ցամաքային ուժերը, նույնպես և Բալթյան նավատորմի նավերը: Պիտերի պրոլետարիատը լիակատար մարտական պատրաստականությամբ եր դիմավորում թշնամու նոր հարձակմանը, լիովին ոգտագործելով ընկեր Ստալինի ղեկավարությամբ Յուդենիչի ամառային արշավի ջախջախման հերոսական փորձը:

Դրանուհի եր հաղթանակի գրավականը:

## ՎՃԻՍԿԱՆ ՄՍՐՏԵՐ

Հոկտեմբերի 17-ին գեներալ Յուդենիչը հրաման ավեց գեներալ Վետրենկոյի դիվիզիային գրավել Տոսնոն և այդպիսով դադարեցնել Նիկոլայեվյան յերկաթուղով կարմիր ուսական ուժերի տեղափոխումը դեպի Պետրոգրադ, իսկ հեանվյալ օրը, հոկտեմբերի 18-ին, նա հրամայեց Հյուսիս-արևմտյան բանակի 1-ին կորպուսին տիրել Պուլկովյան բարձրունքներին և ներխուժել Պետրոգրադ:

Հասան Պիտերի համար մղվող պայքարի վճռական օրերը:

7-րդ բանակի զորամասերը, ամբացված ու հայթայթված բոլոր անհրաժեշտ միջոցներով, նույնպես ավարտում եր իր վերախմբա-

վորումը հակահարձակման անցնելու համար ներխուժած թշնամու դեմ, Հարկավոր եր, ինչքանով ուղում ե լինի, ևս քիչ ժամանակ շահել սպիտակների հիմնական խմբավորման ճակատներում բավարարուժիք կենտրոնացնելու համար, Սակալն դեպքերը չեյին սպասում:

Յուղենիչը դիտավոր հարվածն ուղղեց Պուլկովոյի վրա: 2-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը, մարտ մղելով յետ քաղվեցին և հոկտեմբերի 20-ին մոտեցան Պուլկովոյին: Մալ. և Բոլ. Պիկկո—Վենոբյազի—Տոյպուլա—Նովայա Սուդի—Ռեդկ. Կուզմինս և Ալեքսանդրովկա զծի վրա համառ մարտեր ծավալվեցին վրա թափված թշնամու դեմ (սխեմա 14):

Անվերջ տեղացող անձրևների տակ, թրջված շինելներով, հողի ու ցիխի մեջ կորած՝ մարտնչում ելին Յամբուրգից նահանջած գնդերը և նրանց ոգնության հասած բանվորական ջոկատներն ու կուլբասնատական գումարտակները:

Մեր մարտկոցները, սարի տակ կրակային դիրք գրավելով, մի քանի որ շարունակ մրրկային կրակ ելին թափում սպիտակ զվարդիականների վրա: Սպիտակ զվարդիականները շատ անգամ կրկնեցին գրոհները գետնին պռակած մեր շղթաների վրա, սակայն ամեն անգամ յետ եյին մղվում: Հրետանու կրակից հրդեհներ եյին առաջանում: Համարյա ամբողջութամբ այրվեցին Վենեբյազի գյուղն ու առանձին աներ Ռեխկուլա, Տույպուլա գյուղերում և Ալեքսանդրովկա կայարանում:

7-րդ բանակի զորամասերին հոկտեմբերի 20-ին ժամի 23-ին հրաման արվեց հարձակման անցնելու: Հրամանում ազդարարվում եր.

«Հակառակորդն իր ուժերի մեծ մասը խմբավորել և Վարչավյան և Մոսկովյան-Վինդավյան յերկաթուղազծերի միջև, նեղեց 2-րդ դիվիզիայի զորամասերին Դեսուկոյե Սելոյի և Պավլովսկի կողմից: Վաղը, հոկտեմբերի 21-ին անցնել վճռական հարձակման 6-րդ և 2-րդ հրաձգային դիվիզիաների և զորքերի Կուլպինո-Տոսնոյի խմբավորման ճակատում:


6-րդ դիվիզիային հրամայվում ե գրոհել հակառակորդին Կոնստանտինովկա—Նովոսելլե—Ռազբեդայ ճակատում, նպատակ ունենալով դուրս դալ Ռոպչա—Կրասնոյե Սելոյի վրա:

2-րդ դիվիզիային հրամայվում ե համառորեն պաշտպանել Տույպուլա—Շուշարի դիրքը:

Կուլպինո-Տոսնոյի խմբավորմանը, վորի կազմի մեջ են նշանակվում կուլբասնատների (Պիտերյան) ջոկատը, 2-րդ հրաձգային դիվիզիայի 2-րդ բրիգադը, 21-րդ դիվիզիայի հեծյալ գունդը և Տոսնոյի ջոկատը, հրամայվում ե հակառակորդին գրոհել Դեսուկոյե Սելո—

—Վանգամիզա—Վլադիմիրսկայա կիսակայարանի ճակատում, նպասակ ունենալով դուրս գալ Կրասնոյե Սելո—Գատչինա գծի վրա:

Պետրոգրադի ներքին պաշտպանության պետը լիովին պատասաականություն է բերում քաղաքի պաշտպանությունը հսկանքերի 21-ին ժամի 1-ին:



Սխեմա 14. 7-րդ բանակի զորամասերի հարձակման անցնելու պլանը 1919 թ. հսկանքերի 21-ին:

Մովսիսին ու ժերի պետը պատրաստում ե Քալթյան նավատորմը նավատորմի կրակով 6-րդ դիվիզիային աջակցելու համար:

Պետրոգրադի ողային պաշտպանութայն պետը ողային հետախուզութայն ե ուղարկում դեպի Դեասկոյե Սելո, Կրասնոյե Սելո, ու մրակոծութայն կատարելով Կրասնոյե—Դեասկոյե գյուղերի ուսյունում:

Հայտարարել զորքերին, վոր Կարմիր Պիտերն սպասում ե վաղվա որվա մարտի յելքին՝ հաջողութայն լիակատար վստահությամբ:

Կարմիր հրամանատարութայն ոպերատիվ մտադրութայնը դիտողարար ցույց ե տրված 16-րդ սխեմայում: 7-րդ բանակի զորամասերը թևերից շրջառում եյին սպիտակ՝ դվարդիականների հիմնական խմբավորումը Լիգովոյից ե Կոլպինս—Տոսնոյից սկսած ուղղութայն վրա: Այդ յերկու վճռական ուղղութայնների վրա յեր կենտրոնացված 7-րդ բանակի բոլոր ուժերի առնվազն յերկու յերբորդ մասը, վորոնք պաշտպանում եյին Պետրոգրադի մատուցները:

Հոկտեմբերի 21-ի վաղ առավոտյան մեր զորամասերը հարձակման անցան Կրասնոյե Սելոյի ե Դեասկոյե Սելոյի ուղղութայն վրա:

Լիգովո՝ կայարանը ե նրան կից ամառանոցային ավանը ամենամոտիկ թիկունքը դարձան Կրասնոյե Սելոյի մատուցներում ծավալված համառ մարտերի համար: Ամառանոցային ավանն իր փառակե տներով լցված եր զորքերով: Ճանապարհի յերկայնքով ձգված եյին դումակները: Տնրի բակերում ծխում եյին յերթային խոհանոցները: Տեղատեղ գոների վրա յերևացին վիրակապական կայանների սպիտակ գրոշակները. այդտեղ սկսեցին գալ առաջին վիրավորները: Ճակատը համարյա մոտենում եր հենց կայարանին:

Լիգովո ե Սերգիեվո ուսյունում կենտրոնացվեցին 6-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը—46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ ե 51-րդ գնդերը, վորոնք իրենց ուսերի վրա կրեցին Յամբուրգից նահանջելու ամբողջ ծանրութայնը: Հոկտեմբերի 21-ին նրանք խմբավորվեցին Միշլովո, Մալ. ե Բոլ. Գորլովայի ուսյունում ե վոլխովյան խճուղու յերկայնքով, Մոսնովկայի ե Կուզմինոյի միջև: Բացի դրանից, Պետրոգրադից այստեղ յեկան 7-րդ ե 8-րդ հրաձգային գնդերը (կայարանի ուսյուն), 17-րդ հրաձգային գունդը (Պորոժկի), 478-րդ ե 479-րդ հրաձգային գնդերը (Լիգովո, Մտարոյե ե Նովոյե Պանովո ուսյուն), Բաշկիրական բրիգադը (Կոյբրովի ուսյուն), Մոսկովայի կուրսանանների 7-րդ գունդը (կայարանի ուսյուն), 1-ին ե 2-րդ պահեստային գնդերը (առաջինը Մոսնովկայի տակ, յերկրորդը՝ Վելիգոնտի, Մալ. ե Բոլ. Ուզրիգոնտի ուսյունում, նավատորմի հրամկազմի ջոկատը (Ռագրեգա), նավաստիներին 4-րդ քոպեդիցիոն ջոկատը (Ուստ—Ռուդնիցի ուսյուն) ե բանվորների բազմաթիվ ջոկատները:

Այստեղ յեկան նաև «Չերնոմորեց» և «III Ինտերնացիոնալ» զբոսազնացեցները. բացի զբանից, քաղաքից մոտեցավ ավտոզբոսադիրվիդիոնը: Մեր մարտկոցները կրակային դիրք գրավեցին կայաբանի սայրոսում:

Դեռևս լույսը բոլորովին չէր բացվել, յերբ Լիզովոյի տակ կենտրոնացված զորքերն անցան հարձակման: Սկսվեցին արշուճանալի վրձնական մարտեր, վորոնք տևեցին հոկտեմբերի 21-ից մինչև 25-ը Շատ կետեր մի քանի անգամ ձեռքեձեռք անցան:

Կարմիր մարտիկները մարտնչում էյին անզուգական հերոսութամբ և անսահման նվիրվածութամբ իրենց սոցիալիստական Հայրենիքին: Հարյուրավոր մարտիկներ, հրամանատարներ, քաղաշխտաողներ ընկան քաջերի մահով, հակառակորդից խլելով հողը տառացիորեն թիզ առ թիզ: Յերկիրը ճանաչում է Կարմիր Պիտերի բազմաթիվ հերոս-պաշտպաններին: Բաղմաթիվ հերոսների ու զորամասերի մասին յերգեր են հորինված, գրքեր են գրված: Բալթիկի պանծալի նավատիկներին են նվիրված «Մենք Կրոնշտադտից ենք» հիանալի կինոնկարը: Մասսաների, այլ վոչ թե անհատների, հերոսութունը Պետրոգրադը պաշտպանեց սպիտակներից, պաշտպանեց պրոլետարական հեղափոխության նվաճումները:

8-րդ հրաձգային գունդը մարտի գնաց ուղղակի վագոններից: Նրանց խնդիր էր առաջադրված՝ տիրել Ֆինլանդական կոլոնիային: Սպիտակները մեր հարձակվող այդ զորամասերին հանդիպեցին կատաղի կրակով, Ֆինլանդական կոլոնիայի և Սերգեյեվո կայաբանի միջև ընկած էր մի փոքր պուլբակ: Կարմիրները, շնչտակի զրոհելով սպիտակների վրա՝ վերցրին այն. բայց սպիտակ գվարդիականները հակազուսի անցան թևից և հարկադրեցին մեզ յետ քաշվել: Հակառակորդի կողմից կիսով չափ շրջապատված 8-րդ գնդի 3-րդ գումարտակը նույնպես սկսեց յետ քաշվել: Գումարտակի կոմիսար ընկ: Գրինբերգը, լեռ մղելով ճնշող սպիտակ գվարդիականներին, վաշտերից մեկի հետ կանգ առավ անտառի մոտ և շրջապատվեց: Վաշտը հերոսաբար ճեղքելով դուրս էր գալիս շրջապատումից: Թշնամին իր գերազանց ուժերով ընկնելով նրա վրա՝ համարյա ամբողջովին վոչընչացրեց նրան: Մարտում հերոսաբար ընկավ նաև ընկ: Գրինբերգը: Այդ նույն որը գունդը կրկին առավ հարձակման և դուրս քշեց սպիտակ գվարդիականներին այդ պուլբակից:

8-րդ գնդի մարտիկները հետ միտսին ուս-ուսի քաջաբար մարտնչում էյին Մոսկվայի կուրսանտները, վորոնք մի քանի անգամ սվինամարտի գնացին:

Ձախ կողմում, յերկաթուղագծի յերկայնքով, հերոսաբար կռվում էր նավաստիների համահավաք ջոկատը: Այստեղ էյին զործում

նակ 1-ին և 2-րդ պահեստային գնդերի զորամասերը: Հետևակի հետ միասին մարտերին մասնակցում էին և զրահապատները:

1-ին պահեստային գնդի գումարտակը Լիգուլոյից հարձակում



Կրամասների մնացորդները Կրասնոյե Սելոյի տակ

սկսեց Պեսկի-Կուտուսկիի ուղղութիւնով: Սպիտակ գվարդիականները մոտիկ հեռակայութիւնից գումարտակին հանդիպեցին գնդացրային անակնկալ կրակով: Գումարտակը զգալի կորուստներ կրելով սկսեց յետ քաշվիլ դեպի անտառի յեզրը, Նիկկարովոյից դեպի հյուսիս: Սպիտակ գվարդիականներն այդ նկատելով՝ յիրևու զրահապատ բաց թողին խճուղու յերկայնքով: Պարզ լքելում եր, թե ինչպես սպիտակ գվարդիականների հետևակը Կուտուսկիից հակազրոհի յե շարժվում: Քիչ եր մնում խուճապի մատնվելին մնացած մարտիկները գնդացրային կրակի ու զրահամեքենայի սպառնալիքի տակ Բայց գումարտակի հրամանատարը մարտական ճակատամասի կոմիտարի հետ միասին վերականգնեցին կարգը ստորաբաժանումում: Գումարտակը պաշտպանվեց անտառի յեզրում և յետ մղեց հակազրոհը: Նրան ողնութիւն հասավ Շլիսելբուրգի բանվորների գումարտակը: Առավոտյան դեմ նրանք վերսկսեցին հարձակումը և դուրս քշեցին սպիտակներին նրանց գրաված անտառից:

Այդ նույն միջոցին նախաբորմի հրամկազմի ջոկատը, վերը գործում եր արևմտյան կողմում, գիշերը հայտաբերեց, վոր սպիտակ-

ներն ուզում են անցնել մեր զորամասերի աջ թևը, վորոնք հարձակվում եյին Կրասնոյի Սելոյի վրա: Զոհատը շնչտակի գրոհեց սպիտակների Լիվենյան ընտիր գնդի վրա, վոր կանգ եր առել Ռադրեզայ և Վելիգոնտ գյուղերում: Ծովային կուրսանտները սվինամարտում անապրուսն հարված հասցրին թշնամուն. գյուղում դտնված սպիտակների գումարտակը համարյա ամբողջութամբ վոշնչացվեց և նրա խղճուկ ֆնացորդներն իրենց գլուխն ազատեցին փախուստով: Նավատորմի հրամկազմի ջոկատը, գրավելով Ռադրեզայը, առավոտյան այդտեղ տաք կովի բռնվեց սպիտակների հետ, վորոնք գրավել եյին Վելիգոնտը:

Կասեցված եր սպիտակների հետագա առաջխաղացումը ղեպի հյուսիս: Եռտող ջոկատին միացան Պետերգոֆի կողմից հարձակման անցած գնդերը և ոգնության լիկած մյուս զորամասերը: Սկսվեց միահամուռ հարձակում Ռուպչայի վրա, վորը գրավվեց հոկտեմբերի 26-ի համառ մարտից հետո: Անկարգ նահանջած սպիտակ զվարդիականներից մերոնք վերջրին 2 հրանոթ, 12 դնդացիք և մեկ սպրանքատար ավտոմոբիլ՝ փամփուշտներ բարձած:

Բաշկիրական բրիգադի և 2-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը համառ մարտերից հետո ախրեցին Կազրասարի բարձրության Լանջերը Մալ և Բոլ. Պիկկո գյուղերով, Հոկտեմբերի 22-ին սպիտակներն անցան հակազրոհի: Հակառակորդի ճնշման տակ Բաշկիրական բրիգադի զորամասերը նահանջեցին ղեպի Վոլխովյան խճուղին: Այն վտանգն եր ստեղծվում, վոր սպիտակները կարող են ճեղքել ճակատը և դուրս գալ մեր այն զորամասերի թիկունքը, վորոնք մարտ եյին մղում Կրասնոյի Սելոյի մատույցները յերկաթուղազծի յերկայնքով գրավելու համար: Հարձակման անցած հակառակորդի վրա կրակ բացեց «Անաստոպոլ» գծանավն իր աշտարակային հրանոթներով:

Նրա կրակային հուժկու ոգնությունը կասեցրեց սպիտակների առաջխաղացումը, իսկ ոգնության հասած 6-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերի շնորհիվ արագորեն վերականգնվեց դրությունը: Բաշկիրական բրիգադի զորամասերն այնուհետև անցան հարձակման:

Բաշկիրների հետ միասին, ուս-ուսի նրանց հետ սվինամարտի գնաց հատուկ նշանակման կոմունիստական ջոկատների հավաքական գումարտակը, Անաշտրույն մարտը շարունակվեց ամբողջ դիշեր: Բաշկիրական գնդերը խոշոր կորուստներ կրեցին, բայց յետ չեյին մնում կոմունիստներից, վորոնք իրենց որինակով վոզեվորում եյին նրանց ղեկավարին բուսեններին:

Վրա հասավ մառախլապատ առավոտը, հակառակորդի խորքը ներխուժած բաշկիրական գնդերի շղթաները հարձակում սկսեցին: Սուղդի գյուղի վրա: Եղթաներից մեկի առջևից հարձակվում եր զասա-

կի հրամանատար ընկ. Պուզանովը: Նա իր անձնակազմն որինակով  
վորակորուսւմ ու գրավուսւմ եր մարտիկներին: Յերը շրթան գրոհի բարձ-  
րացալ, ընկ. Պուզանովն առաջ նետովեց: Այդ մոմենտին թշնամու  
գնդակը ծակեց նրա կուրծքը: Նա արյան մեջ շողալիս՝ գոչեց՝  
«հառաջ, բաշկիրներ», և մեռած՝ զլորվեց գետին:

Այդ միջոցին Բաշկիրական հեծյալ գունդը գրոհեց սպիտակ  
զվարդիականներին վիտտովով—հյուսւմյա—հուրիկա ուղղութեան վրա:  
Դնդի հրամանատարն ու կոմիտարն անձամբ առաջադրեցին գունդը  
գետի գրոհ: Այդ կովում վերավորվեց հրամանատար ընկ. Մալինով-  
սկին: Նա վերավոր ներխուժեց Տայիկուս գյուղը: Վերջը կտպելուց  
հետո, ընկ. Մանիլովսկին պահանջեց շուտով իրեն թողնեն, վորպեսզի  
զլուզն ասորոյութեամբ վերցնի»:

Հերոսութեան հիանալի որինակներ ցուց տվին նաև կանայք:  
Այսպես՝ այդ վճռական որերին զոհվեցին յերկու սանիտար-կոմու-  
նիստուհիներ՝ ընկերներ Վորոնովան և Կոնովալովան:

Ընկ. Վորոնովան զեկավարուսւմ եր Վասիլյովոսարովի ռայոնի  
բանվորական ջոկատին կից սանիտարական ջոկատը: Պրոլետար եր  
նա և ամբողջ հողով նվիրված իր նոր աշխատանքին: Նա միշտ լի-  
նում եր առաջավոր շրթայում և թշնամու կրակի տակ ոգնում եր  
վերավորներին: Մարտերից մեկում նա մահացու վերք ստացալ և  
քիչ հետո մահացալ:

Հերոսական մահով զոհվեց իր պոստում նաև բանվորուհի ընկ.  
Կոնովալովան: Նույն ջոկատում յերեք որ առաջ մարտի ժամանակ  
սպանվեց նրա մայրը՝ Ընկ. Կոնովալովան, իմանալով իր մոր մահ-  
վան մասին, ցանկութուն հայտնեց վոխարինել նրան և չինայել  
իբ ուժերը, նույնիսկ իբ կյանքը, փրկելով վերավոր մարտիկներին:  
Վերավորներին ոգնութուն ցուց տալու ժամանակ վտարից ծանր վի-  
րավորվեց ընկ. Կոնովալովան և քիչ հետո մեռալ արյան վարակու-  
մից:

Մեր զորամասերի հերոսական գործողութուններով բեկում  
ստեղծվեց ճակատում:

Չորսորդ որը հաջողութունն ակնհայտորեն սկսեց մեր կողմը  
թեքվել, Հոկտեմբերի 25-ի առավոտյան մեր զորամասերը տիրեցին  
Կրասնոյե Սելոյի բարձրունքների հյուսիսային ստորոտում ընկած  
գյուղերը: Չնայած սպիտակ գլարգիականների հուսահատական դիմա-  
դրութեանը, վորոնք բազմիցս հակազրոհի անցան, մեր գնդերը, կուր-  
սանտական գումարաակները, նավաստիները ու բանվորների ջոկատ-  
ները հասան Աննինո—Կոնստանտինովկա գծին և համառ մարտ մը-  
ղեցին Կրասնոյե Սելոյին անմիջապես կից մատուցները համար:  
Նույն որը, մոտ ժամի 16-ին, ճեղքված ելին հակառակորդի լավ ամ-

բացված դիրքերը հաստատու համար—Շուշուրով—Ռաուտելյա ճակատա-  
մասում. մեր զորամասերը հորձանքով ներխուժեցին ճեղքվածքը և  
կրնկակոխ սկսեցին հետապնդել տնկարգ նահանջի դիմած սպիտակ-  
ներին: Շուշուրովոյի մոտ մերոնք վերցրին սպիտակների 4-րդ հրա-  
նոթային մարտկոցը, վոր չնի՛ն կարողացել ժամանակին տեղափոխել  
դիրքեից:

Հոկտեմբերի 25-ի յերեկոյան դեմ մենք գրավեցինք Կրասնոյե  
Սելոն:

\* \*

Լիզովոյի ուղինում հարձակման անցած զորամասերի հետ մի-  
ասին, ծավալվեց նաև զորքերի Կուլչինո—Տոսնոյի խմբավորման  
զորամասերի հարձակումը:

Հոկտեմբերի 21-ի գիշերը շարունակում էին դալ ոգնական  
ուժերը: Զորամասերը շտապով կարգի էին բերվում, մատակարարվում  
էին բուր անհրաժեշտ միջոցներով: Յերեկոյան հայանի դարձավ,  
վոր սպիտակ գվարդիականները գրավել են Ֆյոդորովյան քաղաքա-  
վանը, հետո ստացվեց նոր զեկուցագիր, թե սպիտակները ներխուժել  
են Յամ-Իժորա գյուղը և գրավել են նրա հյուսիս-արևմտյան մա-  
սը: Կուլչինոյի վրա յեր կախվել սպիտակ գվարդիականների հար-  
ձակման անմիջական սպառնալիքը: Ամբողջ գիշեր պատրաստութուն-  
ներ էին տեսնվում առաջիկա հարձակման համար: Զորքերն առաջ  
տարվեցին դեպի յեկման դիրքերը: Կարգի էին բերվում թիկունքները:  
Շտապով բացազատվում էին վիրակապական կայանները...

Հոկտեմբերի 21-ին, ժամի 6-ին վերսկսվեց հրամարտը: Յերեկո-  
կողմերից էլ գործել սկսեցին մարտկոցները: Մեր զորամասերն ան-  
ցան հարձակման:

Հարձակման մոմենտին Կուլչինո—Տոսնոյի զորքերի խմբավոր-  
ման կազմի մեջ էին մտնում՝ 9-րդ հրաձգային գունդը (Տոսնո),  
2-րդ հրաձգային դիվիզիայի 19-րդ, 14-րդ և 15-րդ հրաձգային զըն-  
դերը (Կուլչինո—Մոսկովսկայա Սլավյանկա—Միկիլոյովո ուղիով),  
67-րդ հրաձգային գունդը (Տոսնո), 188 հրաձգային գունդը (Կուլչի-  
նո), 21-րդ հրաձգային դիվիզիայի 187-րդ և 189-րդ հրաձգային զըն-  
դերը (վորոնք Կուլչինո էին յեկել Արևելյան ճակատից), 214-րդ  
հրաձգային գունդը (Տոսնո), Պետր Զրադի կուրսանտների ջոկատը և  
Մոսկովյի կուրսանտների բրիգադը—7-րդ, 8-րդ և 9-րդ զնդերը (վո-  
րոնք Կուլչինո էին յեկել հոկտեմբերի 22-ի գիշերը), յերկաթուղա-  
յին պահպանության 59-րդ և 60-րդ զնդերը (Տոսնո), 5-րդ Լասիշա-  
կան գունդը (Պոպովկա), Մոսկովա—Նարվյան ուղիի բանվորների ջո-  
կատը և Պետրոգրադի ներքին տաշտպանության ջոկատը (Կուլչինո):

Արտակարգ հանձնաժողովի նովգորողի և Տվերի հավաքական գումար-տակները, Մոսկվայի հեծյալ գունդը և 21-րդ հրաձգային դիվիզիայի հեծյալ գունդը (Տոսնո), Բաշկիրական համահավաք գունդը (Տոսնո), Բալթիական նավաստիները ջոկատը (Կոլպինո): Այդ խմբավորման մեջ մտնող հրետանու կազմը բաղկացած էր հետևյալ մասերից՝ 21-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիոնը, ՎՁԿ թեթև և ծանր մարտկոցները, Մոսկվայի պահեստային թեթև մարտկոցը և Մոսկվայի ՉԿ թեթև մարտկոցը, Բացի դրանից, այդ խմբավորմանը տրված էին № 60 և № 67 դրահազնացքները:

Առաջինը հաջողութուն ունեցավ 5-րդ Լատիշական գունդը, վորը միանգամից Պոպովկա կայարանում բեռնաթափվելուց հետո, աննկատելի մոտեցավ Յամ-Իժորային վաղ առավոտյան մառախուղի մեջ և իր հրամանատարի ու կոմիտարի գլխավորութամբ ներխուժեցին նրա արևմտյան մասը: Կարճատև բռնամարտից հետո սպիտակները դուրս քշվեցին գյուղից: 5-րդ Լատիշական գունդը, դադար չսալով նահանջող հակառակորդին, կրնկակոխ հետապնդելով նրան, տիրեց Յամ-Իժորայից դեպի արևմուտք ընկած Վոյսկուրովո գյուղը: Սպիտակ գվարդիականները, պաշտպանվելով անկարգ հրացան-գնդացրային կրակով, արագաթափ նահանջեցին դեպի Պավլովսկ:

Յամ-Իժորայից յերևում են հեռվում Դետսկոյե Սելոյի բարձունքները: Պարզ յեղանակին այդտեղից կարելի յե տեսնել Դետսկոյե Սելոյի առանձին շենքերն ու ռազիո-կայանի կայմերի նուրբ ցանցը: Դետսկոյե Սելոյից դեպի ձախ կարելի յե տեսնել Պավլովյան պարկի համապաղաղ կանաչ պարբսպը: Դետին մոտիկ դաշտի միջին նշմարվում են Մոսկովսկայա Սլավյանկա գյուղի տնակները, պարտեզների կիսածածկ կանաչով: Այդ հարթավայրը՝ մի կողմից սահմանափակված Իժորա գետով, իսկ մյուս կողմից—Դետսկոյե Սելոյի բարձրավանդակով, 1919 թ. հոկտեմբեր ամսին դարձավ դաժան ու վճռական մարտերի ասպարեզ:

Յերեք օրվա ընթացքում այստեղ չէր դադարում հրետանական ու հրացանա-գնդացրային կրակը: Կարմիր բանակային և կուրստնտական վաշտերը, նավաստիները ջոկատներն ու բանվորական գումարտակները մինչև ծնկները ցեխի մեջ, մղմղուն տնձրևի տակ ու մառախուղում, սպանվածներ ու վիրավորներ տալով, դեպի գրո-գրոհի յետևից ընթանում էին այդ դաշտերով: Դետսկոյե Սելոյի և Պավլովսկի ուղղութիւն վրա ամբողջ դաշտը ծածկված էր մեր հարձակվող շղթաներով: Աջ թևում, Մոսկովսկայա Սլավյանկայի և Նովոյտոյի միջով հարձակվում էին կուրստնտական զորամասերը: Նրանցից դեպի ձախ շարժվում էին 14-րդ և 15-րդ հրաձգային գնդերը, 13-րդ հրաձգային գունդը նրա յետևում էր՝ վորպես ռեզերվ: Պավլովյան

պարկի ուղղութեան վրա հարձակվում եյին Ծ-րդ Լատիշական գունդը և 21-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի գնդերը: Յարսկայա Սլավյանկայի վրա հարձակվում եր 9-րդ հրաձգային գունդը, Պավլովսկը ձախից շրջանցելու համար:

«Չնայած անդադրուն կրակին ու հրետակոծման դրդչունին,— պատմում ե մարտիկ-կուրսանտներից մեկը,— Իժորայի գործարանի բանվորներն աշխատում եյին որ ու գիշեր- գիշերը գործարանը լուսավորված եր, ծխնելույզները ծխում եյին, զգացվում եր բանվորներէ կազմակերպվածութունը: Այդ շատ եր բարձրացնում մեր տրամադրութունը»:

Կուրսանական շրթանները շեշտակիորեն առաջ եյին նետվում գեպի Դետսկոյե Սելո: Հենց այստեղ, կուրսանտներին կողք-կողքի մարտի եյին ընթանում բանվորական ջոկատները: Քաղաքացիական հագուստ, փամփուռներով գոտի, ուսին գցած հացի պայուսակ—ահա բանվոր-մարտիկի ամբողջ զինասարքը: Տարիքավորները լետ չիլին մտում յերիտասարգներից: Բոլորն ընթանում եյին վտանգի հանգեղ այն հաստատուն վճռականութամբ, վոր պետք ե պաշտպանել Պետրոգրադը, ինչ գնով ուզում ե լինի:

Կարմիր զորքերը հարձակվում եյին Տոսնո կայարանից հիմնականում՝ Տոսնո-Քատչինա յերկաթուղու յերկայնքով: Սպիտակներն առանձնապես համառորեն դիմադրում ելին Չլորնայա գետակի անցարաններէ վրա, Լիսինո կայարանից գեպի արեմուտք: Այստեղ տեղանքը ճահճացել եր աշնանային անձրևներից: Կարմիր մարտիկները հակառակորդի հրետանային կրակի տակ, մինչև ծնկները ջրի մեջ՝ ճեղքում անցնում եյին քայլ առ քայլ: Հասան անտառի յեզերքին: Դրանից այն կողմ ճանապարհն արգելակում եր արագահոս Չլորնայա գետակը: Սպիտակները վոչ մի կրակոցով չեյին հայտնում իրենց մասին: Սակայն հենց վոր ջոկատն սկսեց հունով անցնել, նրանք բաց արին գնդացրային ու հրացանային ուժգին կրակ: Շատ կարմիր բանակայիններ գուրս յեկան շարքից: Մարտիկներից վոմանք չեյին կարողանում հաղթահարել գետի ուժեղ հոսանքը, ուժասպառվում եյին և անոգնական ջուրն եյին սուղվում: Պարզվեց, վոր սպիտակները գտնվում են անտառի յեղրին: Ջոկատը, մեծ կորուստներ կրելով, յեա քաշվեց գրահագնացքների կրակի պաշտպանութիան տակ: Գիշերը կրկին հարձակման գնացին ոգնութեան հասած ուժերի հետ միասին: Մի մութ ու խոնավ գիշեր եր: Միայն հրանոթային ձիգերի փայլն եր լուսավորում խավարը: Գրկին սկսեցին անցնել գետակի միջով: Սպիտակները խրամատներից ընդհուպ կրակում եյին կարմիր մարտիկներէ վրա, սակայն այս անգամ արդեն նրանց վոչինչ կանգնեցնել չեր կարող: Գրավված եր Չլորնայա գետակի գետանցը: Այդ կռիվներում ջոկաար կորցրեց մոտ հարյուր մարդ:

Դեասկոյե Սեւրյի մերձակա մատուցներում սպիտակ գվարդիականները համառորեն լետ եյին մղում կուրսանտներէ կրկնվող գրոհները: Վերջապես հոկտեմբերի 22-ի յերեկոյան մեզ հաջողվեց գրավել Նովայա գլուղը, վոր գտնվում եր Դեասկոյե Սեւրյի ծայրամասին մտակ, իսկ հոկտեմբերի 23-ի լուսաբացին Պիտերի կուրսանտներն իրենց շեշտակի գրոհով վերցրին նաև Դեասկոյե Սեւրն: Այդ նույն օրը 5-րդ Լատիշական գունդը և 21-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի զնդերը միահամուռ գրոհով վոչնչացրին սպիտակներէ Վյատկայի գունդը, վոր գրավել եր Պավլովյան պարկի յեզրը և վերցրին քաղաքը: Միաժամանակ հարձակման անցան նաև 2-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը:

Նրանց հետ միասին գործում եյին «Լենին» և «Վոլոդարսկի» զրահազնացքները: Այդ կովում զրահագնացքներին դիպավ ինն արկ: «Լենին» զրահագնացքի շոգեքարը վնասվեց, և գոլորշու ու ջրի վաթածք առաջացավ շտապով վռած դուրգամներէ արանքներից: Յերկու զրահագնացքները, սպանուծակ կրակի տակ նորոգելով հակառակորդի պայթեցրած յերկաթուղագիծը, մարտ մղելով առաջ շարժվեցին մինչև Ալեքսանդրովսկայա՝ այդտեղ պաշտպանվող սպիտակ գվարդիականներէ թէն անցնելու համար: Նրանք, մրրկային կրակ բանալով հակառակորդի թիկունքների վրա, խուճապ առաջացրին նրա շարքերում և շարքից հանեցին նրա մարտկոցը, վորը հենց այդտեղ գրավվեց մեր հետակի կողմից: Միաժամանակ 2-րդ, 62-րդ և 162-րդ հրաձգային զնդերը իրենց նախաձեռնությամբ գրոհեցին Բոլ. կուզմինո գյուղի հարավային մասը գրաված սպիտակներէ վրա և դուրս քշեցին նրանց այնտեղից:

Սպիտակները կազմակերպված դիմադրություն ցույց չալին քաղաքի միջով մեր զորամասերի առաջխաղացմանը:


7-րդ բանակի քաղաքօթինն իր կոչի մեջ գրում եր.

«Կարմիրները վերցրին Դեասկոյե Սեւրն, թշնամու հարձակումը ասեցված եւ Կարմիր զորամասերն անցան հարձակման սպիտակներէ



Ընկ. Չեկուովը, Շիտսկուրգի խորհրդի նախագահը, վորը զոհվել և Պետրոգրադի մատուցների մարտերում:

դեմ: Սակայն վտանգը տակավին չի անցել: Քանի դեռ Չախջախված չե Յուզեհնիչի ամբողջ Հյուսիս-արևմտյան բանակը, Կարմիր Պիտերը սպառնալիքի տակ կլինի: Պետրոգրադի բանվորներ, հրացաններդ ձեռքներիցդ վայր մի դրեք: Կանգնեցեք պոստում: Մի թուլացրեք զգոնությունը: Քաղաքը լիակատար պատրաստեցանության մեջ պահեք: Կարմիր դրոշմեր, սկսած հարձակումը հասցրեք մինչև հաղթական վախճան: Դետսկոյն Սելոյից հետո, կան դեռ ևս Կրասնոյե



Բուստին Ժուկ, Կարիյան սեկտորի գինվորական խորհրդի անգամ, վոր սպանվել է Պետրոգրադի մատույցներէ կռիվներում:

Սելոն և Գատչինան: Իսկ դրանցից հետո, ավելի հառանջ ու հառաջ: Մինչև վերջը չՉախջախված սպիտակ իժը կարող ե նորից կենդանանալ: Նրան պետք ե ջնջիել մինչև սատկելը: Չղանդաղել վոչ մի ժամ: Հառանջ, առանց կանգ առնելու: Սպիտակ գվարդիականները նահանջեցին դեպի Կատչինա: Մեր զորամասերը խոշոր հաջողություն ձեռք բերին Դետսկոյե Սելոյի գրավումով, Պուլկովոյի հաջող պաշտպանությամբ և Կրասնոյե Սելոն վերցնելով: Հնգորյա անագորույն մարտերից հետո թշնամին լետ մղվեց և նահանջեց Պետրոգրադի մերձակա մատուցներէց:

Դրանով կատարվեց Պետրոգրադի ռաբրաբայի առաջին

մասը, բայց թշնամին դեռևս Չախջախված չեր: Նա անհաջողության հանդիպելով չեր հրաժարվում այն հույսերից, թե կարող ե վերականգնել իր դրությունը: Հաջորդ օրերում համառ մարտերն սկսվեցին Կրասնոյե Սելոյից դեպի արևմուտք և դեպի հարավ և Դետսկոյե Սելոյից դեպի հարավ և դեպի հարավ-արևմուտք, Վլադիմիրսկայայի առաջում և այլն: Այդ մարտերում սպիտակ գվարդիականները փրփուրը բերաններին մխում եյին նախօրգ օրերի մեր տաքած հաջողությունը: Շատ գյուղեր, ինչպես՝ Վիսոցկոյե, Տիլիգի, Մուխոլովո, Ուստուլովո, Հազուա, Տայցի, Նովիլ Բուզոր և ուրիշները, ձեռքեծեք եյին անցնում: Ծակատի գիծը Կրասնոյե Սելոյից և Դետսկոյե Սելոյից մերթ յերկարաձգվում եր, մերթ կրկին մոտենում եր նրանց մատուցներ:

րին՝ Սակալն սպիտակներէ ալդ բոլոր Զանքերը մասնոված ելին անհաջողութեան, Թշնամին անհայտորեն ցամաքում եր և Իժորայի դեռանցներում պաշտպանվելու անհաջող փորձից հետո (Գատչինայից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք 10 կիլոմետրի վրա), նոյնմբերի 2-ի դիշերը մաքրեց Գատչինան, իր հետևից թողնելով սպիտակ աերոսի գոհերի բազմաթիվ դեպակներ:

Գատչինայի գրավումով 7-րդ բանակի պետրոգրադյան ուղերացիան կարելի յեր հիմնականում համարել ավարտված:

Ձեռք բերված հաջողութունը գլխապատույտի չբերեց Պիտերի պրոլետարիատին: Պետրոգրադն անմիջապես պաշտպանելու լողունը փոխարինվեց նոր լողունով. «Վար չդնել դենքը, քանի Յուդենիչի բանակը ԶախՅախոված չե մինչև վերջը»: Կուսակցութեան Պետրոգրադի Կոմիտեյի Բյուրոն կարգադրեց, վոր վոչ մի կոմունիստ չի կարող յետ կանչվել ճակատից, մինչև Գդովի և Յամբուրգի գրավումը:

Պետրոգրադը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան յերկրորդ տարեդարձը դիմավորեց մարտական լողունով. «Պետրոգրադը միշտ կմնա խորհրդային»:

Սպիտակների դեմ մղվող պայքարը թևակոխում եր իր յերկրորդ փուլը. Լիովին վոչնչացնել Յուդենիչի Հյուսիս-արևմտյան ամբողջ բանակը — անա այո եր այն պայքարի հիմնական նպատակը, վորին մասնակցեցին վոչ միայն 7-րդ, այլև 15-րդ բանակը:



տիրիցի, Դյասալիցի, Վիտինո, Ուշկուլա, Կիպեն, Ռուզեմյուլյու-  
գիծը, Հատուկ նշանակութիւն ունեցող Յամբուրգի խճուղու վրա  
գտնվող Վիտինո և Կիպեն գյուղերի գրավումը, վորովհետև դրանով  
վտանգ եր ստեղծվում սպիտակների Կրասնոյե Սելոյի խմբավորման  
թիկունքներին: Երդ գիվիզիայի ձախ թևը գտնվում եր Կրասնոյե  
Սելոյում:

Այդ ժամանակ Զ-րդ հրաձգային դիվիզիան դուրս յեկավ Շուլ-  
կուլովո և Սոլոգի գծի վրա: Կոլպինո-Տոսնոյի խմբավորման զորամա-  
սերը համառ մարտեր եյին մղում Դեսակոյե Սելոյից դեպի հարավ-  
արևմուտք: Պավլովսկից դեպի հարավ նրանք գրավել եյին Ցար-  
սկայա Սլավյանկան և Անտրոպշինոն, Նրանք այդ ժամանակ Տոսնո-  
Գատչինա յերկաթուղագծի ուղղութեան վրա մարտ եյին մղում Վլա-  
դիմիրսկայա կիսակայարանից դեպի արևելք:

\* \* \*

Արևմտյան ճակատի հրամանատարութիւնը հոկտեմբերի 26-ին  
հրաման արձակեց, վորի մեջ նախատես եր.

«7-րդ բանակին՝ ամբողջ ճակատով, 15-րդ բանակին՝ Լուգա—  
Պսկով ճակատամասում անցնել վճռակա՛ն հարձակման:


Յուզենիչի բանակը լիովին ջախջախելու խնդիրը պետք ե կա-  
տարվի՝ ինչ դէպք ուզում ե լինի. կարմիր բանակայինների, կոմի-  
տարների և հրամանատարական կազմի բոլոր ուժերի լիակատար  
լարվածութեամբ:»

Արևմտյան ճակատի հրամանատարութեան ոպերատիվ պլանի  
համաձայն, 15-րդ բանակի զորամասերն իրենց յեռանդուն հարձա-  
կումով պետք ե տիրեյին Լուգա—Մշինսկայա ուղիին և առաջ շարժ-  
վեյին դեպի Վոլոսովո ու Յամբուրգ, նպատակ ունենալով անցնե-  
լու Յուզենիչի սպիտակ բանակի թևն ու թիկունքը: Միաժամանակ  
7-րդ բանակի զորամասերը, հարձակում գործելով լայն ճակատով,  
պետք ե գետին սեպեյին սպիտակ գվարդիականներին, հնարավորու-  
թիւն չտային նրանց ներքին նոր վերախմբավորումներ կատարելու  
և նրանց պարտութեան մատնեյին Գատչինայի մատուցներում: Այս  
եր սպիտակ բանակը շրջապատելու և լիապես ջախջախելու պլանը:

10-րդ հրաձգային դիվիզիան և 11-րդ հրաձգային դիվիզիայի  
1-ին բրիգադը շեշտապի հարձակում սկսեց Լուգա քաղաքի վրա և  
այնուհետև Վոլոսովոյի վրա: 11-րդ հրաձգային դիվիզիան հարձակ-  
ման անցավ Սամրո լճի դժվարանց ուղիով և դուրս յիկավ Յամ-  
բուրգի մոտ հարավից: Վերջապես, 10-րդ հրաձգային դիվիզիան զրո-  
հեց սպիտակ գվարդիական զորամասերին Գոլով տանող ճանապարհ-  
ների վրա: Սպիտակների համար միանգամայն անսպասելի յեր 15-րդ

բանակի հարձակումը: Տաք կռիվներ տեղի ունեցան Լուզա քաղաքի հարավ-արևելյան մասուլյցներում:

Մեր զորամասերը հարձակվում էին հրետանու, իսկ աջ թևում, բացի զրանից, ն' զրահագնացքի կրակի ուժեղ աջակցությամբ: Մար-



Միսմա 16. 7-րդ և 15-րդ բանակների զորամասերի կողմից Յուզանիի և Լուզա քաղաքի հարավ-արևելյան մասուլյց շարժումները: Պլանը:

տը չեք դադարում նույնիսկ գիշերը: Առաջավոր շղթաների յետևից  
ընթացող թնդանոթները, չնայած մթությանը, հետևակի առաջին  
պահանջով, կրակ էլին բացում և ուղղակի նշանառությամբ քարու-  
քանդ էյին անում հակառակորդի դիւադրության ոչախները: Սպի-  
տակ գվարդիականները կատաղի գիմադրություն էյին ցույց տալիս,  
բայց չէյին կարողանում կասեցնել մեր առաջխաղացումը:


Հոկտեմբերի 29-ի լուսաբացին, 19-րդ դիվիզիայի զորամասերը  
դուրս քշեցին սպիտակներին Ռուսինյա գյուղից: Այդ առաջին հա-  
ջողությունն էր: Հոկտեմբերի 30-ին սպիտակները նահանջեցին Վի-  
չելովոն և Սմիլյկովո գյուղերից, իսկ նույն օրը յերկույան դեմ մեր  
զորամասերը կատաղի մարտից հետո դուրս լեկան կոլոդնյա—Մալ. և  
Բոլ. Ռակովնյա գծի վրա: Սպիտակ գվարդիականները, քողարկվելով  
գիշերային մթությամբ, նահանջեցին դեպի Լուզա գետի անցարան-  
ները:

Պակովի խճուղու կողմից դեպի Լուզա էլին հարձակվում 11-րդ  
հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի գնդերը: Առաջինը շարժվեց  
93-րդ հրաձգային գունդը: Հոկտեմբերի 31-ի լուսաբացին նա մոտե-  
ցավ Որլա գետին: Առաջից՝ ընթացող 8-րդ վաշտը ընդհարվեց կամուր-  
ջը պահպանող սպիտակներին պահակի հետ: Պահակը կրակ բացեց և  
միաժամանակ այրեց կամուրջը, նավթով լիբը տակառը շուռ տալով  
կամուրջի վրա: Գուժարտակի հրամանատարն ու կոմիտարը «հառած»  
բացահանչելով նետովեցին դեպի վառվող կամուրջը և իրենց յետևից  
տարան կարմիր բանակայիններին: Սպիտակները կրակ բաց արին  
մի քանի գնդացրերով կամուրջի յետևում գտնված բարձունքներից:  
Այդ չկանգնեցրեց կարմիր բանակայիններին: Նրանք վազեվազքով  
անցան վառվող կամուրջի վրայով և գրոհեցին խճուղու յերկու կող-  
մում դարան մտած սպիտակների վրա: Մարտիկների մի մասը շի-  
նելներով հանգցրին կրակը:

93-րդ հրաձգային գնդի 3-րդ գումարտակը, գերիներ վերցնելով,  
ներխուժեց Լուզա գաղաքը: Հակառակորդը կրնկակութի նահանջեց  
դեպի յերկաթուղային կայարանը:

Այդ նույն ժամանակ 19-րդ հրաձգային դիվիզիայի զորամասե-  
րը գրոհեցին սպիտակ գվարդիականների վրա Լուզա գետի անցա-  
րաններում և նույնպես ներխուժեցին քաղաք: Սպիտակները նահան-  
ջեցին քաղաքի միջով: Վոլոդարսկի պողոտայի և Բազարնի անցման  
անկյունում տեղի ունեցավ անսպասելի ընդհարում սպիտակների ու  
մեր 93-րդ գնդի միջև: Գուժարտակի հրամանատարը կարմիր բանա-  
կայիններին գրոհի տարավ, իսկ 92-րդ և 93-րդ հրաձգային գնդերի  
գնդացրային խմբերի պետերը անձամբ պառկեցին գնդացրիներ  
յետևը և կործանիչ կրակ բաց արին սպիտակները վրա: Սպիտակ

գլխարդիականները յետ նահանջեցին դեպի գետը և անկարգ փախուստի նեւովեցին՝ թողնելով վերավորներ և սպանվածներ:



Որև դեպի կամուրջը Լուգայի մաս:

Լուգա քաղաքը վերցված էր: Մեր զորամասերից հետապնդվող սպիտակները շտապով նահանջեցին դեպի հյուսիս—դեպի Մշինակայա:


### ԹՇՆԱՄՈՒ ՎԵՐՁԻՆ ՃԻԳԸ

Այդ միջոցին Յուզեհնիչը, չխնայելով ուժերն ու միջոցները, ճակատ նետելով սպայական լավագույն զորամասերը, խուժում էր դեպի Կրասնոյե Սելո—դեպի Պետրոգրադ: Նա դիտեր, վոր այդ նրա վերջին ճիգն է, վոր թափում է Կատաղի մարտերի չորս ուղի ընթացքում լայն տարածված Վիսոցկոյե գյուղն ու մոտակա գյուղերը ձեռքեձեռք ելին անցնում, որվա մեջ մի քանի անգամ բռնամարտեր էլին լինում: Միայն կարմիր մարտիկները բացառիկ հերոսութունը կարողացավ դիմադրել կատաղած սպիտակ զվարդիականության ճնշումին, վոր գալարվում էր հոգեվարքային ջղաձգությունների մեջ:

Կարմիր մարտիկները ցուցաբերին անդուդական քաջազործութուն, սառնարյունութուն, սրամտություն և հնարամտություն. տղիւնությունը չէր դավաճանում զանցմարտի ամենապատասխանատու, ծանր մոմենտներին: Մենք չունեյինք վոչ տանկեր և վոչ հակատանկային հրանոթներ. մարտիկները թշնամու տանկերի դեմ կռվում էին սովորական նռնակներով: Վիսոցկոյե գյուղի մոտ կարմիր մարտիկների հարձակվող շղթաները դանդաղ էլին առաջ շարժվում մերկային կրակի տակ: Այն ժամանակ Կրասնոյե Սելոյի մար-



մերոնց, իսկ հետո, անտառից խփեցին մեր թևին Այն ժամանակ  
կարմիրները գիշերը անտառով թիկնանց կատարեցին Շելկովոյի մի-  
ջով: Մեր առաջնորդն էր Ռուսակին Անաաշից մի դյուղացի: Ամբողջ  
գիշերը անցնում էին անտառի կածանով: Առավոտյան դեմ կրկին  
դուրս յեկան խճուղու վրա, Նովո-Կեմպոլովոյի մոտ, սպիտակները  
թիկունքում և սկսեցին հարձակվել: Սպիտակներն այդպիսի հարված



Սխեմա 18. Մարտ Կասկովո դյուղի մոտ, 1919 թ. նոյեմբերի 6-7:

չեյին սպասում և միանգամից նահանջեցին դեպի Ստաբո-Կեմպո-  
լովո ու դուրս յեկան խճուղու վրա միայն Բ. Տեշկովոյի մոտ, Այգ-  
տեղից նրանք նահանջեցին դեպի Բեդուլիցի (սխեմա 18):


Բացառութիւն չէր Կասկովոյի տակ գիշերային համարձակ  
թիկնանցը: Վոչ պակաս ցուցադրական էր Վոլոսովոյի հարավային  
մատույցներում Զապոլյեյի և Ոգերտիցի համար մղած մարտը (սխե-  
մա 19):

Սպիտակ գվարդիականներն ամբացան յերկու ընդարձակ ճա-  
հիճների միջև գտնվող նեղ պարանոսի վրա: Նրանց աջ թևը հենվում  
էր Ոգերտիցի գյուղի մոտ Մորոշկովոյի ճահճի խրոտներին. ձախ  
թևը հենվում էր Սամարինոյի ճահճներին: Այդ յերկու ճահճներն  
էլ ծածկված էին անտառով ու թփուտներով և համարվում էին ան-  
անցանիլի: Սպիտակները կողմից գրաված գերքերի ճակատի առջե-

վում անմիջապես գտնվում էին փոքր լճակներ, Նրանց արանքները գտնվում էին գնդացրային խաչաձև կրակի տակ:

Կարմիրները փորձում էին Ջապոնյն վերցնել ուղղակի ճակատից դրոնի գնալով: Մոտեցրին հրետանին: Մեր զբառագնացները գնդակոծեցին յերկաթուղային գծանցից:

Հետո կրակ բաց արին մարտկ-ցով, և հետևակը գնաց հարձակման, բայց ստիպված եր լեռ քաշվել: Հրետանին արկակոծում եր որ ու գիշեր յերկու կողմից: Այն ժամանակ կարմիրները գիշերը շարժվեցին վոչ թե ճանապարհի յերկայնքով, այլ ճահճով ու անտառով, Մորոշիովոյի ճահճի միջով, Գնում էին առանց ուղեցույցի, կողմա-



Սխեմա 19. Մարտ Ջապոնյե և Ոգերաիցե գյուղերի մոտ:

ցույցով: Հաստոցավոր գնդացիները տանում էին իրենց ուսերի վրա՝ կազմատված վիճակում: Տեղ-տեղ գնում էին համարյա մինչև

գտարն ջրի միջով: Լուսադեմին հասան Ողերտիցի գյուղին և զուրս  
գալով սպիտակների թևն ու թիկունքը՝ միանգամից անցան գրոհի:

Սպիտակները փախուստի դիմեցին:

Այս ճակատամարտի յեղքով վճռվում էր Վոլոսովոյե լեռնաթու-  
զային հանգույցի բախտը:

Հրաձգային զնդերը, կուրսանապան և բանվորական զուսար-  
տակները, նավաստիների ջոկատները, լախորեն ոգտվելով աշնանա-  
յին յերկարատև գիշերների մթությունից և անտառաճանճային վա-  
րից, անցնելով հակառակորդի ամրացրած դիրքերի թևերն ու թի-  
կունքը, հաղթահարելով աշնանային աննպաստ յեղանակները, անց-  
նելով ճանճային գետերի հունով, իրենց յեռանդուն գործողություն-  
ներով հնարավորութուն չելին տալիս լիցնամուն յերկար կանգ առ-  
նել վոչ մի միջնական բնագծում, քրում էլին նրան դեպի արևմուտք:  
Մեր զորամասերին մեծ ոժանդակութուն էր ցույց տալիս տեղա-  
կան բնակչութունը: Ընճային ու անառատ անանցանելի աշտն-  
ներում կարմիր զորքերն ամբողջ մի շարք՝ կետեր վերցրին տեղա-  
կան գյուղացի սուղեցույցների ոգնության շնորհիվ: Որինակ՝ Ֆյոդորով-  
կա և Ուոլոյե գյուղերը վերցվեցին Լյալիցիի գյուղացի Ֆ. Ի. Մատ-  
վենկիի աջակցությամբ:

«Այդ ժամանակ ականջովս ընկավ, վոր մերոնց համար ուղեկից  
և հարկավոր դեպի Ֆյոդորովկա գյուղը, վոր գրավված էր սպիտակ-  
ների կողմից,—պատմում է ընկ. Մատվենկի:—Վորդուս ասացի,  
վոր նա գնա՛: Ուղարկեցի, բայց ինքս շատ անհանգիստ էլի նրա  
համար: Հետո արդեն վորդիս պատմեց, թե ինչպես է լեղել: Նրանք  
գնացել են վոչ թե ճանապարհով, այլ ճանիճներով. այսպես էր հրա-  
մայել հրամանատարը: Գնդացիները տանում էլին ձեռքով, հերթով:  
Ճանապարհի մի մասն անցնում էլին սողալով ձյունի ու ցեխի մի-  
ջով: Ամեն տեղ հանգիստ էր: Նույնիսկ վոչ վոք չեր հագում: Դրանից  
հետո, բոլորը լուսթյամբ, բայց արագությամբ առաջ նետվեցին: Մի-  
անգամից սկսեցին զնդացիները արաքաքաքոցները, լսվեցին բացա-  
կանչություններ: Վորդիս դեռ ուշքի չեկած, մերոնք արդեն գյուղումն  
են յեղել: Այդ ժամանակ սպիտակներն սկսել են փախչել...»:

Բազմաթիվ գյուղացիներ բանվորական ջոկատները մտան և  
գեները ձեռքներին թշնամուն քշեցին հարազատ Խորհրդային յերկրի  
սահմաններից:

### ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

7-րդ և 15-րդ բանակների զորամասերը հարձակում ձեռնարկե-  
ցին սպիտակների դիրքերի վրա Յամբուրգի մոտ և միտամանակ

Յամբուրգի խճուղու, Բալթյան յերկաթուղագծի և ապակու գործարանի մոտով, Լուգա գետի յերկայնքով:

Սպիտակները հրեաանու պաշտպանությամբ նահանջեցին գետի իրենց զլխավոր գիրքերը՝ Կոսկոլովկա գետի մյուս կողմը: Նոյնմբերի 14-ի առավոտից մարան սկսվեց ամբողջ գծում: Գրոհելու մեր փորձերը յետ ելին մղվում սպիտակ գվարդիականների կրակով: Հրետանային կրակ տեղի ուներ վիթխարի լարվածությամբ: 17-րդ հրաձգային գունդը հարձակվում եր անտառի միջով: Ծ-ըզ վաշտի հրամանատարը հրամայեց իր տեղակալին շարունակել գնդացրալին կրակը, իսկ ինքն իր ընտրած միջանի լավագույն մարտիկների հետ սողաց գետի հակառակորդի դիրքերը և նունակներ նետեց սպիտակների վրա: Հակառակորդը զլուխը կորցրեց. վաշտի հրամանատարը հրաման տվեց՝ «գետի գրոհ, հուռուս» և իր յետից տարավ ամբողջ վաշտը: Սպիտակները նետեցին իրենց զենքերը:



Սպիտակ գվարդիական խրամատի Մացորդների Յամբուրգի (այժմ Կենդիսեպ) մատույցներում:

Ծ-ըզ վաշտի կողմից ճակատը ճեղքելուց հետո մարտիկները նետվեցին գրոհի՝ գնդի ամբողջ ճակատով, և հակառակորդն անձնատուր լեզավ: Գերիններն այնքան շատ ելին, վոր նրանց թիկունք ուղարկելու համար քիչ ելին ուղեկցորդները: Սկսեցին գերիններին ուղարկել առանց ուղեկցորդների. ցույց ելին տալիս նրանց միայն շտաբի ուղղությունը, և նրանք ներկայանում ելին այնտեղ առանց զենքի: Մասսայական ձևով սպիտակների գերի ընկներն ապացույց

եր, վոր Յուզենիչի բանակը քայքայվում էր Մեր զորամասերը նեակվեցին դեպի Յամբուլ գաղաթի ժայռամասը:

Սպիտակ գվարդիականները միաժամանակ դուրս քշվեցին նաև իրենց ձախ թևի դիրքերից: Կարմիրները հարձակվում էին Կամենալացկոյի դետակից սկսած անտառի միջով: Յերկար ժամանակ յերկու կողմերից էլ չեր դադարում հրետանու և գնդացիների անազորուն կրակը: Չնայած այդ կրակին մեր շղթաներն առաջ էին նետվում համարձակորեն և, վերջապես, անցան դռո՛ր: Լավեցին ձեռքի նոսակները պայթյունների ձայները, վոր կարմիր բանակայինները տեղում էին սպիտակների ու նրանց խրամատների վրա: Միաժամանակ մեր զորամասերը վերցրին Մալ. Լուցկ գյուղը և ճեղքեցին Կոստոլովկա գետի պաշտպանութան գիծը. այդ գետը վտարով անցան մեր զորամասերը: Սպիտակները նահանջեցին դեպի Լուզա գետը և Բուլ. Լուցկ գյուղը: Այստեղ վերսկսվեց կատաղի մարտը. սպիտակներն արդեն յերկար դիմանալ չէին կարող: Նրանք փայտյա փովածք էին պատրաստել Բուլ. Լուցկի մոտ Լուզա գետն անցնելու համար: Նրանք այդ փովածքով գետն անցան և իսկույն վոչնչացրին այն: Հենց այդ միջոցին կարմիրները գրավեցին Յուրկինո և Կուզմինո գյուղերը և ներխուժեցին քաղաքը հյուսիսային կողմից: Սպիտակները նահանջեցին դեպի Ալեքսանդրովսկայա գորկա—Կամոտկա—ժարինո գիծը: Համարյա միևնույն ժամանակ սպիտակ գվարդիականների դիրքերը ճեղքվեցին նաև Բալթյան յերկաթուղու յերկայնքով:

Սպիտակները ցույց տվին Կատաղի դիմադրութուն: Մեր շղթաները գետնին սեպվեցին: Այն ժամանակ «Ձերնոօրեց» զրահագնացքն առաջ շարժվեց, անընդհատ կրակ վարելով թնդանոթներով ու գնդացիներով: Սպիտակները չդիմացան և սկսեցին նահանջել: Առաջ նետված կուրսանտներն ու նավատիները ներխուժեցին սպիտակ գվարդիականների խրամատները. բացված եր մուտքը դեպի քաղաք: Առաջինը քաղաքի հարավային մատուցների սպիտակ գվարդիականների խրամատները ներխուժեց 19-րդ դիվիզիայի 163-րդ հրաձգային գունդը:

Գունդը հարձակվում էր Մշինսկայայից Լուզա գետի յերկայնքով: Մոտենալով Յամբուլգին, նա հայտարարեց սպիտակ գվարդիականների ամբուժյունները վազույ գետի աջ (հյուսիսային) ափում: Այստեղ սպիտակները նախորոք պտտրաստել էին խրամատներ 3-4 շարք լարափակոցներով: Ճանապարհը դրված եր թնդանոթ: Բացի դրանից, յերկաթուղագծի վրա գործում էր զրահագնացք՝ հոգով լցված պարկեր դարսած բոց վազոններով:

Գունդը յերկու անգամ հարձակման գնաց, իր ձախ թևով գըր-

խովոր հարվածը հասցնելով Լուգա գետի յերկայնքով: Մեր մարտիկները գնդացրոյին և հրետանական մրրկային կրակի տակ հսկայական կորուստներ եյին կրում և յերեմն ստիպված եյին կանգ առնել, Շատ գնդացրորդներ դուրս յեկան լարրից: Սողալով առաջ եյին շարվում հետախույզները լարափակոցները կտրատելու համար: Թշնամու գնդացիրը հարկադրեց նրանց պտուկել խրամում լարափակոցից 50 մետրի վրա: Այդ ժամանակ մերոնք առաջ ընկին Թնդանոթը ամենաառաջավոր շղթան և սկսեցին գնդակոծել սպիտակների կրակային կետերն ուղղակի ժոտիկից: Հետևակը վտարեց կանգնեց և նորից գնաց գրոհի: Վորտացին մեր գնդացիրները: Հետախույզները նրանց կրակի պաշտպանութամբ արագութամբ կտրատեցին լարափակոցների լարերը, և դունդը ներխուժեց սպիտակ զվարդիական խրամաները:



Սոճի «Հինգ հարյուրի պարակուժ», վրի վրա սպիտակ զվարդիականները կտրում եյին էրենց գոհերն:

Այսպես միոժամտունակ մի քանի տեղ ճեղքվածքներ՝ յեղան սպիտակ զվարդիական խրամաներում: Մեր զորամասերը զանազան չտեղերից խուժեցին քաղաք: Թշնամին վճռական պարտութուն՝ կրեց:

\* \*

Յամբուրդը վերցված եր: Քաղաքի համար մղած մարտերում համարյա ամբողջութամբ վոչնչացավ սպիտակներից 2 դունդ, նրանցից մեկը Թալբայան դունդն եր: 600 սպիտակ զվարդիականներ գերեւնկան: Մենք վերցրինք հետեվյալ ռազմական ավարը՝ 20 գնդացի, 3 հրանոթ, Թալբայան գնդի զրոշը, մեկ զրահապատ, վոր առաջ սպիտակ զվարդիականները մեզանից խել եյին հերստովոյի տակ, դումակը և ռազմական այլ դույք: Քաղաքում ազատեցինք մեզանից գերեւնկած մինչև 500 հոգու:

Սպիտակները ծանր ժառանգութուն եյին թողել մեզ: քաղաքում վառվում եյին բնակելի տներն ու կից կառուցվածքները, այլև

դինվորական զորանոցները: Փողոցներում կարածված էյին կապի  
լարերը:

Քաղաքում շատ տեղեր կապված եր սպիտակների վայրագ,  
հրեշավոր ախրապետութեան հիշողութեաններէ հետ: Որինա՛կ՝ քա-  
ղաքում բոլորը դիտեն «Հինգէնարյուրի պուրակը»: Այդ սոճիների մի  
փոքրիկ պուրակ է քաղաքի հյուսիսային մասում գերեզմանոցի և  
կալազորային հրաձգավայրի միջև: Այստեղ էյին բերում ամեն որ  
սպիտակները դատապարտվածներին զնդակահարելու և կախելու հա-  
մար: Թե աղամարդիկ և թէ կանայք զոհ էյին զնում սպիտակ դժար-  
գիական անողորմ տեւորին: Սպիտակները դաժանորեն զնդակահա-  
րում էյին գերի վերցրած հրամանատարներին ու կարմիր բանակա-  
յիններին, կոմունիստներին ու կոմյերիտականներին, չքավոր գյու-  
ղացիներին, վորոնք ձերբակալվում էյին կուլակների ու գյուղի



Խրամներ, վորտեղ սպիտակները զցում էյին զնդակահարվածների  
գիակները:

աերտերների մատնութեաններով: Գնդակահարութեանն ու կախաղա-  
նը ողաւնում էյին բոլոր նրանց, ովքեր թեկուզ աննշան չափով  
կատկածի էյին յենթարկվում խորհրդային իշխանութեանը համակ-  
բելու մեջ: Դատապարտութեանը հասարակ ձևականութեան եր: Շատ  
զնդակահարութեաններ կատարվում էյին առանց դատավարութեան:  
Սպանվածների սմարմինները սպիտակները նետում էյին խրամների  
մեջ և հազիվ ծածկում բարակ շերտ հողով: Յամբուրգն ազատագրելուց  
հետո, այդ խրամները լիքն էյին չթաղված գիակների կույտերով:

Սպանված մարտիկներն ու սպիտակ գվարդիական տեղորդի զոհերը թաղված են Լուզա գետից վոչ հեռու, Կարլ Մարքսի պողոտայի վրա, յեղբայրական դերեզմանատանը: Առաջին անգամ այստեղ թաղվեցին հերոսական մահով ընկած կոմիսար ընկ. Բարանովը և 13 կարմիր բանակային: Յամբուրգը սպիտակ գվարդիական սկուպացիայից ազատագրելուց հետո, «էինգ հարյուրի տուրակից» այստեղ տեղափոխվեցին և թաղվեցին զոհված ընկերներին մարմինները:

Գերեզմանի վրա կանգնեցված է լայն ու հարթ քարե պատվանդան՝ կենտրոնում կոթող (որելիակ): Շուրջը ծաղկանոց է պատրաստված:

Աշխատավոր բնակչութունը հրեզվանքով դիմավորեց մեր զորքերին քաղաք մտնելիս, սաստիկ տանելութուն տածելով դեպի դահիճները, վորոնք փորձում էին հրով ու սրով, կախաղաններով, դժդահահարութուններով ու կատանքով վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների անիծյալ իշխանութունը:

### ՅՈՒԴԵՆԻՉԻ ԲԱՆԱԿԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱՅՃԱՆԸ

Յամբուրգի գրավումով և մեր զորամասերի՝ Լուզա գետի ձախափն անցնելով կործանիչ հարված եր հասցված Յուդենիչի Հյուսիսարևմտյան սպիտակ բանակին: Արևմտյան ճակատի հրամանատարութայն կողմից առաջադրված խնդիրը կիսով չափ կատարված էր: Պետրոգրադն ազատագրված էր սպիտակ գվարդիական սկուպացիայից: Մոտև էր մինչև վերջը ջախջախել Յուդենիչին, վորպեսզի նա ընդմիջտ հնարավորութունը չունենար կրկին ներս սողոսկելու մեր խորհրդային յերկրի սահմանները:

Հյուսիսարևմտյան սպիտակ բանակը, մարտերում ջախջախված, տնընդհատ նահանջներից կազմալուծված, Յամբուրգից նահանջելուց հետո կենտրոնացավ Յամբուրգ—Նարվա յերկաթուղագծի ուսյոնում և Նրանից դեպի հարավ ու հարավ-արևմուտք, Պլյուսս և Նարվա գետերի ուսյոնում: Սակայն բանակը տակավին կենդանի ու ընդունակ էր իր հոգևարքի շղաձուլթյուններում ինչպես սատկող իժ խայթելու մեր հարձակվող զորամասերին:

Յամբուրգը վերցնելուց հետո կատաղի մարտեր տեղի ունեցան նրա արևմտյան կողմում՝ Ժարինո—Կամոտկա—Ալեքսանդրովսկայա գորկա յերկաթուղագծի վրա, Սալա կիսակայարանից դեպի արեվելք (սխեմա 20):

Սպիտակների դիրքերն առանձնապես ուժեղ էին Ալեքսանդրովսկայա գորկայի մոտ: Քարաշեն դպրոցը հարմարեցված էր համա պաշտպանության համար: Բաց մատուցները խիստ դժվարաց-



կատարվեց անտառի կողմից, միաժամանակ Նարվայի խճուղուց գրոհելով ժարինո—համոտկայի վրա, Դրանից հետո, սպիտակ գվար-դիտականները նահանջեցին Կոշկինո—Սալա—Դուբրովկա գծի վրա, վորսեղ համառ մարտերով կրկին փորձ արին կանգնեցնել մեր հարձակումը:

Մեր զորամասերը շարունակեցին իրենց հարձակումը՝ հաղթա-հարելով սպիտակ գվարդիականների համառ դիմադրութունը: Կար-միր բանակայիններն ուժասպառ ելին լեղել յերկարատև մարտերից, մտղել ելին հազուստներն ու վոանամանները, ցրտերն օկսվում ելին, իսկ տաք հանգերձանքի տեղափոխութունը վաս եր կազմա-կերպված: Զորամասերում լեղան ցրտահարության դեպքեր: Այնու-ամենայնիվ, վոչ մի դժվարութուն չկասեցրեց մեր հարձակումը: Յեխին ու ձուռնին, աշնանային անձրևներին ու ձմեռվա սառնամա-նիքին կարմիր բանակայինները, բանվորական ու պարտիզանական ջոկատները քայլ առ քայլ, առանց շեղվելու նեղում ելին սպիտակ-ներին Նարովա գետի մոտ:

Հարավից հարձակվում ելին 10-րդ հրաձգային զիվիզիայի զորամասերը Գոդով—Նարվա յերկաթգծի յերկայնքով: Այստեղ ից փաստական ավարտումն եր ստանում Արևմտյան ճակատի հրամա-նատարության ուղերատիվ պլանը, վոր նա կազմել եր դեռևս հոկ-տեմբերի կեսերին: Դաժան մարտերից հետո 10-րդ և 11-րդ հրաձգա-յին յիվիզիաների զորամասերը դուրս լեկան սպիտակ գվարդիական-ների թևն ու թիկունքը և անմիջապես սպառնում ելին շրջապատել նրանց: Դրանով և բացատրվում այստեղ կատարված կռիվների հա-մառ լինելը:

Դուբրովկայի մոտ սպիտակները հիանալի գնդակոծի տարա-ծություն ունեյին ամբողջ լեղու կելումեարի վրա. նրանք տառացի-որեն հնձում ելին հարձակվող կարմիրներին իրենց գնդացրալին կրակով: Այնուամենայնիվ 12-րդ հրաձգային գնդին հաջողվեց անց-նել սպիտակների թիկունքը: Հուսալի, Յուգենիչին նվիրված զորա-մասերը կովում ելին համառորեն. նրանցից քչերը մնացին արդ սվե-նամարտից հետո: Յուգենիչին ահա այսպես եր բնութագրում դրու-թյունը Եստոնիայի գլխավոր հրամանատար գեներալ Լայդններին ուղարկած իր հեռագրում.

«Կարմիրները գերազանց ուժերով համառորեն զրոհում են և տեղ-տեղ նեղում են ինձ հանձնված բանակի զորամասերին, առանձ-նապես Գոդովի կողմից: Ամենասանշան անհաջողությունը կարող և խուճապ ստեղծել թիկունքում և կատարորո՞փի ու ամբողջ բանակի կործանման պատճառ լինել: Անհրաժեշտ և վոչ ուշ, քան վաղը, բոլոր

Թիկունքները տեղափոխել նարովայի ձախ թելը նախատեսում եմ  
կետագա նահանջի հնարավորութունն և նույնիսկ անխուսափելիու-  
թյունն...»:

Յուզիկները բանակել շարքերում սկսվել էր լիակատար քայքայ-  
յում, Դրան զարկ էր տալիս վերնախավը, վորի մեջ քայքայումն  
սկսվել էր շատ առաջ, «Ջեղծարարութունները, հափշտակութուն-  
ներն էլին թագավորում ամենուրեք, կենտրոնական բարձր վարչու-  
թյուններից ու շտաբներից սկսած մինչև վաշտային շտաբներն ու  
արհեստանոցները, Սպեկուլյացիան ծաղկել էր պերճ գույնով: Խաղ  
էր սարքված անբախտ բանակի տանջանքների հաշվին, և այդ խա-  
ղին մասնակցում էին բոլոր մութ տարրերը՝ աստիճաններից ու կո-  
չումներից անկախ»,—գրում է սպիտակ գվարդիականութան ղեկա-  
վարներից մեկը—Գ. Ի. Դրոստենն իր հիշողություններում:

Դեկտեմբեր ամսին խիստ ավելացավ սպիտակ փախսականների  
հասանքը: «Պյատա գետի վրա մերոնք հարձակվում էին յերկու  
զրահապատներով,—պատմում է այդ մարտերին մասնակցողներից  
մեկը:—Սպիտակները զրահագնացքի հետ դարան էին մտել գետի  
յետևում. նրանք հրետանային և գնդացրային կրակը հարկադրում էր  
մեզ ամեն անգամ յեա քաշվել, լերը մենք հարձակման էլինք անց-  
նում: Մերոնք Թիկնանց կատարեցին ճահիճների միջով: Սպիտակ-  
ները հույսները կորցնելով, թե կկարողանան պաշտպանել յերկաթուղա-  
յին կամուրջը, պայթեցրին այն, այրեցին նրան կից փայտյա կամուրջը  
և նահանջեցին գետից: Գիշերը հետախուզութունը գեկուցեց, վոր  
սպիտակների խրամատներից շարժման ձայներ են լսվում: Մերոնք  
խուզվեցին ևնթ շլթա կապեցին: Գնդացիները լիակատար պատրաստա-  
կանության էին բերված: Թույլ տվինք, վոր սպիտակներն ընդհուպ  
մոտենան: «Ո՞վ է գալիս»:—Սպիտակները:—«Ի՞նչմը յեք գալիս»:—  
Անձնատուր լինելու:—«Մեկ-մեկ յեկեք»: Առաջ է գալիս առաջինը և  
հարցնում է. «Ո՞ւր է ձեր հրամանատարը»: Առաջ յեկավ մեր վաշտի  
հրամանատարը: Սպիտակ սպան ներկայանում է. «Վյատկայի 2-րդ  
գնդի 6-րդ վաշտի հրամանատար»: Յեվ հանձնում է նագանը: Այնու-  
կետև մեկ-մեկ զինվորները հանձնում են հրացանները: Ընդամենը 52  
մարդ:

Դրանից հետո փախստականների թիվը քանի գնում ավելանում  
էր. իսկ դեկտեմբեր ամսի յերկրորդ կիսին մեր կողմն անցնելու  
գեպքերը մասսայական բնույթ էին չյում: Հյուսիս-արևմտյան բա-  
նակն արագաթափ գեպի իր անփառունակ վախճանն էր ընթանում:  
Մատնական գեներալ Տենիսոնն այսպես էր բնութագրում Յուզիկների  
բանակի վիճակը. «Հյուսիս-արևմտյան բանակն արդեն գոլութուն  
չունի, կա միայն մարդկային փոշի»:

Յեղ իրոք, Յուդենիչի բանակի քայքայումն ու կազմալուծումը ծավալվում էին կայծակի արագութեամբ: Գիշերները կարմիր բանակայիններն սկսել էին խարույկներ վառել, վորպեսզի ցույց տան հանապարհը փախստականներին, Հյուսիս-արևմտյան բանակը վախահանվում էր: 1919 թ. դեկտեմբերի վերջին հաշտություն կնքվեց խորհրդային կառավարության և Սատոնիայի միջև, և դրանով վերջ արվեց Յուդենիչի անփառունակ բանակի գոյությանը: Այդ ժամանակ ընդամենը մեր կողմն էին անցել 7611 սպիտակներ: Հյուսիս-արևմտյան բանակից նախկին սպաների, մոլի հակահեղափոխականների, դավաճանների աննշան թվով մնացորդներն անցան Նարովա գետը և դնացին Սատոնիայի տերիտորիան:

1919 թ. աշնանն ու ձմեռը մենք վճռական հաղթանակներ ձեռք բերինք հակահեղափոխության դեմ մշած պայքարի բոլոր ճակատներում: Այդ ժամանակ Ստալինի հանճարը կազմակերպեց հարավային հակահեղափոխության ջախջախումը Վորոնոսի, Որյոլի և Կոստրոնայի տակ, վորից հետո գեներալիտյան բանակները կրեակալու փախան դեպի հարավ:

Արևելքում ջախջախվեց Կոլչակը: Նրա բանակները կատարելապես կազմալուծվեցին, իսկ 1920 թ. հունվարին Կոլչակը ձերբակալվեց և գնդակահարվեց: Հյուսիսում, ինտերվենտների հեռանալուց հետո, սպիտակ գվարդիականների զորքերն սկսեցին արագ քայքայվել և տեղ-տեղ անցնել մեր կողմը: Ծրդ բանակի գործաժատների ձեռնարկած հարձակման հետևանքով 1920 թ. փետրվարի վերջին ինտերվենտներից ազատագրվեցին Արխանգելսկն ու Մուրմանսկը:

Անտանտի յերկրորդ արշավը նույնպես, ինչպես և առաջինը, վերջացավ նրա կազմակերպիչների համար լիակատար անհաջողութեամբ:

Հաղթական Կարմիր Բանակի հաջողությունները բոլոր ճակատներում հարկադրեցին բուրժուական Սատոնիային մեզ հետ բանակցություններ սկսել հաշտության վերաբերյալ: Դորպատում (նախ. Յուրյիվ) փետրվարի 2-ին մենք հաշտության պարմանագիր կնքեցինք Սատոնիայի հետ: Այդ պայմանագիրը ցույց տվեց լենինյան ստալինյան ազգային քաղաքականութեան հաստատուն լինելն ու հետևողականութունը, քաղաքականությունը, վորը բոլոր ազգերին վերապահում է ինքնորոշման իրավունք:

Քշնամիներէ դեմ հաղթանակը ձեռք բերվեց ծանր կորուստներէ զնով, Հազարավոր հերոս կարմիր բանակայիններ, կուրսանտներ, նազաստիներ, բանվորներ իրենց կյանքը զոհեցին Լենինի քաղաքի մատուցներում և հետագա մարտերում՝ Չխիջախելով անիծյալ թշնամուն, Առանձնապես մեծ էջին կորուստները հրամանատարական և քաղաքական կազմից: Յեղան տյնպիսի զորամասեր, վորտեղ հրամանատարներից ու քաղաշխատողներից մեկ-մեկ հոգի էջին վողջ մնացել:

7-րդ բանակը հոկտեմբերի 20-ից մինչև Նորվալի ուպերացիան, վող լրիվ տեղեկութուններով, կորցրեց 10 հազարից ավելի վիրավոր, հազարից ավելի կոնտուզիա ստացածներ, 8 հազարից ավելի հիվանդներ ու ցրտահար յեղածներ, լերկու հազարից ավելի սպանվածներ:

Բանակի՝ 20—25 հազար մարտիկների ընդհանուր քանակության դեպքում, այդ նշանակում էր, վոր ճակատ լեկած բոլոր զորամասերը լրացնում էին միայն կորուստները: Այդ թվերը պայծառորեն վկայում են Հյուսիս-արևմտյան սպիտակ բանակի դեմ մղվող կռիվների բացառիկ համառության և առողջության մասին, Կարմիր Պիտերը պայտապանող մեր մարտիկների արիւթյան և հերոսության մասին, վորոնք իրենց կյանքի գնով պայտապանեցին պրուտարական հեղափոխության մեծ նվաճումները: Պուտիլովի, Իժորայի, Շլխսելբուրգի և մյուս գործարանների ու ֆարբիկների բանվորական ջոկատները անվեհերությամբ մարտնչում էին ձեռք-ձեռքի աված Բալթյան նավատորմի նավատիների և կուրսանտական գումարտակների հետ միասին: Ռազմա-ինժեներական տեխնիկումի կուրսանտների գումարտակը, կորցնելով իր կազմի մինչև 80 0/0-ը, այնուամենայնիվ, չնահանջեց Պավլովսկի վրա բուռն հարձակում գործող թշնամու առաջ:

Նույնը պետք է տեսլ նաև լատիշական հրաձիգների, 470-րդ հրաձգային գնդի մարտիկների մասին, 21-րդ հրաձգային դիվիզիայի 3-րդ բրիգադի գնդերի մասին: Կոմունիստական հազարական գումարդ բաղամթիվ անգամ սվինամարտի գնաց՝ իր յետևից տանելով կարմիր բանակային զորամասերը և դուրս քշելով սպիտակ զվարդիտականներին նրանց խրամատներից:

Առանձնահատուկ պատվավոր տեղ պետք է տալ մեր պանծալի կուրսանտներին ու նավաստիներին, նրանք ուղարկվում էին այնտեղ, վորտեղ անկայունություն էր ստեղծվում, և նրանք պատվով էին կատարում իրենց առաջադրված մարտական խնդիրները: Նովգորոդի և Զերկասկի կուրսանտներն իրենց դրոշներն անթառամ փոռքով պահեցին Կարմիր Պիտերի մատուցների համար մղված բեկումնային

մարտերում: Բալթյան նավաստիները Կրասնոյե Սելոյի մոտ գնդա-  
ցրային կրակի տակ զրոհի գնացին՝ առանց լքուխները խոնարհելու:  
Պիտերի կուրսանաները Պնատովո և Նովիյ Բուգոր գլուղերի տակ  
չստատանվեցին տանկային զրոհի առաջ, ընդհուպ գնդակոծելով թշնա-  
մուն զրահահար գնդակներով:

Լենինը հաղթանակի առթիվ շնորհավորելով Պիտերի պրոլետար-  
ներին՝ գրում էր.

«Պորրդային հանրապետության լերկամյա տարեդարձի որը  
առաջին վողջույնին արժանի յեն Պետրոգրադի բանվորները, Պետրո-  
գրադի բանվորները, վորպես հեղափոխական բանվորների ու զին-  
վորների ավանգարդ, վորպես Ռուսաստանի և համայն աշխարհի աշ-  
խատավորների ավանգարդ, առաջինը տապալեցին բուրժուազիայի  
իշխանութունը և բարձրացրին պրոլետարական հեղափոխության  
դրոշը ընդդեմ կապիտալիզմի ու իմպերիալիզմի...»

Հենց վերջին օրերին անգլիական ռեակցիոներ իմպերալիստ-  
ներն իրենց վերջին խաղաթուղթը դրին Պետրոգրադը վերցնելու հա-  
մար: Ամբողջ աշխարհի բուրժուազիան, և՛ ռուսականն առանձնապես,  
արդեն կանխապես վախելում էր հաղթանակը: Սակայն նրանք հաղ-  
թանակի փոխարեն հարված ստացան Պետրոգրադի տակ:

Յուդենիչի զորքերը ջախջախված են և նահանջում են:

Ընկեր բանվորներ, ընկեր կարմիր բանակայիններ, լարեցեք բոլոր  
ուժերը: Ինչ գնով ուզում ե լինի՝ հետապնդեցեք նահանջող զորքերին,  
հարվածեք նրանց, հանդիսա մի տաք նրանց վոչ մի ժամ, վոչ մի բուպե:  
Այժմ առավել ևս մենք կարող ենք և պետք է հարվածենք վորքան  
կարելի յե ավելի ուժեղ, վորպեսզի վերջնականապես ջախջախենք  
թշնամունքը<sup>1</sup>:

Լենինի քաղաքի բանվորները, Բալթյան նավաստիները, կարմիր  
բանակայիններն ու կուրսանաները խանդավառությամբ կատարեցին  
այդ կոչը:

Անմահ են կարմիր Պիտերի հերոսական պրոլետարիատի սիրա-  
զործութունները: Նա յեր, վոր մահացու վտանգի մոմենտին 7-րդ  
բանակի զորամասերի շարքերը մտավ, վոր ուժասպառ էր: Թվում էր  
թե բոլորովին կորցրել է մարտնչելու ընդունակութունը, և վոզիչնչեց  
նրանց իր յեռանդով ու դեպի հաղթանակն ունեցած հաստատակամու-  
թյամբ: Այդ նա լեր, վոր հանձին իր լավագույն զավակների, հանձին իր  
կոմունիստական և կոմյերիտական ավանգարդի, հանդի-ացավ այն  
ցեմենտը, վորը միաձուլեց 7-րդ բանակը մի անպարտելի ուժի մեջ  
հերոսական քաղաքի մատուցներում:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Յարկեր, հաս. XXI V, էջ 516:

Կարմիր Պիտերի պաշտպանութունն անխզելիորեն կապված է ժողովուրդներին մեծ առաջնորդ Ստալինի անվան հետ: Պետրոգրադի պաշտպանության գործում, ինչպես հալելու մեջ, արտացոլվեցին նրա իմաստությունը, արտասովոր խորաթափանցությունը, սպեռատիվ և սարսափազիական արվեստի բարձր վարպետությունն ու յերկաթե կամքը: Ստալինը սովորեցրեց Պիտերի պրոլետարիատին, թե ճակատում ինչպիսի կազմակերպվածություն պետք է լինի թշնամու դեմ զինված պայքարում, վոր հեղափոխական չթուլացող արթուն զգուսություն պետք է ունենալ թիկունքում դասակարգային թշնամու նկատմամբ: Ստալինյան պլանի կատարումն ապահովեց Պիտերի պրոլետարիատի հաղթանակը թշնամու դեմ:

1919 թ. դեկտեմբերի 5-ին բացված Խորհուրդների VII Համառուսաստանյան համագումարը վորոշեց Պետրոգրադին նվիրել կարմիր դրոշ Կարմիր դրոշի շքանշանով, Կարմիր Պետրոգրադը խորհրդային քաղաքներից առաջինը արժանի կերպով դարձավ շքանշանակիր քաղաք:

Այդ ժամանակից անցել է տասնութ տարի:

ԽՍՀՄ բանվոր դասակարգը, հաղթականորեն ավարակելով քաղաքացիական պատերազմը, Լենին-Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ, ժողովրդի բոլոր թշնամիներին դեմ մղած անհաշտ պայքարում ձեռք բերեց համաշխարհային-պատմական հաղթանակներ սոցիալիզմի շինարարության գործում: Այդ շինարարության մեջ Լենինգրադի բանվորները հավատարիմ մնացին իրենց հեղափոխական լավագույն արագիցիաններին: Մեծ Ստալինի բարեկամ և զինակից Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ նրանք ընթանում եյին մեր սոցիալիստական շինարարության առաջին շարքերում, կատարելով և գերակատարելով ստալինյան հնգամյակները: Բանդիտների, լրտեսների ու դիվերսանտների արոցկիստական-զինովյեմական-բուխարիական հանցագործ ֆաշիստական շայկայի վոչ մի դավադրություն չկարողացավ սասանել Լենինգրադի պրոլետարիատի յերկաթե շարքերը: Մենք մատահությամբ ու հաստատաքայլ դեպի սոցիալիզմ ենք ընթանում, դեն նետելով արոցկիստաներին, վորոնք փորձում են շեղել կուսակցության լենինյան ուղուց, — ասում եր Սերգեյ Միրոնովիչը, կործանիչ հակահարված է-սցնելով բանվոր դասակարգի գարշելի թշնամիներին, վորոնք ձգտում են իրենց քայքայիչ աշխատանքով հող պատրաստել մեր յերկրում կապիտալիստական սաբրկությունն ու ֆաշիստական բռնությունը վերականգնելու համար:

Պիտերի պրոլետարների սիրելի առաջնորդ Ս. Մ. Կիրովը զոհվեց իր պոստում արոցկիստական-զինովյեմական բանդիտների-ֆաշիստների կողմից ուղարկված անարգ մարդասպանի ձեռքով: Այդ

մեծ կորուստի ծանրութեան տակ Պիտերի պրովետարներն եւ ավելի սերտորեն համախմբվեցին բողոքիկներէ կուսակցութեան շուրջը: Այդ կորուստը, ինչպիսիք և քաղաքացիական պատերազմի տարիներին, չառաջացրեց վոչ շփոթմունք և վոչ վհատութիւն նրանց շարքերում, ինչի վրայ վոր հույս եր գրել նենգ թշնամին, այլ ընդհակառակը, այդ կորուստն ավելի յեռանդ ու համառութիւն մտցրեց սոցիալիստական մեծ շինարարութեան մեջ: Պիտերի պրովետարները, ի պատասխան այդ նենգ սպանութեան, եւ ավելի բարձր պարզեցին սոցիալիստական մրցակցութեան դրոշմ և դուրս յեկան ստախանովականների մեծ բանակի առաջավոր շարքերը: Իրանով նրանք մի անդամ ևս ցույց տվին իրենց աներեր հավատարմութիւնը հեղափոխական լավագույն տրադիցիաներին:

Իգուր չեր, վոր ընկեր Կիրովը, քաջ ճանաչելով Պիտերի բանվորներին, հարազատորեն զողված նրանց հետ իր ամենորոյա աշխատանքում, ասում եր բողոքիկյան կուսակցութեան XVII համագումարում:

«Մեզանում, որինակ, Լենինգրադի բանվորներն ասում են, վոր Լենինգրադում մնացել են միայն հեղափոխական հին սքանչելի արտգիցիաները, մնացած բոլորը նոր ե»:

Ինչպէս կարելի յէ համեմատել, ասենք թէ, 1936 թ. Կիրովյան գործարանը 1913 թ. Պուտիլովյան գործարանի հետ, յերբ նրա արտադրանքն այժմ աճել է 11 անգամ: Իսկ մյուս գործարանները, Մաքս Հելցի անվան գործարանի արտադրանքն աճել է 40 անգամ, «Կրասնայա դարյա» գործարանի արտադրանքը—23 անգամ, կոչկեղենի «Սիլորիտոդ» գործարանի արտադրանքը—10 անգամ, «Կրասնայա զնամյա» գործարանի արտադրանքը—30 անգամ և այլն: Մի անգամայն ակնհայտ է, վոր Լենինգրադի արդյունաբերութիւնը—այդ բոլորովին տարբեր արդյունաբերութիւն է, համեմատած ցարական մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգի արդյունաբերութեան հետ: Լենինգրադի պրովետարիատը, հավատարիմ ստալինական ընկ. Ժղանովի ղեկավարութեամբ, հաղթանակից դեպի հաղթանակ է ընթանում սոցիալիստական շինարարութեան բոլոր ճակատամասերում:

Մեր քաղաքացիական պատերազմի հերոսական անցյալը շարունակում է վառ մնալ մեր սքանչելի Հայրենիքի բոլոր ժողովուրդների դիտակցութեան մեջ: Աշխատավորները Ստալինյան Սահմանադրութեան մեջ տեսնում են իրենց սքանչելի իղձերի կենսադրոծումը, վորոնց համար մարտի ելին գնում սպիտակ գլարդիականների և ստաբերկրյա գավթողների դեմ քաղաքացիական պատերազմի տարիներին: Մեր անձալրածիր Հայրենիքի միլիոնավոր աշխատավորների զգացմունքները պայծառորեն արտահայտեց Սահմանադրութեան

մեծ ստեղծող ընկեր Սաալինը, նա ԽՍՀՄ Խորհուրդների VIII Արա-  
կարգ համագումարում իր գեկուցման մեջ ասաց.

«Վորպես արդյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու՝  
հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրությունը,  
վորը խոսում է մեր հաղթությունների պտուղների մասին, Հաճելի  
ու բերկրալի յե գիտենալ, թե ինչի համար են մարտնչիլ մեր մար-  
գիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական  
հաղթությունը, Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, վոր մեր մարգ-  
կանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի տնցել, վոր այդ  
արյունն իր արդյունքներն է տվել: Այդ հոգեպես զինում է մեր  
բանվոր դասակարգին, մեր գյուղացիությանը, մեր աշխատավոր  
ինտելիգենցիային: Այդ առաջ է մղում և բարձրացնում է որինական  
հոգարաության զգացմունքը: Այդ ամբողջում է հավատը դեպի մեր  
ուժերը և մտքի լիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի  
նորանոր հաղթություններ նվաճելու համար»:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Թեմամից կարմիր Պիեերի դռների մաս

Յամբուրգի և Պսիոփի անկումը . . . . .	5
Սպիտակները դազանությունները . . . . .	16
Ճակատը տասանօրից . . . . .	81

## Ի. Վ. Սալիկը Պետրոգրադի ետկասում

Պետրոգրադի նակատը, լսողիկա Հանրապետության ամենակարևոր նակատը . . . . .	29
Հարված քիկունքի հակահեղափոխությանը . . . . .	31
Բուրքը դեպի Պրտերի պաշտպանությունը . . . . .	35
Պատվության լիկվիդացիան «Կրասնայա Պորկայում» . . . . .	40
Կարմիր նավաստիների հերոսական դործողությունները . . . . .	47
Դեպի հարձակում ամբողջ նակատով . . . . .	49
Սպիտակների ջախջախումը 1919 թ. ամառը . . . . .	53

## Անարկուս որեր (1919 թ. առուն)

Յուդենիչի յեղկորդը արշավը . . . . .	59
Նինինի կոչով . . . . .	64
Քործում են ստալինյան մեթոդները . . . . .	68
Մարտական լիակատար պատրաստակա՞նությամբ . . . . .	71
Վնասկան մարտեր . . . . .	76

## Յուդենիչի ջախջախումը

Շրջապատման պլանը . . . . .	90
Թշնամու վերջին ճեղք . . . . .	94
Քայքայումը սպիտակների բանակում . . . . .	98
Յուդենիչի բանակի անփառունակ վախճանը . . . . .	103

## Յեզրակացություն

Գրատ. Խմբագրեր՝ Հ. Դանոյան  
Տեխ. Խմբագրեր՝ Լ. Ունյան  
Սրբագրեր՝ Ս. Շահադյան

1936

Մրժ.

Գլխավոր լիազոր՝ Ա—4197. Հրատ. № 4733.

Գրատիք 686. Տիրած 5000.

Թուղթ 62x94. Տպագր. 7 մամուլ

Հանձնված և արտադրութան 5/IX 1938 թ.

Ստորագրված և տպագրութան 11/X 1939 թ.

Մրժ. 1940

Գեոհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի փող. 65.

[604.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032548

[604]

